


ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԸՃ-ՈՒՄ ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅՈՒՆ



ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ԵՐԵՎԱՆ 2022



Ծրագրի մասին

Սույն ուսումնասիրությունը իրականացվել է Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Մասնակցային ժողովրդավարությունը գործողության մեջ» ծրագրի շրջանակներում, որի հիմնական նպատակն է ապահովել հանրային կառավարման և ժողովրդավարական գործընթացների ոլորտներում որոշումների կայացման փաստահենք և մասնակցային գործընթացը: Ծրագիրն իրականացնում է «Թրանսփարենսի Ինթերնեշլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՅԿ) հասարակական կազմակերպությունը՝ «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» և «Քաղաքական երկխոսություն» հասարակական կազմակերպությունների (ՅԿ) գործընկերությամբ:

Սույն ղեկույցը հրատարակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Չեկույցի բովանդակության համար պատասխանատու է Ինֆորմացիայի ապատության կենտրոնը և այն չի արտացոլում Եվրոպական միության տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 4

ՆԱԽԱԲԱՆ..... 5

ԱՄՓՈՓԱԳԻՐ..... 7

ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ և ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....11

ԲԱԺԻՆ Ա. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ. ԱՐՏԱԶԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ և ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՈՒՄ.....13

 Ա.2. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՏՆՕՐԻՆՈՂԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՆԹԱՀԱՄԱԿԱՐԳԸ 16

 Ա.3. ՏԱ ՈԼՈՐՏԻ ԱՐՏԱԶԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՆԹԱՀԱՄԱԿԱՐԳԸ 22

ԲԱԺԻՆ Բ. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԶԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ29

 Բ.1. ԶԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏԱ ՈԼՈՐՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 30

 Բ.2. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ 2022Թ. 33

 Բ.3. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՄԿՏԻՎ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՀԱՐՑՄԱՆ ՀԻՄԱՆ ԿՐԱ 34

 Բ.4. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ..... 41

 Բ.5. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՀԱՐԹԱԿԸ 47

 Բ.6. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՊՐՈԱԿՏԻՎ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՓԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՒՆՈՒԹՅԱՄԲ 52

 Բ.7. ՏԱ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ 57

ԲԱԺԻՆ Գ. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.....63

 Գ.1. ՏԱ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ և ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՒՄԸ 63

 Գ.2. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՁԱՎՎՈՐՄԱՆ ԱՐՔՅՈՒՐՆԵՐԸ 70

 Գ.3. ՏԱ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ ՁԱՎՁԱՓԸ և ՁԱՆՆՈՒՇԸ..... 71

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐԸ74

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆՆԵՐ78

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....83

Հապավումների ցանկ

ՏԱ - Տեղեկատվության ազատություն

ՀՀ - Հայաստանի Հանրապետություն

ՏԻՄ - Տեղական ինքնակառավարման մարմիններ

ԻԱԿ - Ինֆորմացիայի ազատության կենտրոն

ԶՀԿ - Զաղաքացիական հասարակության կազմակերպություն

ՄԹ- Միացյալ Թագավորություն

Նախաբան

Տեղեկատվության ազատության (այսուհետև՝ ՏԱ) իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից է, որի պատշաճ օրենսդրական կարգավորման և կիրառման մեխանիզմների բացակայության պայմաններում մարդու համար էապես դժվարանում է մյուս հիմնարար իրավունքների իրականացումը. տեղեկատվության ազատության իրավունքը, տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը մարդու այլ իրավունքների իրականացման նախապայման է: Տեղեկատվության ազատությունը նաև չափազանց կարևոր է հանրության համար կարևոր դերակատարների և պետական մարմինների գործունեության օրինականության և որոշումների կայացման նկատմամբ հանրային հսկողության առումով: Տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը նաև կոռուպցիայի կանխարգելման և բացահայտման, որոշումների կայացման գործընթացում հանրային մասնակցության կարևոր նախապայման է:

2003թ. սեպտեմբերի 23-ին ընդունված և նույն թվականի նոյեմբերի 15-ին ուժի մեջ մտած «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը (այսուհետև՝ ՏԱ մասին օրենք) գործունե մեխանիզմներ է սահմանում տեղեկատվության ազատության պատշաճ կիրառման համար, մյուս կողմից, Հայաստանում քաղաքացիական հասարակության շնորհիվ ձևավորվել է ՏԱ իրավունքի պաշտպանության դրական պրակտիկա: Արդյունքում, ՏԱ մասին օրենքի կարգավորումները մինչ օրս կենսունակ և արդիական են, իսկ ՏԱ մասին օրենքի որևէ փոփոխություն հնարավոր է բացառապես քաղաքացիական հասարակության անմիջական մասնակցությամբ և անվերապահ հավանությամբ:

Այնուամենայնիվ, ՏԱ օրենքի կիրառման պրակտիկայում բազմաթիվ են հիմնախնդիրները: Օրինակ, օրենքի ընդունումից ի վեր ՀՀ-ում չի վարվում տեղեկատվության ազատության ոլորտի ամբողջական, համապարփակ և միասնական պաշտոնական վիճակագրություն: Բացի այդ, որոշ պետական կառույցներ չեն վարում տեղեկություն ստանալու հարցումների առանձնացված վիճակագրություն, կամ վարում են առանձին աշխատակիցներ՝ ըստ տեխնիկական հնարավորությունների: Օրենքով պահանջված վիճակագրություն ներկայացնելու համար անհրաժեշտ գործիքակազմ գերատեսչությունները չեն մշակել: Պետական մարմիններում չկա նաև տեղեկություն ստանալու հարցումների վիճակագրության հանրայնացման մեկ ընդհանուր ձևաչափ: Ոլորտում միասնական վիճակագրության բացակայությունն անհնար է դարձնում առկա տվյալների համադրումը, ընդհանուր խնդիրների վերհանումը, համալիր լուծումներ գտնելը և ոլորտում առկա ռեսուրսների արդյունավետ կիրառումը:

ՏԱ ոլորտում առկա իրավիճակի դիտարկումն ըստ եռթյան իրականացվում է հիմնականում մասնագիտացած ՔՀԿ-ների կողմից, որոնց հավաքագրած տվյալները մի կողմից օբյեկտիվ պատճառներով չեն կարող լինել լիարժեք և ամբողջական, մյուս կողմից չեն կարող ամբողջությամբ լրացնել այս ոլորտում առկա կարիքներն ու պետության՝ օրենքով ամրագրված պարտավորությունները:

Մեկ այլ հիմնախնդիր է այն, որ պետական մարմիններում տեղեկություն ստանալու հարցումների մասին տվյալների գրանցման, դասակարգման և պահպանման մեկ ընդհանուր ձևաչափ գոյություն չունի. գերատեսչություններից յուրաքանչյուրն իրականացնում է այն ըստ իր հայեցողության կամ պատկերացման՝ այս կամ այն պատճառով անտեսելով օրենքով ամրագրված պարտադիր պահանջների մի մասը:

Որպես փաստահեն համալիր փաստաթուղթ՝ հետազոտությունը կարող է հիմք դառնալ ՀՀ կառավարության Հանրային կառավարման բարեփոխումների մինչև 2030 թվականի

ռազմավարության փաթեթով նախատեսված «Տեղեկատվության ազատության իրավունքի մասին վիճակագրության վարման, մշտադիտարկման և հաշվետվությունների համակարգի մշակում և ներդրում» գործողությունը լիարժեք և ժամանակին իրականացնելու համար:

Այն հնարավորություն կտա պետության նախանշած բարեփոխումներին ընդամաք ձևավորել տեղեկատվական և մեթոդաբանական ամբողջական բազա, որը կամփոփի ոլորտին առնչվող միջազգային լավագույն փորձը, դրա տեղայնացման հնարավորություններն ու կիրառության համար անհրաժեշտ միջավայրն ու գործիքակազմը՝ համադրելով միջազգային փորձը, հայաստանյան պրակտիկան և հիմնական դերակատարների փորձառությունը:

Ամփոփագիր

Հետազոտության **նպատակն է** մշակել Տեղեկատվության ազատության (ՏԱ) ոլորտի մշտադիտարկման մեթոդաբանական և մեխանիզմները, ինչպես նաև տեղեկություն տնօրինող պետական մարմինների կողմից ՏԱ վիճակագրության վարման և հաշվետվությունների համակարգի բաղադրիչները:

Այս նպատակի իրագործման համար առանձնացվել են հետևյալ **խնդիրները**.

- իրականացնել տեղեկատվության ազատության առկա վիճակի գնահատում՝ ստուգելով ՏԱ ոլորտում տեղեկություն տնօրինողների համար օրենսդրությամբ սահմանված պարտականությունների կատարման մակարդակը,
- իրականացնել տեղեկատվության ազատության ոլորտում պաշտոնական վիճակագրության վարման ուսումնասիրություն և մշակել ՏԱ վիճակագրության վարման համակարգ և մեթոդաբանական,
- մշակել տեղեկատվության ազատության ոլորտի մշտադիտարկման միասնական մեթոդաբանական, մեխանիզմներ և գնահատման չափանիշներ՝ միաժամանակ ձևավորելով տեղեկություն տնօրինող պետական մարմինների ինքնագնահատման և գնահատման համակարգերը,
- մշակել և ներկայացնել ոլորտի համալիր բարեփոխումներին ուղղված առաջարկներ և խորհրդատվականներ:

Մշակվել և ներկայացվել են տեղեկատվության ազատության մշտադիտարկման երկու առանցքային ենթահամակարգերը՝ տեղեկություն տնօրինողների կողմից տեղեկատվության ազատության ապահովման **ինքնագնահատման**, ինչպես նաև **արտաքին գնահատման ենթահամակարգերը** (մեթոդաբանություն, ցուցումներ, չափանիշներ, ուղեցույցներ):

Այս ենթահամակարգերի կիրառման շնորհիվ մի կողմից տեղեկություն տնօրինողները հնարավորություն կունենան գնահատելու տեղեկատվության ազատության ոլորտում իրենց պարտականությունների կատարման պատշաճությունը և ՏԱ ոլորտում իրենց գործունեությունը համապատասխանեցնել օրենսդրության և միջազգային նորմերի պահանջներին (ինքնագնահատում), մյուս կողմից՝ մշտադիտարկման մշակված համակարգի շնորհիվ հնարավոր կլինի իրականացնել ՏԱ ոլորտի արտաքին գնահատում: Ներկայացվել է, թե ինչ մեթոդաբանությամբ, որ մարմնի կողմից, ինչ պարբերականությամբ և ինչ չափանիշների հիման վրա է իրականացվելու ՏԱ ոլորտի արտաքին գնահատումը:

Մշտադիտարկման համակարգը մշակելիս հաշվի է առնվել **բացություն ըստ դիզայնի** (openness by design) մոտեցումը¹, որի նպատակն է խրախուսել տեղեկություն տնօրինողներին գործել օրենքին համապատասխան սեփական նախաձեռնությամբ:

Հաշվի առնելով ՀՀ կառավարության հանրային կառավարման բարեփոխումների մինչև 2030 թվականի ռազմավարության փաթեթով նախատեսված «Տեղեկատվության ազատության իրավունքի մասին վիճակագրության վարման, մոնիտորինգի և հաշվետվությունների համակարգի մշակում և ներդրում» գործողությունն անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի լիազորությունների տիրույթում դիտարկելը՝ տեղեկատվության ազատության ոլորտի ընդհանուր գնահատումը վերապահվել է անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնին, քանի դեռ Հայաստանում չի ստեղծվել ՏԱ լիազոր մարմին: ՏԱ անկախ լիազոր

¹Տես՝ Բացություն ըստ դիզայնի, Միացյալ Թագավորության ՏԱ հանձնակատարի 2019/2020-2021/2022 ռազմավարական պլան, https://ico.org.uk/media/about-the-ico/documents/2615190/openness_by_design_strategy_201906.pdf, էջ 4:

մարմին ստեղծելուց հետո այդ մարմինը պետք է օժտվի ՏԱ ոլորտի գնահատման համար անհրաժեշտ արդյունավետ մեխանիզմներով և գործիքակազմով:

Արտաքին գնահատման մշակված մեթոդաբանության հիման վրա հետազոտական խումբը նաև կատարել է ՏԱ վիճակի մշտադիտարկում՝ բացահայտելով առկա խնդիրները և նախանշել դրանց լուծման հնարավորությունները:

Հետազոտական խումբը նաև մշակել է ՏԱ վիճակագրության վարման մեթոդաբանությունը և անհրաժեշտ ձևանմուշները, որոնք կօգնեն մեր երկրում ՏԱ միասնական վիճակագրության ձևավորման պրակտիկայի զարգացմանը:

Աշխատանքի վերջին բաժնում հետազոտական խումբը հանգել է եզրահանգումների հետևյալ ենթաօլորտներում.

- 1) **Տեղեկատվության ազատության ռեակտիվ ապահովման պրակտիկան**
- 2) **Մերժման հիմքերի կիրառման պրակտիկան**
- 3) **Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի կիրառման պրակտիկան**
- 4) **Տեղեկատվության ազատության պրոակտիվ ապահովման պրակտիկան**
- 5) **ՏԱ վիճակագրության վարման և հրապարակման պարտականության կատարման պրակտիկան**
- 6) **ՏԱ լիազոր մարմինը**

Եզրահանգումների հիման վրա մշակվել են խորհրդատվականներ ու առաջարկներ ուղղված կառավարությանն ու քաղաքականություն մշակողներին՝ նպատակ ունենալով աջակցել նրանց ՏԱ ոլորտում հավակնոտ բարեփոխումներ իրականացնել և ապահովել ոլորտի զարգացումը: Առաջարկներն ամփոփ վերաբերում են հետևյալին.

1) ՏԱ լիազոր մարմնի ստեղծում. ՏԱ հանձնակատարի ինստիտուտը

- Նախաձեռնել ՏԱ լիազոր մարմնի (տեղեկատվության ազատության և անձնական տվյալների պաշտպանության հանձնակատարի) սահմանադրական ինստիտուտի ստեղծումը, առնվազն ապահովելով, որ այդ մարմինն ունենա անկախության իրական երաշխիքներ և
- իրականացնի ՏԱ պաշտպանություն և այս ոլորտում վեճերի արտադատական լուծում,
- իրականացնի ՏԱ պրակտիկայի վերլուծություն (մշտադիտարկում, գնահատում) և լավագույն փորձի ներդրում,
- ապահովի ՏԱ իրավունքի իրացման վերաբերյալ խորհրդատվություն և իրազեկում ինչպես քաղաքացիների, այնպես էլ տեղեկություն տնօրինող մարմինների համար,
- մշակի միասնական վիճակագրության վարման պրակտիկայի ձևավորումը խթանող մեկնաբանություններ և փափուկ կարգավորումներ, ինչպես նաև տեղեկություն տնօրինողներին փոխանցի վիճակագրություն վարելու հմտություններ:

Տեղեկություն տնօրինողներում ՏԱ վերաբերյալ գիտելիքի պակասը

- Անհրաժեշտ է առանձին ուշադրություն դարձնել տեղեկություն տնօրինողների իրավասու պաշտոնյաների՝ ՏԱ վերաբերյալ գիտելիքի մակարդակի բարձրացմանը, կրթությանը, տեղեկատվության ազատության և անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ ուսուցումների և վերապատրաստումների իրականացմանը. պետությունը պետք է հնարավոր բոլոր միջոցները ձեռնարկի ՏԱ ոլորտում տեղեկություն տնօրինողների իրավասու պաշտոնյաների մասնագիտական գիտելիքների և պրակտիկ հմտությունների կատարելագործման ուղղությամբ:

2) ՏԱ վիճակագրության վարման և հրապարակման պարտականության ապահովումը և հսկողությունը

- Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինն առաջարկում ենք մինչև ՏԱ լիազոր մարմնի ստեղծումը ՏԱ գնահատման իրականացման շրջանակներում ստանձնել տեղեկություն տնօրինողների կողմից ՏԱ վիճակագրության վարման և հրապարակման պարտականության կատարման նկատմամբ վերահսկողությունը:

- Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինն առաջարկում ենք մինչև ՏԱ լիազոր մարմնի ստեղծումը ստանձնել ՏԱ ընդհանուր վիճակագրության վարման և հրապարակման հանձնառություն:

3) ***ՏԱ վիճակագրության վարման և հրապարակման պարտականության կատարումը***

- Տեղեկություն տնօրինողները պետք է օրենքով սահմանված վիճակագրական տվյալները հրապարակեն իրենց պաշտոնական կայքերում՝ ներառելով տվյալների ողջ ծավալը:

- Տեղեկություն տնօրինողները պետք է հստակորեն տարանջատեն տեղեկություն ստանալու գրավոր կամ բանավոր *հարցումները այլ դիմումներից, այդ թվում՝ թեժ գծերով կամ սոցիալական ցանցերով և նմանատիպ աղբյուրներով ստացված հարցումները նույն աղբյուրներով ստացված այլ տիպի հարցադրումներից, մեկնաբանություններից և խորհրդատվության խնդրանքներից:*

- ՏԱ հարցումների վիճակագրություն վարելը վերապահվում է ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձին:

- Տեղեկություն տնօրինողի կայքում՝ տեղեկատվության ազատությանը վերաբերյալ առանձին բաժնում, պետք է նախատեսվի ՏԱ հարցումների վիճակագրության ենթաբաժին և դրանում հարցումների վիճակագրության հրապարակման նկատմամբ վերահսկողությունը վերապահվի ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձին,

- ՏԱ հարցումների վիճակագրությունը տեղեկություն տնօրինողի կայքում համապատասխան բաժնում պետք է հրապարակվի տարին առնվազն մեկ անգամ՝ ոչ ուշ, քան նախորդ տարվա հաշվետվության հրապարակման օրը:

- Վիճակագրությունը պետք է պարունակի նվազագույնը հետևյալ տվյալները՝

- ստացված հարցումների ընդհանուր թիվը,

- բանավոր հարցումների ընդհանուր թիվը,

- գրավոր հարցումների ընդհանուր թիվը,

- բավարարված գրավոր հարցումների թիվը,

- մերժված (հաշվի առնելով հարցմամբ պահանջված տեղեկության մի մասի մերժման հնարավորությունը՝ նաև մասնակի մերժված) գրավոր հարցումների թիվը,

- վերահասցեագրված գրավոր հարցումների թիվը,

- մերժումների հիմքերը:

4) ***Տեղեկատվության ապատության ռեակտիվ ապահովումը. ՏԱ հարցումներին պատասխանելու պրակտիկան***

ՏԱ ռեակտիվ կողմի լիարժեք ապահովման նպատակով առաջարկում ենք ներդնել տեղեկություն տնօրինողների ինքնազնահատման համակարգ սույն հետազոտման մեջ ներկայացված մեթոդաբանության և չափանիշների հիման վրա: Ինքնազնահատման համակարգի կիրառումը թույլ կտա տեղեկություն տնօրինողներին իրականացնել իրենց պրակտիկայի պարբերական վերանայում, խնդիրների վեր հանում և կանխարգելում, ինչպես նաև պրակտիկայի բարելավում:

5) ***Տեղեկատվության ապատության պրոակտիվ ապահովումը***

- Որպես պրոակտիվ հրապարակայնության առաջընթացի և զարգացման առաջնային լուծում անհրաժեշտ ենք համարում անցում կատարել պաշտոնական ռեսուրսների կառավարման կենտրոնացված մոդելի:

- Անհրաժեշտ է ներդնել պաշտոնական կայքերի ստեղծման և մշակման միասնական և արդիական ստանդարտ: Պաշտոնական կայքերի կառուցվածքի և ձևավորման

միասնականությունը հեշտացնում է քաղաքացու կողմից տեղեկատվության փնտրումը, արդյունավետ դարձնում քաղաքացի-կառավարություն առցանց շփումը:

- Անհրաժեշտ է ներդնել պաշտոնական կայքերի գնահատման համակարգ:
- Հրապարակված տվյալները պետք է լինեն մեքենայաընթեռնելի, անվճար, հասանելի ազատորեն օգտագործման և վերաօգտագործման համար՝ առանց վերահսկման որևէ մեխանիզմի կամ սահմանափակման:
- Պաշտոնական կայքերը պետք է մատչելի լինեն հատուկ կարիքներ ունեցողների համար: Անհրաժեշտ է իրականացնել կայքերի տեխնիկական վերազինում, որպեսզի հնարավորինս հաշվի առնվեն տեղեկություն ստացողների հատուկ կարիքները:

6) Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակը

- Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակում անհրաժեշտ է ապահովել տարեկան ընդհանուր ՏԱ վիճակագրություն:
- Անհրաժեշտ է կատարելագործել հարթակը՝ դրանում ներառելով ՏԱ ոլորտի հնարավոր բոլոր գործիքները, օրինակ, հարթակը կարող է ներառել տեղեկություն տնօրինողների կողմից ինքնագնահատման իրականացման էլեկտրոնային համապատասխան գործիքը:
- Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել կամ բացառել հարթակի տարբեր գործիքների կիրառման հիմքում մարդկային գործոնի և հայեցողական որոշումների կայացման հնարավորությունները,
Անհրաժեշտ է հնարավորինս հաշվի առնել տեղեկություն հավանական ստացողների հատուկ կարիքները էլեկտրոնային հարցումների միասնական հարթակում:

Նպատակը, խնդիրները և մեթոդաբանությունը

Հետազոտության **նպատակն է** մշակել ոլորտի մշտադիտարկման մեթոդաբանության և մեխանիզմները, ինչպես նաև տեղեկություն տնօրինող պետական մարմինների կողմից ՏԱ վիճակագրության վարման և հաշվետվությունների համակարգի բաղադրիչները:

Այս նպատակի իրագործման համար առանձնացվել են հետևյալ **խնդիրները**.

- իրականացնել տեղեկատվության ազատության առկա վիճակի գնահատում՝ ստուգելով ՏԱ ոլորտում տեղեկություն տնօրինողների համար օրենսդրությամբ սահմանված պարտականությունների կատարման մակարդակը,
- իրականացնել տեղեկատվության ազատության ոլորտում պաշտոնական վիճակագրության վարման ուսումնասիրություն և մշակել ՏԱ վիճակագրության վարման համակարգ և մեթոդաբանություն,
- մշակել տեղեկատվության ազատության ոլորտի գնահատման միասնական մեթոդաբանություն, մեխանիզմներ և գնահատման չափանիշներ՝ միաժամանակ ձևավորելով տեղեկություն տնօրինող պետական մարմինների ինքնագնահատման և գնահատման համակարգերը,
- մշակել և ներկայացնել ոլորտի համալիր բարեփոխումներին ուղղված առաջարկներ և խորհրդատվականներ (recommandations):

Հետազոտությունը կազմված է երեք բաժիններից՝ ՏԱ մշտադիտարկման համակարգը (բաժին Ա), ՏԱ ոլորտի գնահատում բաղաբացիական հասարակության կողմից (բաժին Բ), Տեղեկատվության ազատության ոլորտում պաշտոնական միասնական վիճակագրություն (բաժին Գ), ինչպես նաև համապատասխան հավելվածներից:

Հետազոտության 1-ին բաժինը ներկայացնում է ՏԱ ոլորտի մշտադիտարկման համակարգը՝ ներկայացնելով ՏԱ մշտադիտարկման համակարգի ընդհանուր տեսլականը և վերաբերելի միջազգային լավագույն փորձը, ՏԱ վիճակի ինքնագնահատման և գնահատման մեթոդաբանություն՝ մեխանիզմները, չափանիշները, ինքնագնահատման և գնահատման իրականացման քայլ առ քայլ ցուցումներն ու ամփոփումը:

Հետազոտության 2-րդ բաժինը վերաբերում է ՏԱ կիրառման պրակտիկային և ներկայացնում բաղաբացիական հասարակության կողմից՝ ՏԱ ոլորտի գնահատման մեթոդաբանության և մեխանիզմները: Այստեղ նկարագրվում են ՏԱ առկա վիճակի գնահատման մեթոդաբանությունը, գնահատման իրականացման փուլերը և կիրառվող գործիքակազմը, ապա ներկայացվում է տեղեկություն տնօրինողների հիմնական պարտականությունների կատարման գնահատումը՝ համապատասխան եզրահանգումներով:

Հետազոտության 3-րդ բաժնում ներկայացվում են ՏԱ վիճակագրության վարման առկա պրակտիկան, ինչպես նաև վիճակագրություն վարելու առաջարկվող միասնական մեթոդաբանությունը և գործիքակազմը:

Հետազոտության առանձին բաժիններ մշակվել են տարբեր մեթոդաբանությունների կիրառմամբ, որին մանրամասն անդրադառնում ենք համապատասխան բաժիններում: ՏԱ ոլորտի մշտադիտարկման համակարգի մշակման համար ուղենիշ է ծառայել միջազգային լավագույն փորձը, մասնավորապես, ոլորտում առաջատար համարվող Եստոնիայի և Միացյալ Թագավորության (այսուհետ նաև՝ ՄԹ) փորձը: Ընդ որում, հաշվի է առնվել, որ Եստոնիայի պրակտիկան առաջանցիկ է հատկապես պաշտոնական կայքերին և տեղեկատվական համակարգերին վերաբերող մասով, ուստի Եստոնիայի փորձը հիմնականում վկայակոչվել է տեղեկատվության ազատության պրոակտիվ ապահովումը և էլեկտրոնային հարցումների միասնական հարթակը քննարկելիս: Ինչ վերաբերում է ՄԹ փորձին, ապա այն առաջանցիկ է ՏԱ վիճակի մշտադիտարկման մեխանիզմների կարգավորման տեսանկյունից: Ուստի ՄԹ փորձը գերազանցապես վկայակոչվել է ՏԱ ոլորտի մշտադիտարկման համակարգը քննարկելիս: Այդուհանդերձ, հետազոտությունում, մասնավորապես ՏԱ ոլորտի մշտադիտարկման

համակարգի վերաբերյալ բաժնում առկա են նաև այլ երկրների, տարբեր կազմակերպությունների և միջազգային իրավական ակտերի վկայակոչումներ՝ որպես հավելյալ հիմնավորումներ:

Փաստաթղթերի ուսումնասիրությունը կատարվել է բովանդակային և ավանդական մոտեցումների համադրմամբ: Փաստաթղթերի բովանդակային ուսումնասիրությունը (content analysis) ենթադրում է տեղեկատվության քանակական ասպեկտների չափումներ, իսկ ավանդական մոտեցման շրջանակներում ուսումնասիրվել են փաստաթղթերի բովանդակային համատեքստերը: Գնահատման շրջանակում որպես փաստաթուղթ են դիտարկվել այն իրավական կարգավորումները, որոնք ունեն օրենքի կարգավիճակ, ինչպես նաև տարբեր կազմակերպությունների կողմից իրականացված հանրայնորեն հասանելի ոլորտային հետազոտությունները:

ՏԱ ոլորտի մշտադիտարկման մեթոդաբանությունը և մեխանիզմներն առաջարկելիս նույնպես հաշվի է առնվել տեղեկատվության ազատության ոլորտի գնահատման միջազգային փորձը՝ մեթոդաբանությունը, չափանիշները, ձևաչափերը: Մասնավորապես հաշվի են առնվել Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին կոնվենցիան և դրա բացատրական զեկույցը, Միավորված ազգերի կրթական, գիտական և մշակութային կազմակերպության (UNESCO)՝ տեղեկատվության ազատության (հանրային տեղեկության հասանելիության) վերաբերյալ հարցման ձեռնարկի,² տեղեկատվության ազատության վերաբերյալ Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ (OECD)) Բաց կառավարման թափանցիկության սկզբունքի գնահատման,³ Միացյալ Թագավորության ՏԱ հանձնակատարի ինքնազնահատման գործիքի,⁴ ՄԹ ՏԱ հանձնակատարի 2019/20-2021/22 ռազմավարական պլանի,⁵ Շոտլանդիայի ՏԱ հանձնակատարի ինքնազնահատման գործիքի,⁶ ամերիկյան The Carter Center-ի մշակած՝ ՏԱ օրենսդրության կիրառման գնահատման գործիքի⁷ մեթոդները, չափանիշները և ձևաչափերը:

ՏԱ ոլորտի գնահատման և ինքնազնահատման մեխանիզմները մշակելիս միջազգային գործիքները, չափանիշները կամ ձևաչափերը չեն կրկնօրինակվել, այլ հաշվի են առնվել այնքանով, որքանով դրանք իրենց ետևում կիրառելի են ՏԱ մասին օրենքով նախանշված կանոններին: Բացի այդ, հաշվի են առնվել սույն հետազոտությամբ արձանագրված՝ ՏԱ ոլորտի համակարգային խնդիրները, և ըստ այդմ, գնահատման և ինքնազնահատման մեխանիզմները մշակելիս ադապտացվել է հենց այդ խնդիրներին առնչվող միջազգային փորձը:

² Տես՝ Միավորված ազգերի կրթական, գիտական և մշակութային հանրային տեղեկության հասանելիության վերաբերյալ հարցման ձեռնարկը՝

https://en.unesco.org/sites/default/files/instruction_manual_survey_public_ati_en.pdf:

³ Տես՝ Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության կայքի Հրապարակայնություն և թափանցիկություն բաժինը՝ <https://www.oecd.org/corruption/opennessandtransparency-pillarsfordemocracystandprogress.htm>:

⁴ Տես՝ Միացյալ Թագավորության ՏԱ հանձնակատարի գրասենյակի պաշտոնական կայքը, Կազմակերպությունների համար բաժին՝ <https://ico.org.uk/for-organisations/foi-self-assessment-toolkit/>:

⁵ Տես՝ Միացյալ Թագավորության ՏԱ հանձնակատարի գրասենյակի պաշտոնական կայքը, Բացություն ըստ դիզայնի, ՏԱ հանձնակատարի 2019/2020-2021/2022 ռազմավարական պլան, <https://ico.org.uk/media/about-the-ico/documents/2615190/openness-by-design-strategy-201906.pdf>:

⁶ Տես՝ Շոտլանդիայի ՏԱ հանձնակատարի պաշտոնական կայքը, ՏԱ ինքնազնահատման իրականացման ուղեցույց, <https://www.itspublicknowledge.info/ScottishPublicAuthorities/Self-AssessmentToolkit/Self-AssessmentToolkitIntroduction.aspx>:

⁷ Տես՝ The Carter Center, գնահատման իրականացման գործիք. մեթոդական ձեռնարկ, <https://www.cartercenter.org/resources/pdfs/peace/americas/iat/iat-methodology-manual.pdf>:

Բաժին Ա. Տեղեկատվության ազատության ոլորտի մշտադիտարկման համակարգը. արտաքին գնահատում և ինքնագնահատում

Հետազոտության այս բաժնում ներկայացված են մշտադիտարկման երկու առանցքային ենթահամակարգերը՝ տեղեկություն տնօրինողների կողմից տեղեկատվության ազատության ապահովման **ինքնագնահատման** և **արտաքին գնահատման ենթահամակարգերը** (մեթոդաբանություն, ցուցումներ, չափանիշներ, ուղեցույցներ): Այս ենթահամակարգերի կիրառման շնորհիվ մի կողմից տեղեկություն տնօրինողները հնարավորություն կունենան գնահատելու տեղեկատվության ազատության ոլորտում իրենց պարտականությունների կատարման պատշաճությունը և ՏԱ ոլորտում իրենց գործունեությունը համապատասխանեցնել օրենսդրության և միջազգային նորմերի պահանջներին (ինքնագնահատում), մյուս կողմից՝ մշտադիտարկման մշակված համակարգի շնորհիվ հնարավոր կլինի իրականացնել ՏԱ ոլորտի արտաքին գնահատում:

Ա.1. ՏԱ ոլորտի մշտադիտարկման համակարգը

Հայաստանի ՏԱ մշտադիտարկման հավակնություններից է մեծացնել տեղեկատվության ազատության օրենսդրության նկատմամբ վերահսկողության ազդեցությունը, իսկ նպատակն է խրախուսել տեղեկություն տնօրինողներին գործել օրենքին համապատասխան՝ այդպիսով նվազեցնելով մարդկանց կողմից ՏԱ ոլորտում տեղեկություն տնօրինողների գործողությունները կամ անգործությունը բողոքարկելու անհրաժեշտությունը:

ՏԱ մշտադիտարկման համակարգի գլխավոր խնդիրներն են.

- ապահովել, որ ՏԱ իրավունքները պահպանվեն հետևողականորեն և ժամանակին և թվային դարաշրջանում գործեն արդյունավետորեն,
- ապահովել հարցում կատարողների գերազանց սպասարկում,
- բարձրացնել ՏԱ վերաբերյալ իրազեկվածությունը և հեշտացնել հանրության համար ՏԱ ոլորտում իր իրավունքների իրացումը,
- խթանել ՏԱ օրենսդրության արդիականացումն ու բարեփոխումը:

Մշտադիտարկման համակարգը մշակելիս հաշվի է առնվել **բացություն ըստ դիզայնի** (openness by design) մոտեցումը⁸, որի նպատակն է խրախուսել տեղեկություն տնօրինողներին գործել օրենքին համապատասխան սեփական նախաձեռնությամբ: Այս մոտեցումն ուղղակիորեն համադրելի է հետազոտության այս գլխում ներկայացված ՏԱ մշտադիտարկման ակնկալվող արդյունքներին, ուստի հաշվի է առնվել ինքնագնահատման և գնահատման բաղադրիչները մշակելիս:

Միջազգային պրակտիկան վկայում է, որ տեղեկատվության ազատության մշտադիտարկումը որպես կանոն վերապահված է տեղեկատվության ազատության լիազոր մարմնին (խոսքը ՏԱ և անձնական տվյալների հանձնակատարի մասին է)⁹: Ի թիվս բազմաթիվ այլ լիազորությունների, ինչպես օրինակ տեղեկատվության ազատության ոլորտում առաջացած վեճերը արտադատական կարգով լուծելը՝ ՏԱ իրավունքի խախտումների անկախ վերանայումը, ՏԱ լիազոր մարմինը նաև ՏԱ իրավունքի կիրառման պրակտիկայի մասին տեղեկություններ է

⁸Տես՝ Բացություն ըստ դիզայնի, Միացյալ Թագավորության ՏԱ հանձնակատարի 2019/2020-2021/2022 ռազմավարական պլան, https://ico.org.uk/media/about-the-ico/documents/2615190/openness_by_-_design_strategy_201906.pdf, էջ 4:

⁹ Տեղեկատվության ազատության հանձնակատարի ինստիտուտը համեմատաբար նոր գաղափար է: Օրինակ, Ավստրալիայում ՏԱ հանձնակատարի ինստիտուտը գործում է 2010թ.-ից, Գերմանիայում հանձնակատարը ստանձնել է ՏԱ ոլորտի պաշտպանությունը 2006թ.-ից, Միացյալ Թագավորությունում, Հնդկաստանում, Սլովենիայում և Մակեդոնիայում ՏԱ հանձնակատարի ինստիտուտը գործում է 2005թ.-ից, Սերբիայում՝ 2004թ.-ից և այլն:

հավաքագրում և հրապարակում երկրում ՏԱ իրավիճակը գնահատող տարեկան զեկույց, ինչպես նաև ներկայացնում է ՏԱ հարցումների և որոշումների վիճակագրական տվյալները:¹⁰ Օրինակ.

- Կանադայի ՏԱ հանձնակատարի գրասենյակի լիազորությունների շարքում են ի թիվս այլի հետազոտությունների կատարումը և մշտադիտարկման իրականացումը:
- Գերմանիայի տեղեկատվության ազատության և անձնական տվյալների պաշտպանության հանձնակատարն ի թիվս այլ լիազորությունների՝ դիտարկում է անձնական տվյալների պաշտպանության և տեղեկատվության ազատության վիճակը դաշնային մարմիններում և ներկայացնում է կիսամյակային զեկույցներ:
- Միացյալ Թագավորությունում տեղեկատվության ազատության հանձնակատարն անկախ վերահսկող մարմին է, որն ի թիվս այլի նաև հրապարակում է տեղեկատվության ազատության իրավունքի մշտադիտարկման վերաբերյալ ուղեցույցներ:¹¹

Մշտադիտարկման և զեկույցների հրապարակման համանման լիազորություններ ունեն եվրոպական գրեթե բոլոր ՏԱ հանձնակատարները:

ՏԱ լիազոր մարմինը դիտարկվում է որպես ՏԱ մշտադիտարկում իրականացնող մարմին նաև Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (այսուհետ նաև՝ Կոնվենցիա)¹² շրջանակներում:¹³ Մասնավորապես Կոնվենցիայի 9-րդ հոդվածը սահմանում է, որ Կոնվենցիայի կողմ պետությունները պետք է հանրությանը տեղեկացնեն պաշտոնական փաստաթղթերի մատչելիության իրավունքի և այդ իրավունքի իրականացման մասին: Նրանք նաև պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկեն՝

- պետական մարմիններին այս իրավունքի իրականացման հետ կապված իրենց պարտականությունների և պարտավորությունների վերաբերյալ կրթելու ուղղությամբ,
- այն հարցերի կամ գործունեության մասին տեղեկություններ տրամադրելու ուղղությամբ, որոնց համար նրանք պատասխանատու են,
- իրենց փաստաթղթերն արդյունավետ կերպով կառավարելու ուղղությամբ, որպեսզի դրանք հեշտությամբ հասանելի լինեն,
- իրենց փաստաթղթերի պահպանման և ոչնչացման համար հստակ և սահմանված կանոններ կիրառելու ուղղությամբ:

Իր հերթին, Կոնվենցիայի բացատրական զեկույցը,¹⁴ մեկնաբանելով Կոնվենցիայի 9-րդ հոդվածը, 69-րդ կետում նշում է, որ նման խնդիրները կարող են վստահվել անկախ մարմին, որը **պատասխանատու է պաշտոնական փաստաթղթերի հասանելիության մշտադիտարկման կամ վերահսկման համար:**

ՏԱ վիճակի մշտադիտարկում իրականացնելը կարևոր է նաև ՏԱ հանձնակատարների այնպիսի լիազորությունների պատշաճ իրականացման համար, ինչպիսիք են օրենքի միատեսակ և պատշաճ կիրառումը, տեղեկատվության ազատության իրավունքի ապահովման քաղաքականության վերաբերյալ խորհրդատվության տրամադրումը քաղաքականություն մշակող մարմիններին և այլն:

Թեև «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը նախատեսում է տեղեկատվության ազատության՝ լիազորված պետական մարմնի հնարավորությունը, սակայն ՏԱ լիազոր մարմին Հայաստանում չի եղել և չկա: Նման պայմաններում Հայաստանում տեղեկատվության ազատության իրավունքի պաշտպանության այլընտրանքը մնում են դատարանները, որոնք,

¹⁰Տեղեկատվության ազատության հանձնակատար, ԻԱԿ, 2012, <http://www.foi.am/hy/articles/item/1143/>:

¹¹Տես՝ Միացյալ Թագավորության ՏԱ հանձնակատարի պաշտոնական կայքը, Կազմակերպությունների համար բաժին՝ <https://ico.org.uk/for-organisations/foi-self-assessment-toolkit/>

¹²Տես՝ <http://www.foi.am/hy/news/item/501/>, հոդված 9:

¹³ՀՀ-ն Կոնվենցիան ստորագրել է 2020թ. -ին և պատրաստվում է վավերացնել 2022թ.-ին:

¹⁴Council of Europe Convention on Access to Official Documents, Explanatory Report, http://www.foi.am/u_files/file/legislation/EuropeConventioneng.pdf, կետ 69:

սակայն, չունեն լիազոր մարմինն բնորոշ այնպիսի գործիքներ, որ առանց երկարատև դատական գործերի և դատական պրակտիկայի ձևավորման, կարողանան գործնականում մշտադիտարկել, վերլուծել և կարգավորել տեղեկատվության ազատության ոլորտում ծագած խնդիրները: Թեև տարբեր դեպքերում տեղեկատվության ազատության խնդիրներին իրենց իրավասության շրջանակներում անդրադարձել են այլ մարմիններ (օրինակ, Մարդու իրավունքների պաշտպանը, անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինը), սակայն 2003 թվականին ՏԱ մասին օրենքի ընդունումից ի վեր տեղեկատվության ազատության ոլորտի մշտադիտարկման բեռն իր վրա է վերցրել քաղաքացիական հասարակությունը (օրինակ, Ինֆորմացիայի ազատությանը կենտրոն ՅԿ-ն ոլորտում մասնագիտացած կազմակերպություն է և իրականացնում է մշտադիտարկման տարբեր նախաձեռնություններ, շուրջ 70¹⁵ ռազմավարական դատական և վարչական գործ):

Այսպիսով, ՏԱ ոլորտի մշտադիտարկման առաջարկվող համակարգը բաղկացած է երկու հիմնական ենթահամակարգերից.

- ՏԱ գնահատում (արտաքին գնահատում) - այս բաղադրիչը բացահայտում է ՏԱ ոլորտի ընդհանուր գնահատման տեսլականը՝ ինչպես, որ մարմնի կողմից, ինչ պարբերականությամբ և ինչ չափանիշների հիման վրա է իրականացվելու ՏԱ ընդհանուր գնահատումը:
- ՏԱ ինքնագնահատում (ներքին գնահատում) - այս բաղադրիչը ներառում է տեղեկություն տնօրինողի կողմից ինքնագնահատման մեթոդաբան, այն չափանիշները, որոնք պետք է հաշվի առնվեն տեղեկություն տնօրինողի կողմից, ինչպես նաև խորհրդատվական ցուցումներ ՏԱ այն հիմնական գործառույթների վերաբերյալ, որոնք տեղեկություն տնօրինողը պարտավոր է իրականացնել ՏԱ ինքնագնահատումն իրականացնելուց առաջ:

Հայաստանի ՏԱ մշտադիտարկման համակարգը մշակվել է այնպես, որ մի կողմից ԶԻԿ-ները և անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինը¹⁶ հնարավորություն ունենան, իրենց գործունեության առանձնահատկությունները հաշվի առնելով, իրականացնելու մշտադիտարկում ՏԱ լիազոր մարմնի բացակայության պայմաններում, սակայն այն կիրառելի լինի նաև հետագայում, երբ Հայաստանում կստեղծվի ՏԱ լիազոր մարմին:

Ակնկալվում է, այս հետազոտությամբ առաջարկված մշտադիտարկման մեխանիզմների առկայության և պատշաճ կիրառմամբ էականորեն կբարելավվի ՏԱ վիճակն ընդհանրապես և տեղեկություն տնօրինողների կողմից օրենսդրությանը համապատասխան տեղեկատվության ազատության ապահովումը մասնավորապես, ըստ այդմ կնվազեն նաև տեղեկություն ստանալու իրավունքի խախտումները:

¹⁵ Տես՝ ԻԱԿ-ի պաշտոնական կայքում Ռազմավարական դատավարություն բաժինը՝ <http://www.foi.am/hy/all-cases/>:

¹⁶ Հայաստանում անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմին է ճանաչվել Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը՝ <https://www.facebook.com/PersonalDataArmenia>:

Ա.2. Տեղեկություն տնօրինողի ինքնագնահատման ենթահամակարգը

Տեղեկատվության ազատության վիճակի բարելավման գործում հսկայական է տեղեկություն տնօրինողների կողմից ինքնագնահատման կարիքը: Անհրաժեշտ է, որ տեղեկություն տնօրինող մարմինները գնահատեն իրենց կողմից ՏԱ օրենսդրության պահանջների կատարման պատշաճությունը, ձեռնամուխ լինեն արձանագրված խնդիրների վերացմանը՝ ձգտելով տեղեկատվության ազատության ապահովման պրակտիկան համապատասխանեցնել օրենսդրությանը՝ ներառյալ միջազգային լավագույն փորձին: Տեղեկություն տնօրինող մարմիններում ՏԱ վերաբերյալ գիտելիքի պակասի և համակարգային խնդիրների առկայության պայմաններում ակնկալվում է, որ ինքնագնահատման և խնդիրների լուծման գործընթացը կարիք կլինի իրականացնել մի քանի փուլով տեղեկատվության ազատության ապահովման պրակտիկան օրենսդրությանը և միջազգային լավագույն փորձին համապատասխանեցնելու համար: Բնականաբար, ինքնագնահատումը պետք է զուգակցվի ՏԱ վիճակի ընդհանուր գնահատմամբ:

Ինքնագնահատման առարկան

Նախ անհրաժեշտ է հստակեցնել, թե ՏԱ ոլորտներն են կամ ՏԱ մասին օրենքով սահմանված որ պարտականությունների կատարման որակն է, որ պետք է դառնան տեղեկություն տնօրինողի ինքնագնահատման առարկա:

Այս հետազոտության շրջանակներում իրականացված՝ ՏԱ առկա վիճակի գնահատումից¹⁷ բխում է, ոլորտում հիմնական խնդիրները և բացթողումները կապված են տեղեկություն տնօրինողների հետևյալ պարտականությունների հետ.

- Տեղեկատվության ազատության ռեակտիվ ապահովումը. ՏԱ հարցումներին պատասխանելը,
- մերժման հիմքերը և կարգի ապահովումը,
- տեղեկատվության ազատության պրոակտիվ ապահովումը,
- ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձի ինստիտուտը,
- ՏԱ վիճակագրության վարման և հրապարակման պարտականության կատարումը,
- տեղեկություն ստանալու հարցումների պաշտոնական վիճակագրության ձևավորման աղբյուրները,
- էլեկտրոնային հարցումների միասնական հարթակը:

Հետևաբար, սրանք են այն հիմնական ոլորտները և տեղեկություն տնօրինողների հիմնական պարտականությունների շրջանակը, որոնք ենթակա են ինքնագնահատման:

Ինքնագնահատումը իրականացվում է երկու փուլով.

- նախապատրաստում,
- բուն ինքնագնահատման փուլ:

Ինքնագնահատման նախապատրաստական փուլը

ՏԱ վիճակի պատշաճ ինքնագնահատում իրականացնելու համար անհրաժեշտ են որոշակի նախադրյալներ. գնահատման ենթակա նյութ (օրինակ, պրակտիկայում կոնկրետ դեպքերում ՏԱ վերաբերյալ կայացրած որոշումներ՝ հարցումների պատասխաններ, մերժումներ և այլն), համապատասխան հմտություններ (ինքնագնահատման մեթոդաբանության, ինքնագնահատման տերմինաբանության նվազագույն իմացություն) և այլն:

¹⁷ Տես՝ հետազոտության Բ և Գ բաժինները, ամփոփ եզրահանգումները և Հավելված 1-ը:

Ինքնազնահատման նախապատրաստումն այն գործողություններն են, որոնք պետք է իրականացնի տեղեկություն տնօրինողը ինքնազնահատմանը ձեռնամուխ լինելուց առաջ:¹⁸ Ինքնազնահատման նախապատրաստումն իրականացվում է ինքնազնահատման ենթակա տարվա ընթացքում:¹⁹

Ստորև ներկայացվում են ինքնազնահատման նախապատրաստման համար անհրաժեշտ քայլերը.

- **Քայլ 1**

Ինքնազնահատումը պատշաճ իրականացնելու համար նախ անհրաժեշտ է որոշել և սահմանել ինքնազնահատումն իրականացնող պաշտոնատար անձին կամ ստորաբաժանմանը: Հաշվի առնելով, որ ինքնազնահատումը ենթադրում է ՏԱ ոլորտում որոշակի լիազորությունների և գիտելիքի առկայություն՝ նախընտրելի է, որ ինքնազնահատումն իրականացնի տեղեկություն տնօրինողի՝ ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձը:²⁰

- **Քայլ 2**

Ինքնազնահատման համար անհրաժեշտ տեղեկությունների հավաքագրումը. Ինքնազնահատման համար անհրաժեշտ տեղեկությունները գերազանցապես տեղեկություն տնօրինողի տարբեր ստորաբաժանումների մոտ ձևավորվող և տեղեկություն տնօրինողի գործունեությամբ պայմանավորված տվյալներն են, ինչպես նաև տեղեկություն տնօրինողի պաշտոնական կայքը: Ուստի, արտաքին աղբյուրներից ինքնազնահատման համար անհրաժեշտ տեղեկություններ ստանալու անհրաժեշտությունը քիչ հավանական է:

Այդուհանդերձ, նման անհրաժեշտության դեպքում ինքնազնահատումն իրականացնողը կարող է օգտվել արտաքին այնպիսի աղբյուրներից, ինչպիսին էլեկտրոնային հարցումների միասնական հարթակն է²¹ կամ նմանատիպ այլ պաշտոնական հարթակները, ինչպիսին Ինֆորմացիայի ազատության կենտրոնի givemeinfo.am²² հարթակն է կամ քաղաքացիական հասարակության այլ նմանատիպ վստահելի հարթակները: Բացի այդ, տեղեկություն տնօրինողն անհրաժեշտության դեպքում կարող է դիմել այլ մարմինների՝ փոխօգնության խնդրանքով՝ հայցելով ինքնազնահատման համար անհրաժեշտ տեղեկություններ կամ խորհրդատվություն:

- **Քայլ 3**

Ինքնազնահատման նախապատրաստման վերջին կարևոր քայլը համոզվելն է, որ ինքնազնահատումն իրականացնողն ունի ինքնազնահատման իրականացման համար անհրաժեշտ գիտելիք և հմտություններ: Ինչպես նշեցինք, նախընտրելի է, որ ինքնազնահատումն իրականացնի տեղեկություն տնօրինողի՝ ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձը. դա լրացուցիչ երաշխիք կլինի, որ ինքնազնահատումն իրականացնողն ունենա ՏԱ ոլորտի վերաբերյալ անհրաժեշտ գիտելիք:

Այդուհանդերձ, միայն ոլորտային գիտելիքը բավարար չէ. անհրաժեշտ է, որ ինքնազնահատումն իրականացնելուց առաջ ինքնազնահատողը ծանոթանա ինքնազնահատման գործիքներին՝ համապատասխան ուղեցույցերին, խորհրդատվական ցուցումներին, հարցաշարերին և այլն:²³

¹⁸Տես՝ Շոտլանդիայի ՏԱ հանձնակատարի ՏԱ ինքնազնահատման իրականացման ուղեցույց, էջեր 1-2, <https://www.itspublicknowledge.info/ScottishPublicAuthorities/Self-AssessmentToolkit/Self-AssessmentToolkitIntroduction.aspx>:

¹⁹Օրինակ, 2022 թ.ինքնազնահատումը պետք է իրականացվի 2023 թ.-ին, սակայն ինքնազնահատման նախապատրաստումը պետք է իրականացվի հենց 2022 թվականի ընթացքում:

²⁰Տես՝ հետազոտության [Բ.7 Ենթաբաժինը](#):

²¹Տես՝ հետազոտության [Բ.5 Ենթաբաժինը](#):

²²Տես՝ Givemeinfo հարթակում հրապարակված ՏԱ հարցումների վիճակագրությունը, ԻԿԿ, <http://www.givemeinfo.am/hy/>:

²³Տես՝ Հավելված 1 և Հավելված 2:

Տեղեկատվության ազատության ապահովման ուղեցույց՝ որպես ինքնազնահատման նախապատրաստման գործիք

Ինքնազնահատման նախապատրաստումն ավելի համակարգված և միասնական ձևաչափով իրականացնելու համար այս հետազոտության շրջանակներում մշակվել է **Տեղեկություն տնօրինողի կողմից տեղեկատվության ազատության ապահովման ուղեցույց**:²⁴

Ուղեցույցում ներկայացված են ՏԱ ոլորտում առկա խնդիրներից բխող կիրառական առաջարկներ և խորհրդատվականներ, ուստի այն հնարավորություն կտա համապատասխանեցնելու տեղեկատվության ազատության վիճակը ՏԱ օրենսդրության պահանջներին և ըստ այդմ, բավարար հիմքեր կստեղծի ՏԱ ինքնազնահատման և զնահատման պատշաճ իրականացման համար: Ուղեցույցում թեև հաշվի են առնված միջազգային փորձից բխող խորհուրդները, սակայն այն հիմնված է ՏԱ վերաբերյալ ներպետական օրենսդրության վրա և ամբողջությամբ հաշվի է առնում տեղեկություն տնօրինողների գործունեությունը կարգավորող ներպետական կարգավորումները:

Ուղեցույցը ներկայացնում է այն չափանիշները, որոնց իրականացմամբ յուրաքանչյուր տեղեկություն տնօրինող պետք է ապահովի ինքնազնահատման նախապատրաստությունը: Ուստի, Ուղեցույցը բաղկացած է ինքնազնահատման ենթակա հիմնական ոլորտներին և տեղեկություն տնօրինողների հիմնական պարտականություններին վերաբերող [քաժիններից](#):²⁵

Ինքնազնահատման փուլը

Ինքնազնահատման իրականացման համար ինքնազնահատման ենթակա [հիմնական ոլորտներին և տեղեկություն տնօրինողների հիմնական պարտականություններին համապատասխան](#) այս հետազոտության շրջանակներում մշակվել է **Տեղեկություն տնօրինողի կողմից տեղեկատվության ազատության ինքնազնահատման հարցաշար**:²⁶

Ինքնազնահատման հարցաշարը ներառում է ՏԱ ռեակտիվ յուրաքանչյուր ապահովման, մերժման հիմքերի, ՏԱ պրոակտիվ ապահովման, ՏԱ պատասխանատուի, ՏԱ վիճակագրության վարման, հրապարակման, վիճակագրության ձևավորման աղբյուրների և էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի վերաբերյալ 80 հարց-չափանիշ և յուրաքանչյուր հարցի հնարավոր պատասխանների տարբերակներ: Հարց-չափորոշիչները վերաբերում են, ՏԱ ռեակտիվ ապահովմանը (հարցումներին ընթացք տալու պրակտիկային), մերժումներին և մերժման հիմքերին, պրոակտիվ հրապարակայնության ապահովման մեխանիզմներին, ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձի ինստիտուտին, ՏԱ վիճակագրության վարման և հրապարակման պարտականության կատարմանը և վիճակագրության վարման աղբյուրներին, ինչպես նաև էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի օգտագործմանը:

Ինքնազնահատումն իրականացվում է տեղեկություն տնօրինողի համապատասխան պաշտոնատար անձը կամ ստորաբաժանումը՝ Տեղեկություն տնօրինողի կողմից տեղեկատվության ազատության վիճակի ինքնազնահատման հարցաշարով ներկայացված հարցերին պատասխանելու միջոցով:²⁷

²⁴Տես՝ Հավելված 1:

²⁵ Տես հետազոտության Ա.2 ենթաբաժնում ինքնազնահատման առարկայի 2-րդ պարբերությունը:

²⁶ Տես՝ Հավելված 2:

²⁷ Տեղեկություն տնօրինողի կողմից լրացվող հարցաշարը չի պարունակում հարցերի պատասխանների համար տրվող միավորների մասին տեղեկությունը և լրացվում է առանց հարցերի արդյունքում ստացված միավորների հաշվարկման:

Նախատեսվում է, որ եթե ինքնազնահատման արդյունքում ձևավորված պատասխանները համապատասխանում են օրենսդրության պահանջների 80 հարց-չափորոշիչների ավելի քան 91%-ին (ավելի քան 72 հարց-չափանիշի տրվել է դրական պատասխան), ապա այդ տեղեկություն տնօրինողում ՏԱ վիճակը լավ է, և տեղեկություն տնօրինողը գտնվում է ՏԱ վիճակի պայմանական կանաչ գոտում:

Եթե ինքնազնահատող տեղեկություն տնօրինողի տված պատասխանները համապատասխանում են օրենսդրության պահանջների 80 հարց-չափորոշիչների 71-90%-ին (57-71 հարց-չափանիշի տրվել է դրական պատասխան), ապա այդ տեղեկություն տնօրինողում ՏԱ վիճակը բավարար է, և տեղեկություն տնօրինողը գտնվում է ՏԱ վիճակի պայմանական դեղին գոտում: Եթե ինքնազնահատող տեղեկություն տնօրինողի տված պատասխանները համապատասխանում են օրենսդրության պահանջներին 80 հարց-չափորոշիչների ոչ ավել, քան 70%-ին (ոչ ավել, քան 56 հարց-չափանիշի տրվել է դրական պատասխան), ապա այդ տեղեկություն տնօրինողում ՏԱ վիճակը վատ է, և տեղեկություն տնօրինողը գտնվում է ՏԱ վիճակի պայմանական կարմիր գոտում:

Ինքնազնահատման արդյունքում ստացված ՏԱ վիճակի ցուցիչ

Տեղեկություն տնօրինող մարմնում ՏԱ վիճակը

91-100%	71-90%	0-70%
լավ	բավարար	վատ

Հաշվի առնելով մի կողմից ՏԱ մասին օրենքով տեղեկություն տնօրինողների համար սահմանված ընդհանուր պարտականությունների ժամկետները (տարին մեկ անգամ տեղեկությունը պրոակտիվորեն հրապարակելու, տարին մեկ անգամ վիճակագրական և ամփոփ տվյալներ հրապարակելու)²⁸ ինքնազնահատումը պետք է իրականացվի տարին մեկ անգամ յուրաքանչյուր հաջորդ տարվա առաջին եռամսյակում՝ նախորդ տարվա տվյալների հիման վրա:

Ակնկալվում է, որ առաջին ինքնազնահատումը պետք է իրականացվի 2023 թվականին, մինչև մարտի 31-ը՝ 2022 թվականի տվյալների հիման վրա:

Նկատի պետք է ունենալ, որ ինքնազնահատման ընթացքում հարցաշարում առկա որևէ չափանիշի բացասական գնահատական տալու դեպքում տեղեկություն տնօրինող մարմինը պետք է վերանայի իր գործունեությունը տվյալ ենթաօլորտում և հաջորդ տարվա իր գործողությունների ծրագրում պետք է նախատեսի առկա բացերը լրացնելուն միտված կոնկրետ միջոցառումներ: Գործընթացը ցանկալի է իրականացնել մասնագիտական ՔՀԿ-ների և լիազոր մարմնի հետ²⁸ անմիջական խորհրդատվության միջոցով և համագործակցությամբ:

Ընդ որում, տեղեկություն տնօրինողը հենց ինքնազնահատման ընթացքում կարող է ներգրավել ՏԱ ոլորտում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպություններին՝ տեղեկություն տնօրինողի առաջարկությամբ և ՀԿ-ների համաձայնությամբ:

Ինքնազնահատման մասնակցող հասարակական կազմակերպությունների առաջարկությունները և դիտողությունները պետք է պարտադիր քննարկվեն և ընդունվեն, ընդունվեն ի գիտություն կամ պատճառաբանված մերժվեն՝ իրավական ակտերի վերաբերյալ ներկայացված դիտողությունների և առաջարկությունների ամփոփաթերթերի ձևաչափով:

Տեղեկություն տնօրինողն ինքնազնահատման արդյունքները (հարցաշարը) ինքնազնահատմանը մասնակցած ՀԿ-ների առաջարկությունների և դիտողությունների ամփոփաթերթի հետ պետք է ներկայացվեն լիազոր մարմնին:

Տեղեկություն տնօրինողն ինքնազնահատման արդյունքները (հարցաշարը) ինքնազնահատմանը մասնակցած ՀԿ-ների առաջարկությունների և դիտողությունների ամփոփաթերթի հետ պետք է հրապարակվեն տեղեկություն տնօրինողի պաշտոնական կայքում՝ հարցումների վիճակագրության հրապարակման համար նախատեսված բաժնում:

²⁸Մինչև ՏԱ լիազոր մարմնի ստեղծումը՝ խոսքն անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի մասին է: 19

Ինքնազնահատման նախապատրաստական փուլի քայլերը՝ ամփոփ

Ինքնազնահատման 1-ին՝ նախապատրաստական փուլում անհրաժեշտ է, որ տեղեկություն տնօրինողը.

- նախատեսի, թե ով (ո՞ր ստորաբաժանում) է իրականացնելու ինքնազնահատումը,
- ապահովի, որ ինքնազնահատում իրականացնողը ծանոթանա Տեղեկություն տնօրինողի կողմից տեղեկատվության ապատրության ապահովման ուղեցույցին,
- ապահովի, որ ինքնազնահատում իրականացնողը ծանոթանա Տեղեկություն տնօրինողի կողմից տեղեկատվության ապատրության վիճակի ինքնազնահատման հարցաշարին,
- ինքնազնահատման ենթակա տարվա ընթացքում ստուգի՝ արդյոք առկա են ՏԱ ապահովման այն պայմանները, որոնք ներկայացված են ուղեցույցում,
- նույն տարվա ընթացքում լրացնի ՏԱ ապահովման այն պայմանները, որոնք բացակայում են և ապահովի իր գործունեության համապատասխանությունն ուղեցույցով սահմանված չափանիշներին:

Որպես ինքնազնահատման նախապատրաստական լրացուցիչ միջոցառում՝ անհրաժեշտ է.

- Տեղեկություն տնօրինողներին առաջարկել (անձնական տվյալների պաշտպանության լիպոր մարմնի միջոցով) ընդունել Տեղեկություն տնօրինողի կողմից տեղեկատվության ապատրության ապահովման ուղեցույցը (Հավելված 1), դրա հիման վրա մշակել համադրելի սեփական ընթացակարգեր, ինչպես նաև ծանոթանալ Տեղեկություն տնօրինողի կողմից տեղեկատվության ապատրության վիճակի ինքնազնահատման հարցաշարին (Հավելված 2):
- Տեղեկություն տնօրինողների համար կազմակերպել տեղեկատվության ապատրության և ՏԱ ինքնազնահատման իրականացման վերաբերյալ ուսուցում/վերապատրաստում:

Որպես ինքնազնահատման լրացուցիչ միջոցառում՝ նախընտրելի է՝ ինքնազնահատման ընթացքում մարդկային սուբյեկտիվ գործոնը նվազեցնելու, ինքնազնահատման հարցաշարի լրացման պատշաճությունն ապահովելու նպատակով ստեղծվի և ինքնազնահատումն իրականացվի էլեկտրոնային համապատասխան գործիքի միջոցով:

Ինքնազնահատման իրականացման փուլի քայլերը՝ ամփոփ

Ինքնազնահատման 2-րդ՝ բուն ինքնազնահատման փուլում անհրաժեշտ է, որ տեղեկություն տնօրինողը մինչև ինքնազնահատման ենթակա տարվան հաջորդող տարվա մարտի 31-ը.

- լրացնի տեղեկություն տնօրինողի կողմից տեղեկատվության ապատրության վիճակի ինքնազնահատման հարցաշարը,
- լրացված հարցաշարը ներկայացնի հասարակական կազմակերպություններին,
- քննարկի հասարակական կազմակերպությունների առաջարկությունները և դիտողությունները և դրանց հիման վրա վերանայի լրացված հարցաշարը,

- հրապարակի լրացված վերջնական հարցաշարը և հասարակական կազմակերպությունների առաջարկությունների և դիտողությունների ամփոփաթեթը,
- հաջորդ տարվա գործողությունների ծրագրում նախատեսի կոնկրետ միջոցառումներ ուղղված առկա բացերը լրացնելուն:

Ա.3. ՏԱ ոլորտի արտաքին գնահատման ենթահամակարգը

Միայն ՏԱ ինքնազնահատումը (տեղեկություն տնօրինողի կողմից իրականացվող ներքին գնահատումը) չի կարող ցույց տալ տեղեկություն տնօրինողների կողմից տեղեկատվության ազատության ապահովման իրական պրակտիկան և ՏԱ ոլորտում առկա պատկերը, քանի որ նախ մի կողմից տեղեկություն տնօրինողի ինքնազնահատականը կարող է ողջամտորեն սուբյեկտիվ լինել, մյուս կողմից, միայն տարբեր տեղեկություն տնօրինողների կողմից տեղեկատվության ազատության պարտականությունների իրականացման համեմատությամբ է հնարավոր վերհանել երկրում ոլորտում տիրող իրական վիճակը, բացահայտել ընդհանուր խնդիրները և առաջարկել համակարգային լուծումներ:

ՏԱ արտաքին գնահատման հիմնական **նպատակն** է ձևավորել տեղեկատվության ազատության առկա վիճակի վերաբերյալ արժանահավատ տվյալներ, վերհանել ՏԱ պրակտիկայի և օրենսդրության կիրառման ոլորտում առկա խնդիրները, ահազանգել դրանց մասին՝ հնարավորություն տալով իրավասու մարմիններին և քաղաքացիական հասարակությանը հետևողական լինելու այդ խնդիրների ժամանակին և արագ լուծմանը:

Ըստ վերոնշյալ նպատակի՝ ՏԱ գնահատման հիմնական խնդիրներն են.

- ստուգել տեղեկություն տնօրինողների կողմից իրականացված ՏԱ ինքնազնահատման պատշաճությունը և ըստ անհրաժեշտության վերանայել դրա արդյունքները,
- ստուգել տեղեկատվության ազատության ապահովման համար կիրառվող գործիքների նպատակահարմարությունը, ամբողջականությունը, արդյունավետությունը ու կենսունակությունը²⁹
- ձևավորել ՏԱ ընդհանուր վիճակի իրական պատկերը և վերհանել հիմնախնդիրները,
- նախանշել ՏԱ ոլորտում առկա խնդիրների լուծման ուղիները և մեխանիզմներ առաջարկել:

Գնահատման առարկան

ՏԱ արտաքին գնահատումն իրականացվում է հետևյալ հիմնական և լրացուցիչ ուղղություններով.²⁹

Արտաքին գնահատման հիմնական ուղղություններն են.

- տեղեկատվության ազատության ռեակտիվ ապահովումը. տեղեկություն ստանալու հարցումներին պատասխանելը,
- մերժումների (մերժման հիմքերի) պատշաճությունը և մերժման կարգի ապահովումը,
- տեղեկատվության ազատության պրոակտիվ ապահովումը,
- ՏԱ վիճակագրության վարման և հրապարակման պարտականության կատարումը, վիճակագրության աղբյուրները:

Լրացուցիչ ուղղություններն են.³⁰

- ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձի ինստիտուտը,
- էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի կիրառումը:

²⁹Հիմնական ուղղությունները նախանշում են ՏԱ ոլորտի հիմնական խնդիրներին վերաբերող հարցերը և պետք է ներառվեն արտաքին գնահատման մեջ ՏԱ վիճակի արժանահավատ պատկեր ստանալու համար՝ անկախ նրանից, թե ով է այն իրականացնում (ՏԱ լիազոր մարմինը, թե՛ դրա բացակայության պայմաններում անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինը):

³⁰Լրացուցիչ ուղղությունները նախանշում են ՏԱ ոլորտի այն խնդիրները, որոնք պետք է ներառվեն ՏԱ լիազոր մարմնի կողմից իրականացվող ՏԱ արտաքին գնահատման մեջ, սակայն թեև նախընտրելի է, բայց պարտադիր չէ, որ ՏԱ լիազոր մարմնի բացակայության պայմաններում ներառվեն անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի կողմից իրականացվող ՏԱ արտաքին գնահատման մեջ:

ՏԱ գնահատում իրականացնող մարմինը

ՏԱ մշտադիտարկման հարցում էական դեր է հատկացվում արտաքին գնահատողին: Որպես կանոն, ՏԱ արտաքին գնահատումը վերապահվում է տեղեկատվության ազատության ապահովման նկատմամբ հսկողություն իրականացնող մարմին: Այսպես, Միավորված ազգերի կրթական, գիտական և մշակութային կազմակերպության՝ հանրային տեղեկության հասանելիության հետազոտության ձեռնարկում³¹ նշվում է, որ այն երկրներում, որտեղ ՏԱ մասին օրենքը սահմանել է ՏԱ նկատմամբ հսկողություն իրականացնող լիազոր մարմին, ինչպիսիք են ՏԱ հանձնաժողովը կամ հանձնակատարը, Տվյալների պաշտպանության հանձնաժողովը կամ հանձնակատարը, օմբուդսմենը, ապա այդ մարմինը պետք է իրականացնի գնահատումը: Իսկ այն երկրներում, որտեղ ՏԱ մասին օրենքը չի սահմանում ՏԱ նկատմամբ հսկողություն իրականացնող լիազոր մարմին, գնահատումն իրականացնելու համար պետք է նշանակվի այլ համապատասխան մարմին՝ ստորաբաժանում, նախարարություն կամ գործակալություն:

Հայաստանում չկա տեղեկատվության ազատության լիազոր մարմին, սակայն ՏԱ լիազոր մարմնի գործառույթները համադրելի և մոտ են անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի գործառույթներին և իրավասություններին: Այս առումով հարկ է նշել, որ Եվրամիության կազմում գտնվող այն պետությունները, որոնք Անձնական տվյալների պաշտպանության մասին 1995թ. հոկտեմբերի 24-ի 95/46/ԵՅ Դիրեկտիվի³² ներքո ձևավորել են անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմիններ, հիմնականում ներառում են անձնական տվյալների և տեղեկատվության ազատության պաշտպանությունը մեկ միասնական մարմնում՝ ՏԱ և անձնական տվյալների հանձնակատարի իրավազորության ներքո:

Այս համատեքստում հաշվի առնելով նաև ՀՀ կառավարության հանրային կառավարման բարեփոխումների մինչև 2030 թվականի ռազմավարության փաթեթով նախատեսված «Տեղեկատվության ազատության իրավունքի մասին վիճակագրության վարման, մշտադիտարկման և հաշվետվությունների համակարգի մշակում և ներդրում» գործողությունն անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի լիազորությունների տիրույթում դիտարկելը՝ տեղեկատվության ազատության ոլորտի ընդհանուր գնահատումը պետք է իրականացնի անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինը (այսուհետ նաև՝ լիազոր մարմին), քանի դեռ Հայաստանում չի ստեղծվել ՏԱ լիազոր մարմին:

Սակայն պետք է հաշվի առնել, որ անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի ներկայիս կարգավիճակում չի կարող խոսք գնալ այդ մարմնի կողմից ՏԱ այնպիսի գնահատման մասին, ինչպիսին սովորաբար իրականացնում են ՏԱ լիազոր մարմինները (ՏԱ հանձնակատարները), նախ, այն պատճառով, որ տեղեկություն տնօրինողների կողմից տեղեկատվության ազատության ապահովման նկատմամբ հսկողություն և մշտադիտարկում իրականացնելու օրենքով սահմանված որևէ լիազորություն կամ գործիք անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինը չունի: Բացի այդ, անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինն այս պահին ունի արդարադատության նախարարության գործակալության կարգավիճակ, հետևաբար ապահովված չէ լիարժեք անկախությունը:

Գնահատվողները

Տեղեկատվության ազատության ոլորտի արտաքին գնահատումն իրականացվում է տեղեկություն տնօրինողների հնարավորինս լայն շրջանակի ներգրավմամբ՝ ներառյալ

³¹Հանրային տեղեկության հասանելիության հետազոտության ձեռնարկ, UNESCO, 2021
https://en.unesco.org/sites/default/files/instruction_manual_survey_public_ati_en.pdf:

³²Դիրեկտիվը փոխարինվել է 2018 թվականին ուժի մեջ մտած՝ Անձնական տվյալների ընդհանուր կանոնակարգով՝ General Data Protection Regulation (GDPR):

տեղական ինքնակառավարման բոլոր մարմինները, պետական հիմնարկները և տեղեկություն տնօրինող այլ մարմինները: Այդուհանդերձ, հաշվի առնելով, որ ՏԱ լիազոր մարմնի բացակայության պայմաններում ՏԱ վիճակի ընդհանուր գնահատումն իրականացնելու է անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինը՝ ՏԱ վիճակի ընդհանուր գնահատման նպատակներին հասնելու արդյունավետությունն ապահովելու համար սույն հետազոտության շրջանակներում իրականացված [ՏԱ ոլորտի գնահատման](#) նմանությամբ անհրաժեշտ է, որ լիազոր մարմնի կողմից իրականացվող ՏԱ ոլորտի արտաքին գնահատումը ներառի **առնվազն** հետևյալ տեղեկություն տնօրինողներին՝

- նախարարություններ,
- կառավարությանը ենթակա մարմիններ,
- վարչապետին ենթակա մարմիններ,
- մարզպետարաններ,
- Երևանի, Գյումրու և Վանաձորի քաղաքապետարաններ:

Լիազոր մարմինը ՏԱ գնահատումն իրականացնում է ՏԱ ոլորտի օրենսդրության և տեղեկություն տնօրինողի կողմից ներկայացված տեղեկությունների և ինքնագնահատման արդյունքների և տեղեկությունների, ինչպես նաև տեղեկություն տնօրինողների պաշտոնական կայքերի ուսումնասիրության արդյունքների համադրմամբ:

Մասնավորապես, տեղեկություն տնօրինողը պետք է ինքնագնահատման ավարտից հետո, սակայն ոչ ուշ, քան առաջին եռամսյակի վերջին օրը լիազոր մարմնին³³ ներկայացնի

- իր կողմից լրացված ինքնագնահատման հարցաշարը,
- ինքնագնահատմանը մասնակցած ՀԿ-ների առաջարկությունների և դիտողությունների ամփոփաթեթը,
- սահմանված օրինակելի ձևաչափով հարցումների վիճակագրական տվյալները,
- ինչպես նաև մերժված հարցումները և մերժումները՝ ֆիզիկական անձ դիմողների տվյալներն ապանձնավորված:

Գնահատման փուլերը

ՏԱ գնահատումը պետք է իրականացվի հետևյալ փուլերով.

• Զայլ 1

ՏԱ գնահատման առաջին փուլը տեղեկություն տնօրինողի ինքնագնահատման հարցաշարի պատասխանների ստուգումն է:

Տեղեկություն տնօրինողների կայքերում ՏԱ ինքնագնահատման հարցաշարում նշված տեղեկությունների առկայությունը ստուգվում է, ներառյալ՝ տեղեկություն տնօրինողների կողմից պրոակտիվ հրապարակայնության գործառույթի իրականացման մակարդակը գնահատվում է տեղեկություն տնօրինողների կայքերի դիտարկման միջոցով՝ համադրելով դրանք տեղեկություն տնօրինողի կողմից ներկայացված տեղեկությունների հետ: Մասնավորապես, անհրաժեշտ տեղեկության առկայությունը ստուգվում է կայքերում պարզ (առանց հատուկ ծրագրերի) որոնման միջոցով, որն իրականացվում է կայքերի բաժիններում և/կամ ենթաբաժիններում, առավելագույնը՝ կայքի բաժինների երրորդ մակարդակում, եթե բաժնի կամ ենթաբաժնի անվանումը ողջամտորեն փոխկապակցված է հետազոտության թեմաներին (օրինակ, պարունակում է «հարցում», «վիճակագրություն» «տեղեկություն» «տեղեկատվություն» և նման այլ բառեր): Եթե կայքն ունի որոնման բաժին, ապա անհրաժեշտ տեղեկությունը որոնվում է նաև գնահատման ուղղություններին ողջամտորեն փոխկապակցված բառերի որոնմամբ: Ըստ այդմ,

³³ Մինչև ՏԱ լիազոր մարմնի ստեղծումը՝ խոսքն անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի մասին է:

ցանկացած անհրաժեշտ տեղեկություն, որը հնարավոր չի լինում կայքում գտնել պարզ որոնման միջոցով, գնահատվում է որպես չհրապարակված (կայքում բացակայող) տեղեկություն: Տեղեկություն տնօրինողի կողմից ներկայացված ինքնագնահատման հարցաշարի ստուգման ժամանակ անհրաժեշտության դեպքում լիազոր մարմինը կարող է օգտվել [աղբյուրներից](#):

• **Քայլ 2**

Տեղեկություն տնօրինողի կողմից ներկայացված ինքնագնահատման հարցաշարի ստուգման արդյունքում լիազոր մարմինը հաստատում կամ վերանայում է տեղեկություն տնօրինողի ինքնագնահատման հարցաշարում ներկայացրած պատասխաններից յուրաքանչյուրը: Մասնավորապես, լիազոր մարմինը յուրաքանչյուր հարցի պատասխանի դիմաց համապատասխան սյունակում նշում է կատարում հարցի պատասխանի պատշաճությունը հաստատելու կամ վերանայելու վերաբերյալ:

Եթե լիազոր մարմինը տեղեկություն տնօրինողի կողմից ներկայացված ինքնագնահատման հարցաշարի ստուգման արդյունքում հաստատում է հարցաշարի տվյալ հարցին տեղեկություն տնօրինողի տված պատասխանը, ապա գնահատման է ենթակա տեղեկություն տնօրինողի տված պատասխանը:

Եթե լիազոր մարմինը տեղեկություն տնօրինողի կողմից ներկայացված ինքնագնահատման հարցաշարի ստուգման արդյունքում վերանայում է հարցաշարի տվյալ հարցին տեղեկություն տնօրինողի տված պատասխանը, ապա գնահատման է ենթակա լիազոր մարմին կողմից վերանայված պատասխանը:

• **Քայլ 3**

ՏԱ գնահատման հաջորդ քայլը տեղեկություն տնօրինողներից յուրաքանչյուրի գնահատման ամփոփումն է և տեղեկություն տնօրինողներից յուրաքանչյուրում ՏԱ ցուցիչի վերհանումն է և ՏԱ վիճակի ընդհանուր գնահատումը:

Գնահատումն իրականացվում է սահմանված 80 չափանիշների համապատասխանության հիման վրա (տես՝ 2-րդ Հավելվածը): Չափանիշները վերաբերում են տեղեկատվության ռեակտիվ և պրոակտիվ ապահովմանը, մերժման կարգին և հիմքերին, ինստիտուցիոնալ հնարավորություններին ու կարողություններին, ՏԱ պատասխանատու պաշտոնատար անձին, վիճակագրության վարման ձևաչափին, մեթոդաբանությանը և պրակտիկային և այլն:

Տեղեկություն տնօրինողների ինքնագնահատումների ստուգման արդյունքում լիազոր մարմինը գնահատում է տեղեկություն տնօրինողների կողմից ինքնագնահատման հարցաշարում ներառված հարցերին տրված (հաստատված կամ վերանայված) պատասխանները: Յուրաքանչյուր հարցի պատասխան գնահատվում է 1՝ ՏԱ օրենսդրությանը համապատասխանության դեպքում, 0՝ ՏԱ օրենսդրությանը չհամապատասխանելու դեպքում: Հարցաշարում ներառված է 80 հարց-չափանիշ, ուստի, յուրաքանչյուր տեղեկություն տնօրինողին տրվող հնարավոր առավելագույն միավորը 80 է: Ընդ որում՝

- Հարցաշարում ՏԱ ռեակտիվ ապահովման վերաբերյալ հարցերը 15-ն են, հետևաբար ՏԱ ռեակտիվ ապահովման պարտականությունը պատշաճ կատարելու համար տեղեկություն տնօրինողը կարող է ստանալ առավելագույնը 15 միավոր:
- Հարցաշարում մերժման հիմքերի վերաբերյալ հարցերը 3-ն են, հետևաբար տեղեկության տրամադրումը միայն օրենքով սահմանված մերժման հիմքերով սահմանափակելու դեպքում տեղեկություն տնօրինողը կարող է ստանալ առավելագույնը 3 միավոր:
- Հարցաշարում ՏԱ պրոակտիվ ապահովման վերաբերյալ հարցերը 35-ն են, հետևաբար ՏԱ պրոակտիվ ապահովման պարտականությունը պատշաճ կատարելու համար տեղեկություն տնօրինողը կարող է ստանալ առավելագույնը 35 միավոր:

- Հարցաշարում ՏԱ պատասխանատուի վերաբերյալ հարցերը 3-ն են, հետևաբար տեղեկություն տնօրինողն այս հարցերից կարող է ստանալ առավելագույնը 3 միավոր:
- Հարցաշարում ՏԱ վիճակագրության վարման և հրապարակման վերաբերյալ հարցերը 15-ն են, ուստի ՏԱ պատշաճ վիճակագրություն վարելու դեպքում տեղեկություն տնօրինողը կարող է ստանալ առավելագույնը 15 միավոր:
- Հարցաշարում ՏԱ վիճակագրության ձևավորման աղբյուրների վերաբերյալ հարցերը 6-ն են, հետևաբար վիճակագրական տվյալները պատշաճ ձևավորելու աղբյուրների կիրառման դեպքում տեղեկություն տնօրինողը կարող է ստանալ առավելագույնը 6 միավոր:
- Հարցաշարում էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի վերաբերյալ հարցը 3-ն է, հետևաբար, այդ հարթակում կիրառման դեպքում տեղեկություն տնօրինողն կարող է ստանալ առավելագույնը 3 միավոր:

Արդյունքում տեղեկություն տնօրինողներից յուրաքանչյուրի կողմից ստացված միավորները փոխակերպվում են և ներկայացվում տոկոսային արտահայտմամբ՝ հաշվարկված հնարավոր առավելագույն միավորի համեմատ: Այսպես, յուրաքանչյուր 1 միավորը համապատասխանում է 1.25%-ին (1x100/80):

Վերջնարդյունքում ստացված տոկոսային արտահայտմամբ միավորը տվյալ տեղեկություն տնօրինողում ՏԱ վիճակի ցուցիչն է: Ցուցիչը ձևավորվում է սահմանված չափանիշներին համապատասխանության ստուգման արդյունքում ձևավորված տվյալների հիման վրա: Օրինակ, եթե տեղեկություն տնօրինողի ինքնագնահատման հարցաշարի գնահատման արդյունքում ստացված միավորները 20 են, ապա տեղեկություն տնօրինողի ՏԱ վիճակի ցուցիչը 25% է (20x100/80):³⁴

Ըստ ՏԱ վիճակի ստացած ցուցիչի տեղեկություն տնօրինող ում ՏԱ վիճակը գնահատվում է.

- լավ, եթե ՏԱ վիճակի ցուցիչը ավելի քան 91% է,
- բավարար, եթե ՏԱ վիճակի ցուցիչը 71-90% է
- վատ, եթե ՏԱ վիճակի ցուցիչը 71%-ից ցածր է:³⁵

Տեղեկություն տնօրինողներից յուրաքանչյուրի ՏԱ վիճակը լիազոր մարմինը գնահատում է հետևյալ աղյուսակով.

Գնահատման արդյունքում ստացված ՏԱ վիճակի ցուցիչը
Տեղեկություն տնօրինող մարմնում ՏԱ վիճակը

91-100%	71-90%	0-70%
լավ	Բավարար	վատ

• **Քայլ 4**

ՏԱ գնահատման վերջին քայլը ՏԱ ընդհանուր վիճակի գնահատումն է: ՏԱ ընդհանուր վիճակը վերլուծվում է՝ ըստ բոլոր տեղեկություն տնօրինողների ՏԱ վիճակի ցուցիչների:

ՏԱ ընդհանուր վիճակի ցուցիչը գնահատված բոլոր տեղեկություն տնօրինողների ստացած ՏԱ վիճակի ցուցիչների թվաքանակային միջինն է: ՏԱ ընդհանուր վիճակը գնահատվում է նույն կերպ (լավ, բավարար կամ վատ), ինչ տեղեկություն տնօրինողի ՏԱ վիճակի ցուցիչը:

³⁴Նույն սկզբունքով կարող է գնահատվել ՏԱ առանձին ուղղություններում տեղեկություն տնօրինողի վիճակը. օրինակ, եթե ինքնագնահատման հարցաշարի ՏԱ ռեակտիվ ապահովման հարցերի պատասխանների արդյունքում տեղեկություն տնօրինողի ստացած միավորները 10-ն են, ապա այդ տեղեկություն տնօրինողի ՏԱ ռեակտիվ ապահովման ցուցիչը կլինի 62.5% է (10x100/16):

³⁵Տես՝ Միացյալ Թագավորության ՏԱ հանձնակատարի ինքնագնահատման գործիք, <https://ico.org.uk/for-organisations/foi-self-assessment-toolkit/topic-1-timeliness/>, Compliance and assurance բաժին, ինչպես նաև The Carter Center, գնահատման իրականացման գործիք. մեթոդական ձեռնարկ, <https://www.cartercenter.org/resources/pdfs/peace/americas/iat/iat-methodology-manual.pdf>, էջ 11:

ՏԱ ընդհանուր վիճակը լիազոր մարմինը գնահատում է հետևյալ աղյուսակով.

**ՏԱ ընդհանուր վիճակի ցուցիչը
(տեղեկություն տնօրինողների ցուցիչների
գումար/տեղեկություն տնօրինողների թիվ)
ՏԱ ընդհանուր վիճակը**

91-100%	71-90%	0-70%
լավ	Բավարար	վատ

Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինը ՏԱ ոլորտի ընդհանուր գնահատման արդյունքները՝ ըստ անհրաժեշտության համապատասխան եզրահանգումներով և առաջարկություններով, հրապարակում է նույն ձևաչափով, ինչ անձնական տվյալների պաշտպանության բնագավառում առկա իրավիճակի և նախորդ տարվա գործունեության վերաբերյալ հրապարակային հաշվետվությունը:³⁶

Ակնկալվում է, որ առաջին գնահատումը պետք է իրականացվի 2023 թվականին՝ 2022 թվականի տվյալների հիման վրա:

Գործընթացի նկատմամբ հանրային վերահսկողության ապահովման նպատակով անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինը ՏԱ ընդհանուր վիճակի գնահատման գործընթացում պետք է ներգրավի ՏԱ ոլորտում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպություններին՝ վերջիններիս պահանջով կամ լիազոր մարմնի առաջարկությամբ և ՀԿ-ների համաձայնությամբ:

Հրապարակվող գնահատման զեկույցում պետք է նշվեն գործընթացին մասնակցած հասարակական կազմակերպությունների անվանումները, ինչպես նաև նշում սեփական նախաձեռնությամբ կամ լիազոր մարմնի առաջարկությամբ գնահատմանը մասնակցելու մասին: Մասնակցած ՀԿ-ների դիտողություններ պետք է հրապարակվեն գնահատման զեկույցի շրջանակներում՝ որպես առանձին կարծիքներ:

Գնահատման իրականացման փուլի քայլերը՝ ամփոփ

ՏԱ ընդհանուր գնահատման համար անհրաժեշտ է, որ անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինը մինչև գնահատման երթակա տարվան հաջորդող տարվա հունիսի 30-ը.

- ստուգի տեղեկություն տնօրինողի կողմից լրացված և իրեն ներկայացված ինքնագնահատման հարցաշարում ներկայացրած պատասխանները,
- հաստատի կամ վերանայի տեղեկություն տնօրինողի ինքնագնահատման հարցաշարում ներկայացրած պատասխաններից յուրաքանչյուրը,
- գնահատի տեղեկություն տնօրինողներից յուրաքանչյուրի ՏԱ վիճակը և (վերհանի տեղեկություն տնօրինողի ՏԱ ցուցիչը),
- գնահատի ՏԱ ընդհանուր վիճակը (վերհանի ՏԱ ընդհանուր վիճակի ցուցիչը),
- գնահատման արդյունքները ներկայացնի (գնահատման գործընթացում ներգրավի) հասարակական կազմակերպություններին
- հրապարակի գնահատման արդյունքները և հասարակական կազմակերպությունների դիտողությունները,
- գնահատման արդյունքների հիման վրա ներկայացնի առաջարկներ՝ ուղղված առկա բացերը լրացնելուն և ՏԱ վիճակի բարելավմանը:

ՏԱ գնահատումը ՏԱ լիազոր մարմնի կողմից

³⁶ Տես՝ օրինակ, Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի հանրային հաշվետվությունը՝ https://www.moj.am/storage/files/legal_acts/legal_acts_18296576311_Annual-report-2020.pdf:

Ինչպես նշեցինք՝ [ՏԱ գնահատման իրականացնող մարմնի վերաբերյալ ենթաբաժնում](#), համապատասխան լիազորությունների և գործիքակազմի բացակայության պայմաններում չի կարող խոսք գնալ անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի կողմից ՏԱ այնպիսի գնահատման մասին, ինչպիսին սովորաբար իրականացնում են ՏԱ լիազոր մարմինները (ՏԱ հանձնակատարները): Ուստի, թեև անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի լիազորությունները և կարգավիճակը հաշվի առնելով՝ առաջարկել ենք ՏԱ ոլորտի գնահատման հնարավոր առավել արդյունավետ մեխանիզմ, սակայն ՏԱ ոլորտի պատշաճ գնահատում իրականացնելու համար անհրաժեշտ է նախ ստեղծել ՏԱ լիազոր մարմին, ապա, օրենքով սահմանել ՏԱ լիազոր մարմնի՝ ՏԱ գնահատման իրականացման լիազորություն և անհրաժեշտ գործիքակազմ:

ՏԱ անկախ լիազոր մարմին ստեղծելուց հետո այդ մարմինը պետք է օժտվի ՏԱ ոլորտի գնահատման համար անհրաժեշտ արդյունավետ մեխանիզմներով, որոնք պետք է հաշվի առնվեն այս հետազոտությամբ առաջարկվող ՏԱ ոլորտի գնահատման ենթահամակարգում. մասնավորապես.

- [գնահատվողների](#) մասով ՏԱ լիազոր մարմնի կողմից ՏԱ ոլորտի արտաքին գնահատումը պետք է ներառի բոլոր տեղեկություն տնօրինողներին՝ առանց բացառության և վերապահումների,
- ՏԱ լիազոր մարմնի լիազորությունների շրջանակում պետք է ներառված լինի նաև ՏԱ իրավունքի կիրառման պրակտիկայի մասին տեղեկությունների հավաքագրումը՝ տվյալներ այն մասին, թե քանի հարցում է ներկայացվել տեղեկություն տնօրինողներին, քանիսն են պատասխան ստացել, ինչ ժամկետներում, հիմնականում ինչ խնդիրներ են բարձրացվել հարցումների միջոցով և այլն. սա ներառում է նաև նման ՏԱ ոլորտում պարտականությունների կատարման վերաբերյալ տեղեկություն տնօրինողներից ցանկացած տեղեկություններ պահանջելու իրավունքը (օրինակ հարցմամբ) և պահանջված տեղեկությունները սեղմ ժամկետներում ՏԱ լիազոր մարմնին տրամադրելու՝ տեղեկություն տնօրինողների պարտականությունը,
- ՏԱ լիազոր մարմինը պետք է կարողանա ընդունել և քննել ՏԱ իրավունքի խախտման վերաբերյալ բողոքներ, ինչը տեղեկություն տնօրինողներում ՏԱ վիճակի գնահատման համար անհրաժեշտ տեղեկությունների լրացուցիչ աղբյուր է,
- ՏԱ լիազոր մարմինը պետք է կարողանա սեփական նախաձեռնությամբ իրականացնել ստուգումներ, որոնց արդյունքում ստացված տվյալները տեղեկություն տնօրինողներում ՏԱ վիճակի գնահատման համար անհրաժեշտ տեղեկությունների լրացուցիչ աղբյուր է:

Բաժին Բ. Տեղեկատվության ազատության ոլորտի գնահատում քաղաքացիական հասարակության կողմից

ԹՀԿ-ները կարևոր դեր ունեն տեղեկատվության ազատության ոլորտում հասարակության շահերի ներկայացման, այդ թվում՝ ՏԱ վիճակի գնահատման հարցում, քանի որ ՏԱ լիազոր մարմնի բացակայության պայմաններում հենց քաղաքացիական հասարակության կազմակերպություններն են մշտադիտարկել տեղեկատվության ազատության ոլորտը և ապահովել ՏԱ զարգացման պրակտիկան: Բացի այդ, ՏԱ լիազոր մարմնի բացակայության պայմաններում օրենքներով կաշկանդված որևէ այլ մարմին չունի ՏԱ գնահատման այնպիսի լայն գործիքակազմ, ինչպիսին ունեն ԹՀԿ-ները (օրինակ, տեղեկություն ստանալու հարցումների գործիքը): Անշուշտ, ԹՀԿ-ները շարունակելու են պահպանել իրենց կարևոր դերը նաև ՏԱ լիազոր մարմնի առկայության պարագայում՝ մի կողմից հսկելով, որ ՏԱ լիազոր մարմինը պատշաճ իրականացնի իր լիազորությունները, մյուս կողմից սեփական գործիքակազմով աջակցելով ՏԱ լիազոր մարմնին՝ ահազանգելով ոլորտում առկա խնդիրների մասին և նպաստելով դրանց լուծմանը:

Վերոնշյալի համատեքստում քաղաքացիական հասարակության կողմից ՏԱ ոլորտի գնահատմանը մասնակցելը կամ ինքնուրույնաբար ՏԱ գնահատում իրականացնելն ունի առնվազն երկու կարևոր նպատակ.

- ՏԱ լիազոր մարմնի բացակայության պայմաններում մի կողմից լրացնել ՏԱ ոլորտի արտաքին գնահատման բացը, մյուս կողմից որպես ՏԱ ապահովման հիմնական երաշխավոր սեփական գործիքակազմով աջակցել և համոզվել, որ ՏԱ ոլորտի գնահատում իրականացնող այլ մարմինները (օրինակ, անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմինը) իրականացնում են արժանահավատ և օբյեկտիվ գնահատում,
- ՏԱ լիազոր մարմնի առկայության պայմաններում, հատկապես նման մարմնի ստեղծման առաջին տարիների ընթացքում, որպես անաչառ գնահատող համոզվելու, որ ՏԱ լիազոր մարմինը ՏԱ ոլորտի գնահատումն իրականացնելիս չի շեղվել ԹՀԿ-ների ջանքերով ավելի քան երկու տասնամյակ³⁷ ձևավորված ՏԱ կիրառման դրական փորձից:

Ստորև ներկայացված մեթոդաբանությունը մշակվել է այնպես, որ դրա հիման վրա հնարավոր լինի իրականացնել գնահատում տեղեկություն տնօրինող բոլոր տեսակի մարմիններում՝ ինչպես պետական կառավարման, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմիններում և հանրային նշանակության կազմակերպություններում: Ըստ մշակված մեթոդաբանության՝ հետազոտական խումբն իրականացրել է ՏԱ վիճակի գնահատում 39 մարմիններում:³⁸

³⁷Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքն ընդունվել է 2003 թվականին, սակայն ՏԱ պրակտիկան ԹՀԿ-ների ջանքերով սկսել է ձևավորվել դեռևս 2001 թվականից: Տես՝ ՏԱ դատական գործերի ժողովածու 2001-2006, ԻԱԿ, http://www.foi.am/files/library_pdfs/8.pdf, էջ 6

³⁸ Գնահատված մարմինների ցանկը տես՝ Հավելված 3-ում:

Բ.1. Զաղաքացիական հասարակության կողմից ՏԱ ոլորտի գնահատման մեթոդաբանությունը

ԶԶԿ-ների կողմից իրականացվող գնահատումը բաժանվում է երեք մասի.

- ռեակտիվ հրապարակայնության (հարցումներին ընթացք տալու պրակտիկայի) գնահատում
- պրոակտիվ հրապարակայնության գնահատում,
- ինստիտուցիոնալ համակարգի և ռեսուրսների գնահատում:

Ընդ որում, սրանցից յուրաքանչյուրը կարելի է կիրառել առանձին-առանձին, կամ միասնական մեկ ընդհանուր պատկեր ստանալու նպատակով: Ըստ նշված բաժինների՝ մշակվել են գնահատման չափանիշներ (ընդհանուր 80 չափանիշ), որոնք կազմում են գնահատման չափանիշների համակարգը:³⁹ Չափանիշների մշակման հիմքում ընկած են տեղեկատվության ազատության և պրոակտիվ հրապարակայնության ազգային օրենսդրության, միջազգային պարտավորությունների, ինչպես նաև միջազգային լավագույն փորձով ձևավորված պահանջները: Նշված երեք բաժիններից յուրաքանչյուրի գնահատումն իրականացվում է ուրույն մեթոդոլոգիայի հիման վրա:

Բ.1.1. Ռեակտիվ հրապարակայնության գնահատում. հարցումներին ընթացք տալու պրակտիկայի գնահատում

Ռեակտիվ հրապարակայնության գնահատման **նպատակն է** պարզել, թե տեղեկություն տնօրինող մարմինների կողմից ինչպես է ընթացք տրվում մարդկանց տեղեկություն ստանալու հարցումներին, որքանով դրանց լիարժեք, ամբողջական և ժամանակին են պատասխանում, ինչ խնդիրներ են առաջանում տեղեկություն ստանալու գործընթացում:

Ռեակտիվ հրապարակայնության գնահատման հիմնական մեթոդն է տարբեր դիմողների կողմից տեղեկություն տնօրինող մարմիններին հարցումներ ուղարկելը: Հարցումները ներառում են ինչպես պարզ, այնպես էլ բարդ կամ զգայուն հարցեր: Պարզ հարցերն այնպիսիք են, երբ դրանց պատասխանները պատրաստ առկա և հասանելի են տեղեկություն տնօրինող մարմնում: Բարդ հարցումները ներառում են հարցեր, որոնց պատասխանների տրամադրումը պահանջում է հավելյալ աշխատանք, ուսումնասիրություն: Բարդ հարցումների հետ համատեղ դիտարկվում են նաև զգայուն հարցերը: Դրանք այն հարցումներն են, որոնց տեղեկություն տնօրինող մարմնի ղեկավարը կամ տեղեկություն տնօրինող մարմինը հավանաբար չի ցանկանա պատասխանել՝ կախված պատասխանի հնարավոր սուբյեկտիվ ազդեցությունից. օրինակ, խնդրվել է տրամադրել տեղեկատվություն տնօրինող մարմնի դեմ եղած դատական գործերի վերաբերյալ: Սա զգայուն հարց է, քանի որ այն դատական գործերի դեպքում, երբ վճիռ է կայացվել ընդդեմ տեղեկություն տնօրինող մարմնի, տվյալ մարմինը հանդես է գալիս բացասական, վատ լույսի ներքո:

Հարցմամբ դիմողների դերում կարող են հանդես գալ հասարակության տարբեր խմբերի ներկայացուցիչներ, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձիք, հասարակության խոցելի խմբեր՝ դիմողների հանդեպ տարբեր վերաբերմունքը գնահատելու նպատակով:

Բ.1.2. Պրոակտիվ հրապարակայնության գնահատում

Պրոակտիվ հրապարակայնության սկզբունքի եռությունն այն է, որ տեղեկություն տնօրինող պետական մարմինները սեփական նախաձեռնությամբ հրապարակում են իրենց

³⁹ Տես Հավելված 2:

գործունեությանն առնչվող տեղեկություններ՝ մատչելիության, արդիականության և ամբողջականության սկզբունքների հիման վրա:

Պետական գերատեսչությունները պետք է ձեռնարկեն հավակնոտ միջոցառումներ հանրային հետաքրքրության պաշտոնական փաստաթղթերը լիարժեք հանրայնացնելու ուղղությամբ ինչպես իրենց նախաձեռնությամբ, այնպես էլ հարցման հիման վրա, որպեսզի նպաստեն բաց և արդյունավետ կառավարմանը և հասարակության տեղեկացված մասնակցությանը:

Պրոակտիվ հրապարակայնության գնահատման նպատակն է գնահատել ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից սեփական նախաձեռնությամբ տեղեկությունների հրապարակման մակարդակը և բաց տվյալների ձևաչափի ապահովումը պաշտոնական ինտերնետային կայքերում, ինչպես նաև գնահատել պաշտոնական կայքերը՝ պրոակտիվ հրապարակայնության և Տեղեկատվության ազատության օրենսդրության պահանջների համապատասխանության և միջազգային լավագույն փորձի հիման վրա:

Պրոակտիվ հրապարակայնության գնահատման ընթացքում անհրաժեշտ է պարզել, թե արդյոք.

- տեղեկություն տնօրինողը պատշաճ իրականացնում է օրենքով սահմանված տեղեկությունների՝ սեփական նախաձեռնությամբ հրապարակման պարտականությունը,
- որքանով է հրապարակված տեղեկությունը լայն հասարակության համար մատչելի՝ հասանելի, տեսանելի, հասկանալի և օգտագործման ենթակա:

Հասանելի ասելով՝ նկատի ունենք՝ առկա են արդյոք պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունները, և եթե այո, ապա որքանով են տեղեկություններն ամբողջական և թարմացված

Տեսանելի ասելով՝ նկատի ունենք՝ որքանով է հեշտ կայքի քարտեզի, որոնման համակարգի կամ բաժինների մակերեսային ուսումնասիրությամբ գտնել պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունները

Հասկանալի ասելով նկատի ունենք՝ որքանով է հրապարակված տեղեկությունը համակարգված, պարզ, ներկայացված ըստ էության՝ այնպես, ինչպես նշված է օրենքում,

Օգտագործման ենթակա ասելով՝ նկատի ունենք՝ որքանով է հրապարակված տեղեկությունը համապատասխանում բաց տվյալների չափանիշներին:

Պրոակտիվ հրապարակայնության գնահատումն իրականացնելիս հաշվի է առնվել Ինֆորմացիայի ազատության կենտրոնի մշակած չափորոշիչները⁴⁰ (ընդհանուր 65 չափանիշ): Մշակված չափորոշիչները հնարավորություն են տվել գնահատելու պետական կառավարման մարմինների պաշտոնական կայքերի բովանդակությունը, հազեցվածությունը, արդիականությունը, ձևը, տեխնիկական լուծումները և գործիքները:

- Չափորոշիչների 1-ին բաժինը՝ Տեղեկատվության ազատություն, ներառում է չափանիշներ, որոնց միջոցով գնահատվում է, թե ինչպես է մարմինն իրականացնում ՏԱ ոլորտում պրոակտիվ հրապարակայնության պահանջների կատարումը (9 չափանիշ):
- Չափորոշիչների 2-րդ բաժինը՝ Պարտադիր հրապարակման ենթակա տեղեկություններ, ներառում է չափանիշներ, որոնք վերաբերում են օրենսդրությամբ սահմանված պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների մատչելիությանը (26 չափանիշ):
- Չափորոշիչների 3-րդ բաժինը՝ Տեխնիկական պարամետրեր և նավիգացիա, գնահատում է պաշտոնական կայքերի տեխնիկական հնարավորություններն ու պարամետրերը (30 չափանիշ):

Գնահատման չափանիշները հիմնականում վերաբերում են հետևյալ հարցերին՝

- **Օրենսդրությամբ սահմանված տեղեկության հրապարակայնությունը,**
- **Հրապարակված տեղեկության ամբողջականությունը և ճշգրտությունը,**

⁴⁰ ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների թափանցիկության և հրապարակայնության մակարդակը պարբերաբար գնահատելու համար Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ն մշակել է 65 չափանիշ՝ http://www.foi.am/u_files/file/TA%20patasxanaturer/Web-site-Audit-Report.pdf:

- **Թարմացումը և օպերատիվությունը.** պաշտոնական կայքերում հրապարակված տեղեկատվության թարմացման հաճախականությունը, հրապարակված տեղեկությունների արդիականությունը,
- **Մատչելիությունը, հասանելիությունը.** Գնահատմամբ ստուգվել է նաև հրապարակված տեղեկության հասանելիությունը, թե որքանով է հեշտ գտնել հրապարակված տեղեկությունը, ինչպես նաև այն, թե որքանով է հրապարակված տեղեկությունը մատչելի հետագա օգտագործման համար, արդյոք տվյալ տեղեկատվությանը ծանոթանալու համար անհրաժեշտ են որոշակի հմտություններ, կարողություններ, որոշակի գործիքներ: Մատչելիությունը նաև ներառում է այն, թե որքանով է հրապարակված տեղեկությունը/փաստաթուղթը հասկանալի ու պարզ քաղաքացու համար: Ստուգվել է նաև փաստաթղթերի որոնման հարմարությունը, փաստաթղթի ներբեռնման ձևաչափը, ինչը օգտագործողներին հնարավորություն է տալիս հետագայում նույնպես օգտագործելու այդ տեղեկությունը (**reuse of information**):

Բ1.3. Ինստիտուցիոնալ համակարգի և ռեսուրսների գնահատում

Տեղեկատվության ազատության ապահովման համար տեղեկություն տնօրինողի մոտ անհրաժեշտ ինստիտուցիոնալ համակարգի և ռեսուրսների խնդիրներն ըստ էության ածանցվում են տեղեկություն տնօրինողների համար ՏԱ մասին օրենքով սահմանված պարտականությունների կատարման գնահատումից և ի հայտ են գալիս տեղեկություն տնօրինողի կողմից ՏԱ ռեակտիվ և պրոակտիվ ապահովման գնահատման արդյունքում:

Ուստի, տեղեկատվության ազատության ապահովման համար տեղեկություն տնօրինողի մոտ անհրաժեշտ ինստիտուցիոնալ համակարգի և ռեսուրսների գնահատումն իրականացվում է այն նույն մեթոդաբանությամբ և գործիքներով, ինչ ՏԱ ռեակտիվ և պրոակտիվ ապահովման գնահատումը (հարցումների միջոցով կամ կայքերի ուսումնասիրմամբ):

F.2. Տեղեկատվության ազատության գնահատում 2022թ.

Վերոնշյալ մեթոդաբանության հիման վրա հետազոտական խումբն իրականացրել է գնահատում 2022 թվականի հունվար-փետրվար ամիսներին՝ 2021 թվականի տվյալների վերլուծության հիման վրա:

ՏԱ առկա վիճակի գնահատումը հետազոտական խմբի կողմից իրականացվել է ՏԱ մասին օրենքով տեղեկություն տնօրինող համարվող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման 39 մարմնում (այսուհետ՝ տեղեկություն տնօրինողներ),⁴¹ մասնավորապես՝ բոլոր նախարարություններում (12), կառավարությանը ենթակա բոլոր մարմիններում (11), վարչապետին ենթակա բոլոր մարմիններում (3), բոլոր մարզպետարաններում (10), Երևանի, Գյումրու և Վանաձորի քաղաքապետարաններում (3): Այս տեղեկություն տնօրինողներն ընտրվել են ներքոնշյալ չափանիշներով:

Նախ, տեղեկություն տնօրինողների վերոնշյալ խմբերում (նախարարություններ, կառավարությանը և վարչապետին ենթակա մարմիններ, մարզպետարաններ) այն մարմիններն են, որոնց, ըստ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի givemeinfo.am կայքում ներկայացված հարցումների, 2020-2021 թվականների ընթացքում համահավաք ամենաշատ հարցումներն են ներկայացվել (ըստ Էության՝ դրանք հանրության համար հետաքրքրություն ներկայացնող ամենաշատ տեղեկությունները տնօրինող մարմիններն են), ինչպես նաև նշված տեղեկություն տնօրինողների վերաբերյալ առկա է ՏԱ ոլորտում որոշակի պրակտիկա, որն ըստ անհրաժեշտության հնարավոր է գնահատել:

Ընդ որում, բացառությամբ համայնքապետարանների՝ առավել համապարփակ և ամբողջական պատկեր ստանալու համար ուսումնասիրվել են տեղեկություն տնօրինողների վերոնշյալ խմբերի բոլոր մարմինները: Համայնքապետարաններից ընտրվել են Երևանի, Գյումրու և Վանաձորի քաղաքապետարանները, որոնք ամենաշատ բնակչություն ունեցող քաղաքներն են:

Գնահատման մեջ ընդգրկված բոլոր 39 մարմիններին ուղարկվել է ընդհանուր 117 գրավոր հարցում:⁴² Տեղեկություն տնօրինողներից յուրաքանչյուրին ներկայացվել է տեղեկություն ստանալու երեքական հարցում:

Բանավոր հարցումներ չեն ներկայացվել՝ հաշվի առնելով ՏԱ մասին օրենքով սահմանված՝ բանավոր հարցումներին պատասխանելու պարտականության սահմանափակ դեպքերը: Բոլոր հարցումներն իրենց բնույթով պարզ հարցեր են ներառում: Հաշվի առնելով սույն գնահատման շրջանակում տեղեկություն տնօրինողներին ներկայացված հարցումների նպատակը՝ հարցերն ընտրվել են այնպես, որ ողջամտորեն բացառվեն օրինական մերժումները և այլ մարմիններին հղումները: Այլ կերպ ասած՝ տեղեկություն տնօրինողներից պահանջվել են այնպիսի տեղեկություններ, որոնք չեն համարվում օրենքով սահմանված գաղտնիք, ինչպես նաև, պահանջված տեղեկությունները պետք է առկա լինեն տեղեկություն տնօրինող մարմնում և հենց հարցման հասցեատեր տեղեկություն տնօրինողի իրավասության մեջ է մտնում այդ տեղեկությունների տրամադրումը:

Գնահատման ընթացքում իրականացվել են նաև այլ հարցումներ, որոնք բխել են տեղեկություն տնօրինողներին ներկայացված առաջին հարցման պատասխանից, նպատակ են ունեցել հստակեցնել կամ լրացնել հարցմամբ ստացված պատասխանը:

Հարցումները ներկայացվել են էլեկտրոնային հարցումների միասնական հարթակով (e-request), բացառությամբ Գյումրու և Վանաձորի քաղաքապետարաններին ուղարկված հարցումների, քանի որ դրանք թեև ներկայացված են էլեկտրոնային հարցումների միասնական հարթակում, սակայն գնահատման իրականացման պահին տեխնիկական պատճառով հասանելի չեն եղել: Գյումրու և Վանաձորի քաղաքապետարաններին հարցումներն ուղարկվել են էլեկտրոնային փոստով:

⁴¹ Ցանկը տես՝ Հավելված 3-ում:

⁴² Հարցումների նմուշները տես՝ Հավելված 4-ում:

Հարցումներն ուղարկվելուց հետո հարցումը տեղեկություն տնօրինողին առաքված լինելու կամ հարցման պատասխանի ընթացքի վերաբերյալ լրացուցիչ զանգերով կամ այլ կերպ տեղեկություններ չեն ճշտվել (follow-up զանգեր չեն իրականացվել): Մի կողմից, նման զանգերի անհրաժեշտություն չկա, քանի որ Գյումրու և Վանաձորի քաղաքապետարաններից բացի մնացած տեղեկություն տնօրինողներին հարցումներն ուղարկվել են e-request-ով, և ըստ այդմ, հարցումը ստանալու օրվա մասին տեղեկությունը հարցման ընթացքին հետևելու հնարավորությամբ: Առկա է e-request հարթակում:

Հարցումներն ունեցել են մի քանի նպատակ.

- ստանալ նախնական ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված տվյալների վերաբերյալ լրացուցիչ՝ ավելի հստակ տեղեկություններ, հաստատել կամ հերքել նախնական ուսումնասիրության արդյունքում կատարված նախնական եզրահանգումները,
- ստուգել տեղեկություն տնօրինողների կողմից տեղեկություն ստանալու հարցումներին պատասխանելու օրենսդրությամբ սահմանված կանոնների պահպանման որակը:
- ստուգել տեղեկություն տնօրինողների կողմից տեղեկություն ստանալու հարցումներին ներկայացված պատասխանների համապատասխանությունն օրենսդրությամբ հարցման պատասխանին ներկայացվող պահանջներին: Տվյալ դեպքում խոսքը ոչ թե հարցման քննարկման կանոնների պահպանման, այլ հարցման պատասխանի ձևին ներկայացվող պահանջների պահպանման մասին է:

Գնահատման շրջանակում հարցումներին պատասխանելու ժամկետները գնահատելիս հաշվի են առնվել ՏԱ օրենքով սահմանված ժամկետները⁴³. Մարմինների կողմից պրոակտիվ հրապարակայնության գործառնության իրականացման մակարդակը գնահատելու նպատակով հարցումներին զուգահեռ անմիջական դիտարկման են ենթարկվել մարմինների պաշտոնական կայքերը:

Բ.3. Տեղեկատվության ազատության ռեակտիվ ապահովումը հարցման հիման վրա

Պարզելու համար, թե որքանով պատշաճ են պատասխանում տեղեկություն տնօրինող վերոնշյալ մարմինները տեղեկություն ստանալու հարցումներին, գրավոր հարցումներ են ուղարկվել գնահատման շրջանակում ընդգրկված տեղեկություն տնօրինող 39 մարմիններին: Տեղեկություն տնօրինողներից յուրաքանչյուրին ներկայացվել է տեղեկություն ստանալու երեք հարցում (ընդհանուր՝ 117 հարցում): Բոլոր հարցումներն ուղարկվել են Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակով (e-request.am) կամ Էլեկտրոնային փոստով (Գյումրու և Վանաձորի քաղաքապետարանների դեպքում), ուստի տեղեկություն տնօրինողների մոտ ստացվել են նույն օրը:

Հարցումներում նշում է արվել հարցման պատասխանը բացառապես Էլեկտրոնային եղանակով ակնկալելու վերաբերյալ:⁴⁴

⁴³ ՏԱ մասին օրենքը գրավոր հարցմանը որևէ կերպ արձագանքելու (պահանջված տեղեկությունը ներկայացնելու, մերժելու, տեղեկության տրամադրման համար լրացուցիչ աշխատանք կատարելու անհրաժեշտության մասին հայտնելու, տեղեկությունը չունենալու մասին հայտնելու և այլն) համար սահմանում է 5-օրյա ժամկետ: Ընդ որում, ՏԱ մասին օրենքը չի նշել, որ խոսքն աշխատանքային օրերի մասին է ուստի, իրավական ակտի նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից ելնելով նորմը մեկնաբանելու կանոնի համաձայն (տես՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածը)՝ ՏԱ մասին օրենքով սահմանված ժամկետները կարող են մեկնաբանվել որպես օրացուցային օրերով: Սակայն, ՏԱ պրակտիկայում քաղաքացիական հասարակությունը հաշվի է առնել, որ տեղեկություն տնօրինող մարմիններում որպես կանոն գործում է 5-օրյա աշխատանքային շաբաթը՝ հանգստյալ օրերով և տեղեկություն տնօրինող մարմնի աշխատողներն ըստ էության զրկված են ոչ աշխատանքային օրերին տեղեկություն ստանալու գրավոր հարցումը քննարկելու հնարավորությունից: Արդյունքում, ձևավորված պրակտիկայի համաձայն՝ հարցմանն արձագանքելու համար օրենքով սահմանված ժամկետները հաշվարկվել են աշխատանքային օրերով: Սա միակ դեպքն է, երբ օրենքի մեկնաբանության հարցում վարչական պրակտիկան հաշվի առնելով վերապահում է արվել հոգուտ տեղեկություն տնօրինողի:

⁴⁴ Ուղարկված հարցումների և ստացված պատասխանների մասին տեղեկատվություն առկա է www.givemeinfo.am հարթակում:

Հարցումների վիճակագրության վերջին թարմացումն իրականացվել է 2022 թվականի մարտի 10-ին:

Հարցումը ներկայացնելու և քննարկելու կարգը սահմանված է ՏԱ մասին օրենքի 9-րդ հոդվածով: Օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ «Տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝ (...) 3) տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի և իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն»:

Իր հերթին Կառավարության 1204-Ն որոշումը, կրկնելով տեղեկություն տնօրինողի՝ հավաստի և ամբողջական տեղեկություն տրամադրելու պարտականությունը, նաև սահմանել է պատասխանի ամբողջականությունը ապահովող հարցման պատասխանին ներկայացվող տեխնիկական պահանջ: Մասնավորապես, 1204-Ն որոշման հավելված 2-ի 8-րդ կետի համաձայն՝ «8. Հարցման պատասխանը պետք է լինի հավաստի և լրիվ՝ պարունակելով բոլոր առաջադրված հարցերի հիմնավոր պատասխանները: Դիմողի կողմից մեկից ավելի հարցերի առաջադրման դեպքում պետական մարմինը հերթական համարակալման միջոցով տրամադրում է բոլոր հարցերի հավաստի և լրիվ պատասխանները»:

Տեղեկություն ստանալու հարցման մերժման հիմքերը սահմանված են ՏԱ մասին օրենքի 8-րդ հոդվածով:


Տեղեկություն ստանալու հարցումներին ընթացք տալու ընդհանուր պրակտիկան հետևյալն է.

Ընդհանուր արդյունքների ամփոփում

Գնահատման մեջ ընդգրկված 39 տեղեկություն տնօրինողներից 35-ը (տեղեկություն տնօրինողների 90%-ը) հարցմանը պատասխանել են ՏԱ օրենսդրության առնվազն մեկ պահանջի խախտմամբ: Արդյունքում, 39 տեղեկություն տնօրինողներից միայն 4-ն են (տեղեկություն տնօրինողների 10%-ը), որ իրենց հասցեագրված բոլոր երեք հարցումներին տրամադրել են օրենքին համապատասխան պատշաճ (ամբողջական, պատասխանին ներկայացվող պահանջներին համապատասխան, ժամանակին) պատասխան (այդ տեղեկություն տնօրինողներն են Արդարադատության նախարարությունը, Արագածոտնի, Սյունիքի և Տավուշի մարզպետարանները):


Աղյուսակ 1

Հարցման պատասխանների պատշաճությունն ըստ մարմինների



39 տեղեկություն տնօրինողներին ուղարկված 117 հարցումներից անպատասխան է մնացել 4-ը (հարցումների 3%), 9-ը հարցման (հարցումների 8%) պատասխան տրամադրվել է ՏԱ մասին օրենքով սահմանված ժամկետների խախտմամբ, իսկ 104 հարցման (հարցումների 89%) պատասխանվել է օրենքով սահմանված ժամկետներում:


Աղյուսակ 2



Ուղարկված 117 հարցումներից 4-ը (հարցումների 3%) մնացել է անպատասխան: Պատասխանված 113 հարցումներից 59-ի (պատասխան ստացած հարցումների 52%) պատասխանները չեն համապատասխանել 1204-Ն որոշմամբ հարցման պատասխանին ներկայացվող պահանջներին, իսկ 54-ի (պատասխան ստացած հարցումների 48%-ը) պատասխանները համապատասխանել են:

Աղյուսակ 3


Հարցման պատասխանին ներկայացվող պահանջներն ըստ բովանդակային պատասխան ստացած 111 հարցումների պատասխանների



Ըստ ելքյան պատասխան ստացած 113 հարցումներից 36-ի (պատասխան ստացած հարցումների 32%) պատասխանները բովանդակային առումով պատշաճ չեն՝ թերի են, չեն համապատասխանում ՏԱ մասին օրենքով հարցմանը պատասխան ներկայացնելու կանոններին, իսկ 77-ի (պատասխան ստացած հարցումների 68%) պատասխանը լիարժեք է:

Աղյուսակ 4

Հարցման պատասխանների ամբողջականությունն ըստ բովանդակային պատասխան ստացած 111 հարցումների պատասխանների.



Ստորև ներկայացնենք արդյունքներն ըստ տեղեկություն տնօրինող մարմինների առանձին խմբերի:⁴⁵

Նախարարություններ

- Նախարարություններին հասցեագրված 36 հարցումներից ոչ մեկն անպատասխան չի մնացել:
- 36 հարցումներից 14-ին տրամադրվել է թերի պատասխան, քանի որ չեն ներկայացվել հարցմամբ պահանջված տեղեկություններից մեկը կամ մի քանիսը: Նախարարություններից միայն 2-ն են (Արտակարգ իրավիճակների, և Արդարադատության նախարարությունները), որոնց պատասխանների բովանդակությունը բոլոր երեք հարցումներով ներկայացված հարցերի առումով լիարժեք է:
- Միայն երեք հարցման դեպքում է, որ հարցման պատասխանը ներկայացվել է ՏԱ մասին օրենքով սահմանված ժամկետների խախտմամբ. Արտակարգ իրավիճակների, Արտաքին գործերի և Պաշտպանության նախարարությունները հարցումներից մեկին պատասխանել են համապատասխանաբար 6, 8 և 24 աշխատանքային օր հետո:
- 16 դեպքում հարցման պատասխանը ներկայացվել է առանց հերթական համարակալման. խախտվել է 1204-Ն որոշման հավելված 2-ի 8-րդ կետի պահանջը: Ընդ որում, Աշխատանքի և սոցիալական հարցերի, Շրջակա միջավայրի, Պաշտպանության և ֆինանսների նախարարություններն իրենց հասցեագրված բոլոր երեք հարցումների պատասխանները ներկայացրել են առանց հերթական թվագրման:

⁴⁵Առանձին մարմինների արդյունքները պատկերող աղյուսակները հասանելի են Հավելված 7-ում:

- Ընդհանուր առմամբ, նախարարությունները լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկության տրամադրման ժամկետին հղում կատարել են 4 անգամ: Նշված 4 միջանկյալ պատասխաններից միայն 1-ն է, որ ներկայացվել է ՏԱ մասին օրենքին համապատասխան՝ մյուս 3 միջանկյալ պատասխանների դեպքում նախարարությունները ոչ պատշաճ հղում են կատարել լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկության տրամադրման ժամկետին, քանի որ չեն հայտնել տեղեկության տրամադրման հետաձգման պատճառները կամ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը. խախտվել է ՏԱ մասին օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետը:
- Հարցմանը պատասխանած բոլոր նախարարությունները հարցման պատասխանը ներկայացրել են էլեկտրոնային եղանակով, հետևաբար պահպանել են ՏԱ մասին օրենքի 9-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը:

Այսպիսով, նախարարություններից միայն Արդարադատության նախարարության պատասխաններն են բոլոր երեք հարցումների դեպքում միաժամանակ և բովանդակային առումով լիարժեք, և համապատասխանում են 1204-Ն որոշմամբ հարցման պատասխանին ներկայացվող պահանջներին, և տրամադրված են օրենքով սահմանված ժամկետում:⁴⁶

Կառավարությանը ենթակա մարմիններ

- Կառավարությանը ենթակա մարմիններին հասցեագրված 33 հարցումներից անպատասխան է մնացել 1-ը՝ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին անպատասխան է թողել իրեն հասցեագրված հարցումներից մեկը: Մնացած 32 հարցումները ստացել են բովանդակային պատասխաններ:
- 32 հարցումներից 9-ին տրամադրվել է թերի պատասխան, քանի որ չեն ներկայացրել հարցմամբ պահանջված տեղեկություններից մեկը կամ մի քանիսը:
- Հարցումներից 3-ի դեպքում կառավարությանը ենթակա մարմինները (Կադաստրի կոմիտեն, Զաղաքաշինության կոմիտեն և Զաղաքաշինության, տեխնիկայի և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը), ներկայացրել են ժամկետանց պատասխան. այս մարմինները հարցմանը պատասխանել է 6-ից 9 աշխատանքային օր հետո:
- 23 դեպքում հարցման պատասխանը ներկայացվել է առանց հերթական համարակալման. խախտվել է 1204-Ն որոշման հավելված 2-ի 8-րդ կետի պահանջը: Ընդհանուր առմամբ, լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկության տրամադրման ժամկետին հղում կատարվել է 2 անգամ. 2 դեպքում էլ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկության տրամադրման ժամկետին ոչ պատշաճ հղում է կատարել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը, քանի որ չի հայտնել տեղեկության տրամադրման հետաձգման պատճառները կամ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը:

Արդյունքում, կառավարությանը ենթակա մարմիններից որևէ մեկի պատասխանը բոլոր երեք հարցումների դեպքում միաժամանակ և բովանդակային առումով լիարժեք, և 1204-Ն որոշմամբ հարցման պատասխանին ներկայացվող պահանջներին համապատասխան, և օրենքով սահմանված ժամկետում տրամադրված չէ:

Վարչապետին ենթակա մարմիններ

- Վարչապետին ենթակա մարմիններին հասցեագրված 9 հարցումներից անպատասխան է մնացել 1-ը՝ Ազգային անվտանգության ծառայությունն անպատասխան է թողել իրեն հասցեագրված հարցումներից մեկը:

⁴⁶Ուղարկված հարցումները տես՝ ավելված 4-ում:

- Բովանդակային պատասխան ստացած 8 հարցումներից 4-ին տրամադրվել է թերի պատասխան, քանի որ չեն ներկայացրել հարցմամբ պահանջված տեղեկություններից մեկը կամ մի քանիսը:
- Հարցումներից 1-ի դեպքում Ազգային անվտանգության ծառայությունը ոչ պատշաճ մերժել է պահանջված տեղեկություններից մեկի տրամադրումը, քանի որ միայն հղում է արել ՏԱ մասին օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին՝ առանց հայտնելու այն օրենքի համապատասխան նորմը, որի համաձայն պահանջված տեղեկությունը համարվել է գաղտնիք, ինչպես նաև առանց նշելու մերժումը բողոքարկելու կարգը:
- Հարցումներից միայն 1-ի դեպքում է վարչապետին ենթակա մարմինը (Պետական վերահսկողական ծառայությունը), ներկայացրել ժամկետանց պատասխան. այս մարմինը հարցմանը պատասխանել է 6 աշխատանքային օր հետո:
- 5 դեպքում հարցման պատասխանը ներկայացվել է առանց հերթական համարակալման. խախտվել է 1204-Ն որոշման հավելված 2-ի 8-րդ կետի պահանջը: Ընդ որում, Ոստիկանությունն իրեն հասցեագրված բոլոր երեք հարցումների պատասխանները ներկայացրել են առանց հերթական թվագրմամբ:
- Ընդհանուր առմամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկության տրամադրման ժամկետին հղում կատարվել է 2 անգամ. ընդ որում մի դեպքում լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկության տրամադրման ժամկետին ոչ պատշաճ հղում է կատարել Ոստիկանությունը, քանի որ չի հայտնել տեղեկության տրամադրման հետաձգման պատճառները կամ տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը. խախտվել է ՏԱ մասին օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետը: Մյուս դեպքում միջանկյալ պատասխան է ներկայացրել ԱԱԾ-ն, որը պատասխանում նշել է տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը՝ միջանկյալ պատասխանը տրամադրելուց 10 օր հետո:

Արդյունքում, վարչապետին ենթակա մարմիններից որևէ մեկի պատասխանը բոլոր երեք հարցումների դեպքում միաժամանակ և բովանդակային առումով լիարժեք, և 1204-Ն որոշմամբ հարցման պատասխանին ներկայացվող պահանջներին համապատասխան, և օրենքով սահմանված ժամկետում տրամադրված չէ:

Մարզպետարաններ

- Մարզպետարաններին հասցեագրված 30 հարցումներից որևէ մեկն անպատասխան չի մնացել:
- Հարցումներից 6-ին տրամադրվել է թերի պատասխան, քանի որ չեն ներկայացրել հարցմամբ պահանջված տեղեկություններից մեկը կամ մի քանիսը. խախտվել է ՏԱ մասին օրենքի 12-րդ հոդվածը:
- Հարցումներից միայն 1-ի դեպքում է մարզպետարանը (Արարատի մարզպետարանի), ներկայացրել ժամկետանց պատասխան. մարզպետարանը հարցմանը պատասխանել է 6 աշխատանքային օր հետո:
- 10 դեպքում հարցման պատասխանը ներկայացվել է առանց հերթական համարակալման. խախտվել է 1204-Ն որոշման հավելված 2-ի 8-րդ կետի պահանջը:

Արդյունքում, Արագածոտնի, Սյունիքի և Տավուշի մարզպետարանների պատասխաններն են, որ բոլոր երեք հարցումների դեպքում միաժամանակ և բովանդակային առումով լիարժեք են, և համապատասխանում են 1204-Ն որոշմամբ հարցման պատասխանին ներկայացվող պահանջներին, և տրամադրված են օրենքով սահմանված ժամկետում:

Քաղաքապետարաններ

- Քաղաքապետարաններին հասցեագրված 9 հարցումներից անպատասխան է մնացել 2-ը՝ Գյումրու և Վանաձորի քաղաքապետարանները չեն պատասխանել իրենց հասցեագրված մեկական հարցման: Մնացած 7 հարցումները ստացել են բովանդակային պատասխաններ:
- Պատասխան ստացած 7 հարցումներից 1-ին տրամադրվել է թերի պատասխան, թերի է համարվել Վանաձորի քաղաքապետարանի պատասխաններից մեկը, քանի որ քաղաքապետարանը չի ներկայացրել հարցմամբ պահանջված որոշ տեղեկություններ:
- Պատասխան ստացած բոլոր հարցումների պատասխանները ստացվել են ՏԱ մասին օրենքով սահմանված ժամկետներում:
- 5 դեպքում հարցման պատասխանը ներկայացվել է առանց հերթական համարակալման:

Արդյունքում, քաղաքապետարաններից որևէ մեկի պատասխանը բոլոր երեք հարցումների դեպքում միաժամանակ և բովանդակային առումով լիարժեք, և 1204-Ն որոշմամբ հարցման պատասխանին ներկայացվող պահանջներին համապատասխան, և օրենքով սահմանված ժամկետում տրամադրված չէ:

Եզրակացություն

Այսպիսով, տեղեկատվության ազատության ապահովման հիմնական նախապայմաններից մեկը՝ տեղեկատվության ազատության ռեակտիվ ապահովումը պրակտիկայում չափազանց խնդրահարույց է: Տեղեկություն տնօրինողները հիմնականում չեն պահպանում տեղեկություն ստանալու հարցումների քննարկման և դրանց պատասխանելու կանոնները (կարգը), ներառյալ՝ հարցումների պատասխաններին ներկայացվող պահանջները, այդ թվում.

- տրամադրված տեղեկությունները հաճախ ամբողջական չեն, թերի են, բացակայում են հարցմամբ պահանջված այս կամ այն տեղեկությունները,
- հարցմամբ դիմողը պատշաճ չի տեղեկացվում հարցման պատասխան հետաձգման հստակ պատճառների մասին,
- հարցման պատասխանի տրամադրումը հետաձգելիս չի նշվում պատասխանի տրամադրման վերջնաժամկետը կամ միանգամից հղում է արվում օրենքով սահմանված առավելագույն հնարավոր ժամկետին,
- հարցմամբ դիմողը պատշաճ չի տեղեկացվում տեղեկության տրամադրումը մերժելու հիմքերի մասին,
- հարցմանը պատասխանելու ժամկետները թեև ոչ հաճախ, սակայն որոշ դեպքերում դեռևս խախտվում են՝ անգամ աշխատանքային օրերով հաշվարկելու դեպքում:

F.4. Տեղեկություն տրամադրելու մերժման հիմքերը

Տեղեկատվության ազատության վիճակի կարևոր ցուցիչ է տեղեկություն տնօրինողների կողմից ՏԱ սահմանափակումների կիրառումը: Պատահական չէ, որ ՏԱ մասին օրենքը, 8-րդ հոդվածով սահմանելով տեղեկության տրամադրման մերժման հիմքերը, միաժամանակ տեղեկություն տնօրինողի վրա դրել է ստացված հարցումների մերժման հիմքերը տարին առնվազն մեկ անգամ պրոակտիվորեն՝ սեփական նախաձեռնությամբ, հրապարակելու պահանջ:

Մերժման հիմքերի հրապարակման պահանջն ինքնանպատակ չէ, այն չափազանց կարևոր է ինչպես տեղեկություն տնօրինողների կողմից տեղեկությունների տրամադրումն ապօրինի մերժելու նախադեպերը կանխելու համար, այնպես էլ անկախ տեղեկություն տնօրինողի կողմից խախտում անելու դիտավորությունից՝ տեղեկություն տնօրինողի կողմից օրենքով սահմանված իր պարտականությունների կատարման որակը գնահատելու և վերհանված խնդիրների մասին ահազանգելու համար: Այս բաժնում հաջորդիվ ներկայացվելիք եզրահանգումները նշվածի ապացույցն են:

ՏԱ օրենքի կիրառման պրակտիկան վկայում է, որ տեղեկություն ստանալու հարցումների պաշտոնական վիճակագրություն հրապարակելու իրենց պարտականության շրջանակներում տեղեկություն տնօրինողները պատշաճ չեն իրականացնում նաև տեղեկությունների տրամադրումը մերժելու հիմքերը հրապարակելու իրենց պարտականությունը: Գնահատման շրջանակներում հարցում է ներկայացվել գնահատման մեջ ընդգրկված բոլոր 39 մարմիններին և ի թիվս այնի պահանջվել է տրամադրել 2021 թվականին մերժված հարցումների թիվը և մերժման հիմքերը:⁴⁷


39 տեղեկություն տնօրինողներից 16-ը (41%) հայտնել են, որ 2021 թվականի ընթացքում որևէ հարցմամբ պահանջված տեղեկության տրամադրում չեն մերժել, ևս 3-ը (8%) այս կամ այն կերպ չեն տրամադրել մերժման հիմքերի վերաբերյալ բովանդակային պատասխան (ԱԱԾ-ն և Երևանի քաղաքապետարանը չեն վարել մերժումների համապատասխան վիճակագրություն, ուստի չկան տվյալներ մերժման հիմքերի վերաբերյալ, իսկ Ոստիկանության հղում է արել իր կայքում հրապարակված տեղեկություն ստանալու հարցումների վիճակագրությանը, որտեղ, սակայն, մերժման հիմքերի վերաբերյալ տեղեկություն հրապարակված չէ): Մնացած 20 (51%) տեղեկություն տնօրինողները հայտնել են, որ 2021 թվականի ընթացքում ունեցել են տեղեկության տրամադրման մերժումներ:

Աղյուսակ 5

Մերժումների առկայություն տեղեկություն տնօրինող մարմիններում

⁴⁷Մերժման հիմքերի վերաբերյալ հարցումների պատասխաններն ըստ տեղեկություն տնօրինողների տես Յավելված 5-ում:

Մերժումների առկայություն տեղեկություն տնօրինող մարմիններում



Մերժման հիմքերի վերաբերյալ բովանդակային պատասխան տրամադրած 20 տեղեկություն տնօրինողներն ընդհանուր առմամբ նշել են տեղեկությունների տրամադրումը մերժելու 34 հիմք այդ հիմքերը կարող են տարբեր մարմինների դեպքում տարբեր բառակազմերով կրկնվել, սակայն վերջնարդյունքում նշված 34 հիմքերը հնարավոր է գնահատել հետևյալ կերպ.

- Մերժման հիմքեր, որ նախատեսված են ՏԱ մասին օրենքով, բխում են ՏԱ մասին օրենքի 8-րդ հոդվածից. հարցմամբ պահանջված տեղեկությունը մերժելու՝ տեղեկություն տնօրինող մարմինների ներկայացրած 34 հիմքերից 11-ն են, որ հնարավոր է գնահատել որպես օրենքով նախատեսված:

Նշված բոլոր 11 դեպքերում որպես մերժման հիմք վկայակոչվել են տեղեկությունների՝ պետական կամ ծառայողական գաղտնիք, կամ նախաքննական գաղտնիք (հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալներ) կամ տեղեկություն տնօրինողի գործունեությունը կարգավորող օրենքով գաղտնիք համարվելը, ինչը համապատասխանում է ՏԱ մասին օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին:

- Մերժման հիմքեր, որ վերապահումով է հնարավոր գնահատել որպես ՏԱ մասին օրենքով նախատեսված. հարցմամբ պահանջված տեղեկությունը մերժելու՝ տեղեկություն տնօրինող մարմինների ներկայացրած 34 հիմքերից 9-ի դեպքում վկայակոչվել են տեղեկության տրամադրմամբ ՀՀ անվտանգությանը չվնասելը, տեղեկության՝ առևտրային կամ բանկային գաղտնիք լինելը կամ տեղեկության՝ աշխատողների անձնական տվյալներին վերաբերելը, անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիք լինելը կամ տեղեկության առնչությունը քրեական գործին կամ տեղեկության՝ բժշկական գաղտնիք լինելը:

Մերժման վերոնշյալ հիմքերը գնահատվել են որպես վերապահումով օրենքով նախատեսված, քանի որ նշված մերժման հիմքերը որպես այդպիսին կարող են գնահատվել միայն օրենսդրությամբ սահմանված պայմաններով և օրենսդրությամբ սահմանված հիմքերով, այնինչ, տեղեկություն տնօրինողների պատասխաններից հնարավոր չի եղել հստակ հասկանալ՝ արդյոք հարցմամբ պահանջված տեղեկությունն օրենսդրությամբ սահմանված կարգով է դասակարգված է եղել որպես գաղտնիք և տվյալ տեղեկություն տնօրինողի վրա դրված է այդ տեղեկության գաղտնիությունը ապահովելու պարտականություն, թե տեղեկություն տնօրինողն է պահանջված տեղեկությունը որպես գաղտնիք գնահատել՝ առանց համապատասխան իրավական հիմքի:

- Տեղեկություն տնօրինող մարմինների ներկայացրած 34 հիմքերից 10-ը օրենքով սահմանված չեն որպես տեղեկության տրամադրումը մերժելու հիմք:

Մերժման նշված 10 հիմքերից մի դեպքում վկայակոչվել է վիճակագրության գաղտնիության սկզբունքը, իսկ մյուս 9 դեպքերում որպես մերժման հիմք նշվել է անձնական տվյալների պաշտպանությունը: Հաշվի առնելով, որ տեղեկությունն տնօրինողները տեղեկության տրամադրումը մերժելիս հաճախ են հղում անում անձնական տվյալների պաշտպանությանը՝ պետք է նշել, որ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքն ինքնին չի արգելում այս կամ այն անձնական տվյալի մշակումը, այդ թվում՝ հրապարակումը կամ փոխանցումը, չի սահմանում պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից անձնական տվյալներ տրամադրելու կամ դրա տրամադրումը մերժելու կարգը և պայմանները, ինչպես նաև չի սահմանում այս կամ այն անձնական տվյալների՝ գաղտնիք լինելու կարգավիճակը: Նման դիրքորոշում հայտնել է Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը թիվ N-006/01/19 վարչական գործով կայացրած որոշմամբ ⁴⁸ : Գործակալության դիրքորոշմամբ՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում անձնական տվյալները չեն նույնանում գաղտնիք հանդիսացող տեղեկությունների հետ, իսկ անձնական տվյալը, այդ թվում՝ անձնական կյանքի տվյալը, տվյալի տեսակի անվանում է, այլ ոչ թե ռեժիմը (անձնական տվյալը կարող է լինել նաև հանրամատչելի): Թիվ 069/10/19 վարչական գործով կայացրած որոշմամբ Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը, վերահաստատելով իր վերոնշյալ դիրքորոշումը, նաև ընդգծել է, որ սխալ կլինի այն եզրակացությունը, որ տեղեկության՝ անձնական տվյալ կամ անձնական կյանքի տվյալ հանդիսանալն ինքնին ենթադրում է այդ տվյալները տրամադրելու արգելք:⁴⁹

Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի որոշումներով արտահայտած վերոնշյալ դիրքորոշումներն արտացոլվել են նաև Անձնական տվյալների պաշտպանության կողմից մշակված՝ Պետական մարմինների կողմից անձնական տվյալների մշակման ուղեցույցում⁵⁰ ի թիվս այլնի նշված է.

- անձնական տվյալն ինքնին գաղտնիք չէ:
- անձնական տվյալները երրորդ անձանց կարող են փոխանցվել կամ այլ կերպ մատչելի դարձվել միայն օրենքներով, այդ թվում՝ «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:
- պետական մարմնի տնօրինության տակ գտնվող անձնական տվյալներին երրորդ անձանց մատչելիությունը կամ այդ տվյալների հանրամատչելիությունը սահմանափակելու անհրաժեշտության դեպքում անձնական տվյալները կամ անձնական տվյալներ պարունակող փաստաթղթերը պետք է դասակարգվեն որպես որևէ գաղտնիք:

Այսպիսով, անձնական տվյալների պաշտպանությունն ինքնին չի կարող պատրվակ հանդիսանալ տեղեկության տրամադրումը մերժելու համար, արտացոլված չէ ՏԱ մասին օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասում, և չի կարող համարվել որպես տեղեկության տրամադրումը մերժելու պատշաճ հիմք:

- Մերժման հիմքեր, որ իրականում մերժման հիմքեր չեն, քանի որ տեղեկության տրամադրումը չի էլ մերժվել. հարցմամբ պահանջված տեղեկությունը մերժելու՝ տեղեկությունն տնօրինող մարմինների ներկայացրած 34 հիմքերից 4-ը առհասարակ վերաբերելի չեն տեղեկության տրամադրման մերժմանը՝ ՏԱ օրենքի 8-րդ հոդվածին: Նշված դեպքերում տեղեկությունն տնօրինողները հարցմանը բովանդակային պատասխան չտրամադրելը սխալմամբ որակել են որպես տեղեկության տրամադրման մերժում:

⁴⁸ Տես՝ ԻԱԿ-ն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի գործով Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի որոշումը, 2019, http://www.foi.am/u_files/file/Voroshum_2019_qaqhaqapetaran.pdf:

⁴⁹ Տես՝ <https://bit.ly/3tjxvvy>:


⁵⁰ Տես՝ Հավելված 1:

Օրինակ, սխալմամբ որպես մերժման հիմք է նշվել հարցման ստորագրված չլինելը, հարցմամբ դիմողներին այլ մարմիններ ուղղորդելը: Վերոնշյալ դեպքերում խոսք չի գնում ՏԱ օրենքի իմաստով մերժման մասին:

Ընդհանուր արդյունքների ամփոփում⁵¹

Ընդհանուր առմամբ, մերժման հիմքերի վերաբերյալ հարցին ի պատասխան 20 տեղեկություն տնօրինողների կողմից նշված մերժման 34 հիմքերից միայն 11-ն են (մերժման հիմքերի 33%-ը), որ բխում են ՏԱ մասին օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասից: Մերժման հիմքերից 9-ը (մերժման հիմքերի 26%-ի) վերապահումով են բխում են ՏԱ մասին օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասից, քանի որ թեև ձևական իմաստով համապատասխանում են ՏԱ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի ձևակերպումներին կամ բխում են դրանցից, սակայն ոլորտային օրենսդրության վերլուծությունը ողջամիտ կասկածներ է առաջացնում տվյալ տեղեկություն տնօրինողների համար մերժման նշված հիմքերի կիրառելիության հարցում: Մերժման հիմքերից 10-ը (մերժման հիմքերի 29%-ը) օրենքով սահմանված չեն որպես տեղեկության տրամադրումը մերժելու հիմք, իսկ մերժման հիմքերից 4-ը (մերժման հիմքերի 12%-ը) առհասարակ վերաբերելի չեն տեղեկության տրամադրման մերժմանը:

**Աղյուսակ 6
Մերժման հիմքերի համապատասխանությունն օրենքին**



Առանձին ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ՏԱ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասին չհամապատասխանող մերժման 10 հիմքերից 9-ն ըստ էության անձնական տվյալների պաշտպանությունն է: Նշվածից բխում է, որ մի կողմից տեղեկություն տնօրինողներն անձնական տվյալը դեռևս սխալմամբ նույնացնում են անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը խախտող տեղեկության (գաղտնիքի) հետ և հարցմամբ պահանջված տեղեկության՝ անձնական տվյալ լինելը դեռևս սխալմամբ ընկալվում է որպես այդ տեղեկության տրամադրումը մերժելու հիմք:


⁵¹ Մերժման հիմքերի վերաբերյալ հարցումների պատասխաններն ըստ տեղեկություն տնօրինողների տես Յավելված 5-ում:

Վերոնշյալի համատեքստում պետք է նշել, որ տեղեկություն տնօրինողների կողմից նշված մերժման 34 հիմքերից 9-ի (մերժման հիմքերի 27%-ի) դեպքում այս կամ այն կերպ վկայակոչված մերժման հիմքը վերաբերել է ՏԱ մասին օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասին, այն է՝ պետական կամ ծառայողական գաղտնիքի հիմքին (ներառյալ՝ տեղեկություն տնօրինողի գործունեությունը կարգավորող օրենսդրությամբ սահմանված գաղտնիքները), մերժման հիմքերից 12-ը (մերժման հիմքերի 35%-ը) այս կամ այն կերպ վերաբերում են անձնական տվյալների պաշտպանությանը (ներառյալ՝ անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությանը), իսկ 13-ը (մերժման հիմքերի 38%-ը) վերոնշյալների մեջ չմտնող այլ հիմքեր են (օրինակ, նախաքննության գաղտնիքը, բժշկական գաղտնիքը, առևտրային կամ բանկային գաղտնիքը, ինչպես նաև, այս թվի մեջ մտնում են իրականում ՏԱ մասին օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասին չվերաբերող և որպես մերժման հիմք սխալ որակված հիմքերը):

Համեմատության համար պետք է նշել, որ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից մերժման հիմքերի վերաբերյալ հարցում տեղեկություն տնօրինողներին ներկայացվել էր նաև 2021 թվականին: Ըստ տեղեկություն տնօրինողների կողմից 2020 թվականի մերժման հիմքերի վերաբերյալ տրամադրած տեղեկությունների՝ 2020 թվականին տեղեկությունների տրամադրումը պետական կամ ծառայողական գաղտնիքի հիմքով մերժվել է 39% դեպքերում, ինչը մի փոքր ավել է, քան 2021 թվականի ցուցանիշը (27%), անձնական տվյալների պաշտպանության հիմքով 2020 թվականին տեղեկության տրամադրումը մերժվել է 52% դեպքերում՝ էականորեն ավելի շատ, քան 2021 թվականի ցուցանիշը (35%), իսկ այլ հիմքերով 2020 թվականին տեղեկության տրամադրումը մերժվել է 9% դեպքերում, ինչն էականորեն քիչ է 2021 թվականի ցուցանիշից (38%):

Աղյուսակ 7

2020-2021 թվականների հարցումների բաշխումը՝ ըստ մերժման հիմքերի



Եզրակացություն

Տեղեկություն տնօրինողների կողմից տեղեկության տրամադրումը պատշաճ հիմքով մերժելու պարտականության կատարման պրակտիկան խիստ խնդրահարույց է: Ընդ որում, էական չէ՝ իրականում հարցմամբ պահանջված տեղեկության տրամադրումը պետք է մերժվեր, թե՛ ոչ, քանի որ խնդրահարույց է այն հանգամանքը, որ տեղեկությունների տրամադրումը մերժելու հիմքում ի սկզբանե դրվում է օրենքով չսահմանված, օրենքից չբխող մերժման հիմք, այդ թվում.

- տեղեկության տրամադրումը մերժվում է ՏԱ մասին օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով չսահմանված, ՏԱ մասին օրենքից չբխող հիմքով,

- տեղեկության տրամադրումը մերժելու այն հիմքերը, որոնք ձևական իմաստով համադրելի են ՏԱ մասին օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերին, բովանդակային իմաստով բավարար հստակ չեն, չեն հիմնավորում տվյալ տեղեկություն տնօրինողի կողմից տվյալ տեղեկությունը հենց այդ հիմքով մերժելու իրավաչափությունը,
- տեղեկություն տնօրինողների կողմից անձնական տվյալները սխալմամբ նույնացվում են գաղտնիքի հետ և պահանջված տեղեկության՝ անձնական տվյալ լինելը տեղեկություն տնօրինողի կողմից սխալմամբ ընկալվում է որպես տեղեկության տրամադրումը մերժելու հիմք: Սա հատկապես խնդրահարույց է՝ հաշվի առնելով, որ անձնական տվյալների պաշտպանությունը որպես տեղեկության տրամադրումը մերժելու հիմք ավելի շատ է վկայակոչվել, քան օրենքով նախատեսված՝ պետական կամ ծառայողական գաղտնիքի պաշտպանության հիմքը,
- տեղեկություն տնօրինողները շատ դեպքերում խառնում են տեղեկության տրամադրման մերժումը ՏԱ մասին օրենքով սահմանված այլ տիպի պատասխանների հետ, որպես մերժում են որակում այդպիսին չհանդիսացող պատասխանները,
- Որոշ դեպքերում չեն պահպանվում մերժում տրամադրելու՝ օրենքով սահմանված կարգը և ժամկետները:

Բ.5. Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակը

ՏԱ մասին օրենքում ըստ էության բացակայում են էլեկտրոնային հարցումների հետ կապված կարգավորումներ. ՏԱ մասին օրենքն ընդունվել է 2003 թվականին և երբևէ չի փոփոխվել կամ լրացվել: Էլեկտրոնային եղանակով հարցում կատարելու և հարցման պատասխան ստանալու վերաբերյալ օրենքում առկա միակ դրույթը նախատեսված է օրենքի 10-րդ հոդվածում, որի 2-րդ մասի 3-րդ կետով՝ «սույն հոդվածի 1-ին մասում նախատեսված տեղեկության տրամադրման համար գանձում չի կատարվում հետևյալ դեպքերում՝ տեղեկությունն էլեկտրոնային փոստով (ինտերնետային ցանցով) տրամադրելիս»:

Էլեկտրոնային եղանակով հարցում կատարելու և հարցման պատասխան ստանալու վերաբերյալ իրավակարգավորումների բացակայությունը մինչև 2015 թվականը տեղեկատվության ազատության իրավունքի կիրառման պրակտիկայում որոշակի խնդիրներ էր առաջացնում, քանի որ թեև ոչ հաճախ, սակայն երբեմն տեղեկություն տնօրինողները էլեկտրոնային փոստով ուղարկված հարցումը ՏԱ մասին օրենքի իմաստով չէին համարում գրավոր հարցում, ուստի չկար նաև էլեկտրոնային հարցումներ ընդունելու և դրանց պատասխանելու ընթացակարգերի վերաբերյալ միասնական մոտեցում:

Սակայն, տեխնոլոգիական առաջընթացին և ինտերնետ հասանելիության ընդլայնմանը զուգահեռ շատացան նաև էլեկտրոնային հարցումները և էլեկտրոնային պատասխանները: Էլեկտրոնային հարցումների հետ կապված որոշակի կարգավորումներ տեղ գտան N 1204-Ն որոշման մեջ, որի 1-ին հավելվածի 6-րդ կետով պարտադիր պահանջ էր սահմանվել տեղեկություն տնօրինողների համար՝ իրենց պաշտոնական կայքերում ունենալ «Ուղարկել հարցում/դիմում» կամ այլ համապատասխան բաժին: Նույն հավելվածի 7-րդ կետով սահմանվում էր, որ ի թիվս այլնի էլեկտրոնային փոստային հասցեից, կամ տեղեկություն տնօրինողի պաշտոնական կայքի «Ուղարկել հարցում/դիմում» կամ այլ համապատասխան բաժնից օրենսդրությամբ պահանջվող անհրաժեշտ տեղեկությունները լրացնելուց հետո՝ ստորագրությամբ, էլեկտրոնային թվային ստորագրությամբ կամ նույնականացման քարտի միջոցով տվյալ մարմին ուղարկված հարցումները, ստացման օրը, տվյալ մարմնի ներքին գործավարության կարգին համապատասխան, մուտքագրվում են տվյալ տեղեկությունը տնօրինողի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ և շրջանառվում այդ կարգի համաձայն: 1204-Ն որոշումը նաև սահմանում էր, որ տեղեկություն տնօրինողները որոշումն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում պետք է ապահովեն իրենց պաշտոնական կայքերում (առկայության դեպքում) էլեկտրոնային թվային ստորագրությամբ ուղղակիորեն հարցում գրելու կամ ստորագրված հարցումները կցելու հնարավորություն:

2018 թվականին 1204 որոշման մեջ արտացոլվեց նաև «Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակ»-ը (e-request)՝ որպես էլեկտրոնային եղանակով տեղեկություն տնօրինողներին ի թիվս այլնի նաև առցանց հարցում ներկայացնելու հարցման քննարկման ընթացքին հետևելու և հարցման պատասխանը ստանալու հնարավորություն ընձեռող հարթակ: Մասնավորապես, 1204-Ն որոշման 1-ին հավելվածի 6-րդ կետի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնական կայքերում պետք է առկա լինի e-request հարթակի հղումը:


Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 39 տեղեկություն տնօրինողներին ուղարկած հարցմամբ խնդրել էր հայտնել 2021 թվականի ընթացքում ստացած հարցումների թիվը, ինչպես նաև նշել, դրանցից քանիսն է ստացվել էլեկտրոնային եղանակով և մասնավորապես e-request հարթակի միջոցով:

Հարցմանը վերաբերելի և հստակ պատասխան տրամադրել է 29 տեղեկություն տնօրինող մնացած 10 տեղեկություն տնօրինողները կամ չեն պատասխանել հարցմանը, կամ տրամադրել են ընդհանուր կամ ոչ ամբողջական կամ ոչ հստակ տեղեկություններ, որոնք վերլուծության ենթակա չեն:

29 տեղեկություն տնօրինողներից ստացված պատասխանների համաձայն՝ 2021 թվականի ընթացքում այդ մարմինները ստացել են տեղեկություն ստանալու 20849 հարցում, որոնցից առնվազն 17994-ը (86%-ը)՝ էլեկտրոնային եղանակով:

Աղյուսակ 8

Էլեկտրոնային եղանակով ստացված հարցումները 2018-2021 թվականներին



Վերոնշյալ վիճակագրությունը վկայում է, որ 2018 թվականից հետո տեղեկատվության ազատության իրավունքն էլեկտրոնային եղանակով իրացնելու պրակտիկան անդառնալիորեն գերակայում է: Ընդ որում, էլեկտրոնային եղանակով տեղեկություն տնօրինողներին ներկայացված հարցումներում գերակշռում են ոչ թե էլեկտրոնային փոստով, այլ e-request հարթակով ներկայացված հարցումները: Սա ինքնին վկայում է այն մասին, որ էլեկտրոնային հարցումների քանակի աճն ուղիղ համեմատական է e-request հարթակի հանրայնացմանը:

2019 թվականի համեմատ 2020 թվականին էլեկտրոնային հարցումների քանակի 37% աճի մեկ այլ պատճառ կարող են լինել նոր կորոնավիրուսի համավարակը և դրանով պայմանավորված սահմանափակումները. մասնավորապես, հեռավար աշխատանքով պայմանավորված՝ տեղեկություն տնօրինողները նախապատվություն էին տալիս և առաջարկում էին իրականացնել էլեկտրոնային գրագրություն, ինչը ներառում էր նաև էլեկտրոնային եղանակով հարցումները: Միաժամանակ, 2021 թվականին էլեկտրոնային հարցումների քանակի 5%-ով նվազումը կարող է պայմանավորված լինել 2021 թվականին 2020-ի համեմատ նոր կորոնավիրուսի դեմ պայքարի խիստ սահմանափակումների համեմատաբար թուլացմամբ:

Միաժամանակ, պետք է նկատի ունենալ, որ թեև էլեկտրոնային եղանակով և մասնավորապես e-request հարթակով տեղեկություններ փնտրելու և ստանալու առանձնահատկություններն օրենքով սահմանված չեն, սակայն ողջամիտ չէ միայն օրենքով սահմանված չլինելու պատրվակով ձեռնպահ մնալ հարթակը գնահատելուց, ուստի անհրաժեշտություն է առաջանում անդրադառնալ նաև e-request հարթակին:

E-request հարթակի միջոցով տեղեկություն ստանալու հարցում ներկայացնելու պայմանները համադրելի են ՏԱ մասին օրենքով հարցմանը ներկայացվող պահանջներին: Արդյունքում, e-request հարթակը տեղեկություն ստանալու հարցում ներկայացնելու համար չի սահմանում այնպիսի պայմաններ, որոնք նախատեսված չեն օրենքով:

Կարևոր է նաև e-request հարթակի միջոցով ներկայացված հարցումների դեպքում հարցման քննարկման ընթացքին հետևելու գործիքը. Այն հանրային վերահսկողության մեխանիզմ է, որը

պետք է կաշկանդի տեղեկություն տնօրինողին և զրկի հարցման քննարկման այս կամ այն կանոնը խախտելու հնարավորությունից: Այդուհանդերձ, առկա են որոշ մտահոգություններ հարցման քննարկման ընթացքին հետևելու գործիքակազմի կապակցությամբ:

Այսպես, գնահատման իրականացման ընթացքում Գյումրու և Վանաձորի քաղաքապետարաններին ուղարկված հարցումներից բացի մնացած բոլոր տեղեկություն տնօրինողներին հարցումներն ուղարկվել են և պատասխաններն էլ ստացվել են e-request հարթակով: Հարցումներից մեկի դեպքում տեղեկություն տնօրինող միջանկյալ պատասխանով հայտնել էր պահանջված տեղեկությունը տրամադրելու համար լրացուցիչ աշխատանք կատարելու և տեղեկությունը 30-օրյա ժամկետում տրամադրելու մասին: Այնինչ, e-request հարթակում միջանկյալ պատասխանը ներկայացված է որպես վերջնական պատասխան և հարցման ընթացքի կարգավիճակը նշված է որպես ավարտված (նկար 1):

Նկար 1

The screenshot shows a web browser window with the URL e-request.am/hy/e-letter/check. The page title is "Որոնման արդյունքը" (Search Results). Below the title, it says "Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին" (Public Health and Labour Inspectorate). A table displays the request details:

Ձեր գրությունը տեսնելու համար սեղմեք այստեղ	Գրություն
Ձեր գրության մուտքագրման ամսաթիվը	28.12.2021 20:52:45
Ձեր նամակի ընթացքը	Ավարտված է
Պատասխանի ամսաթիվ	2021-12-29 16:11:11
Պատասխանի համար	01/19286-2021
Պատասխանը տեսնելու համար սեղմեք այստեղ	Գրություն

Մեկ այլ դեպքում տեղեկություն տնօրինողը կրկին միջանկյալ պատասխանով հայտնել էր պահանջված տեղեկությունը տրամադրելու համար լրացուցիչ աշխատանք կատարելու և տեղեկությունը 30-օրյա ժամկետում տրամադրելու մասին, սակայն այս դեպքում թեև միջանկյալ պատասխանը e-request հարթակում ներկայացված չէ որպես վերջնական պատասխան, սակայն առհասարակ արտացոլված չէ (նկար 2):


Նկար 2

The screenshot shows the same website as in Figure 1, but with a different request status. The page title is "Որոնման արդյունքը" (Search Results). Below the title, it says "<< առողջապահության նախարարություն" (Ministry of Health). A table displays the request details:

Ձեր գրությունը տեսնելու համար սեղմեք այստեղ	Գրություն
Ձեր գրության մուտքագրման ամսաթիվը	12.01.2022 09:17:17
Ձեր նամակի ընթացքը	Ընթացքում է
Հարցերի համար կարող եք դիմել՝	Աստղիկ Առաքելյան
Էլ. փոստ	astghikarakelyan@mail.ru
Հեռախոսահամար	060808003

Առկա է նաև քննարկման ընթացքում գտնվող հարցումների վերաբերյալ e-request հարթակում արտացոլվող տեղեկությունների տարբերություն: Օրինակ, քննարկման ընթացքում գտնվող հարցումներից մեկի դեպքում e-request հարթակում արտացոլված չէ հարցման մուտքագրման ամսաթիվը, իսկ քննարկման ընթացքում գտնվող հարցումներից մյուսի դեպքում հարցման մուտքագրման ամսաթիվը նշված է (նկարներ 3 և 4):

Նկար 3 և 4



Կարող է տպավորություն ստեղծվել, որ վերոնշյալ խնդիրները չափազանց տեխնիկական են և չեն կարող էական ազդեցություն ունենալ ՏԱ իրավունքի պատշաճ ապահովման վրա: Սակայն, e-request հարթակում հարցումների քննարկման ընթացքի վերաբերյալ տեղեկության արտացոլման պրակտիկայի նման տարբերությունը կարող է լինել կամ հարթակի տեխնիկական թերության խնդիր, ինչը կարող է կասկածի տակ դնել հարթակով ներկայացված տեղեկության հավաստիությունը, հետևաբար նաև պիտանելիությունը) կամ կարող է վկայել հարթակի աշխատանքում մարդկային միջամտության էական ազդեցության մասին (օրինակ, եթե հարցման ընթացքի մասին տեղեկությունը մուտքագրվում է տվյալ պաշտոնատար անձի կողմից և վերջինս ունի հարցման վերաբերյալ այս կամ այն տվյալը մուտքագրելու կամ չմուտքագրելու հայեցողություն), ինչը կարող է կասկածի տակ դնել հարցման քննարկման ընթացքին հետևելու գործիքի արդյունավետությունը, հետևաբար նաև անհրաժեշտությունը:

Թեև e-request հարթակը գործում է շուրջ 3 տարի, սակայն պատշաճ չի աշխատում հարթակի կարևոր գործիքներից մեկը՝ հարցումների ինքնաշխատ ձևավորվող ընդհանուր վիճակագրությունը:

Եզրակացություն

Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակը տեղեկատվության ազատության իրավունքի ապահովման կարևոր գործիք է, սակայն, մի կողմից օրենսդրությամբ ամբողջական կարգավորված չլինելու, մյուս կողմից իրազեկության պակասի և տեխնիկական որոշակի խնդիրների պայմաններում հարթակը չի կիրառվում այն արդյունավետությամբ, ինչի ներուժը որ ունի: Այդ թվում.

- հարթակում ներկայացված չեն տեղեկություն տնօրինող բոլոր մարմինները, այնինչ անհրաժեշտ է, որ հարթակով հնարավոր լինի հարցումներ ուղարկել տեղեկություն տնօրինող բոլոր մարմիններին,
- հարթակում առկա են տեխնիկական կամ մարդկային միջամտության հնարավորությամբ պայմանավորված թերություններ,
- առկա է հանրային իրազեկման պակաս: Թև հարթակը գործում է ավելի քան երեք տարի, քաղաքացիների կողմից դրա օգտագործման մակարդակը ցածր է,
- հարթակում առկա չէ տեղեկություն դրա կիրառումն առավել հարմարավետ դարձնելու վերաբերյալ,
- առկա են հարցում/դիմում/բողոք ուղարկելու դժվարություններ (հարթակի էլ. ստորագրության պահանջը, տեխնիկական խնդիրների պատճառով չուղարկելը),
- հարթակում արտացոլված չեն հարցման քննարկման՝ օրենսդրությամբ սահմանված բոլոր կարգերը,
- հարթակի վիճակագրության բաժինը պարզ ու հասկանալի չէ այցելուի համար, հարթակում պատշաճ վիճակագրություն չի վարվում և չի թարմացվում:

Բ.6. Տեղեկատվության ազատության պրոակտիվ ապահովումը. տեղեկատվության ազատությունը սեփական նախաձեռնությամբ

Անկախ հարցում ստացած լինելու հանգամանքից՝ տեղեկություն տնօրինողի կողմից սեփական նախաձեռնությամբ տեղեկությունների հրապարակման դեպքերը և կարգը, ինչպես նաև հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը սահմանված է ՏԱ մասին օրենքի 7-րդ հոդվածով:

Գնահատման մեջ ընդգրկված բոլոր տեղեկություն տնօրինողներն ունեն պաշտոնական կայքեր, հետևաբար, ՏԱ մասին օրենքով սահմանված պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունները պետք է հրապարակված լինեն այս մարմինների պաշտոնական կայքերում՝ անկախ այլ կերպ հրապարակված լինելու հանգամանքից:

Սույն հետազոտության շրջանակում Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկություն տնօրինող 39 մարմիններին ներկայացված հարցմամբ խնդրել էր ի թիվս այլևի տրամադրել ՏԱ մասին օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված տեղեկությունների հրապարակման ակտիվ հղումները: Միևնույն ժամանակ, անկախ նշված հարցման պատասխանը ստանալու հանգամանքից՝ ուսումնասիրվել են տեղեկություն տնօրինողների կայքերը՝ պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների առկայությունը, թարմությունը և մատչելիությունը կայքերում ստուգելու համար:

Գնահատման իրականացման պահին բոլոր մարզպետարանների կայքերը պարբերաբար անհասանելի են եղել, ուստի, մարզպետարանների տրամադրած հղումների ուսումնասիրությունն իրականացվել է այնքանով, որքանով կայքերը հասանելի են եղել:

Արդյունքներն ամփոփ

Գնահատման է ենթակա, թե որքանով են ՏԱ մասին օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված տեղեկությունները բոլորը միաժամանակ առկա տեղեկություն տնօրինողի կայքերում, և եթե առկա են, ապա որքանով են մատչելի ու թարմացված:

- Նշվածի համատեքստում պետք է նախ առանձնացնել մարզպետարանները. մարզպետարանների կայքերը Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կայքի հետ միասին մշակվել և ստեղծվել են Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից 2010 թվականին, և դրանցում ի սկզբանե առանձնացված է եղել տեղեկատվության ազատության վերաբերյալ «Դիմեք մեզ» բաժինը՝ իր համապատասխան ենթաբաժիններով: Սույն գնահատման ընթացքում իրականացված կայքերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ մարզպետարանների կայքերը որպես կանոն պահպանել են իրենց կառուցվածքը, այդ թվում՝ «Դիմեք մեզ» բաժինն իր համապատասխան ենթաբաժիններով: Ընդ որում, մարզպետարանների կայքերի նշված բաժինները թեև որոշ թերություններով, սակայն պարունակում են ՏԱ մասին օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված համեմատաբար ամբողջական տեղեկություններ: Օրինակ, ի տարբերություն տեղեկություն տնօրինող մյուս մարմինների՝ մարզպետարանների կայքերում հրապարակված տեղեկությունները հիմնականում թարմացված են:

Արդյունքում, թեև մարզպետարանները հարցմանն ի պատասխան ներկայացրել են ՏԱ մասին օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված տեղեկությունների հրապարակման տարբեր հղումներ, սակայն մարզպետարաններում պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունները հիմնականում հնարավոր է գտնել տեղեկատվության ազատության վերաբերյալ կայքի համապատասխան բաժիններում՝ առանձին էլեկտրոնային փաստաթղթերով կամ կայքի այլ բաժիններին հղումներով (տեսանելիության չափանիշ):

Մարզպետարանների կայքերում տեղեկատվության ազատության ոլորտում պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունները որպես կանոն կրկնում են ՏԱ մասին օրենքի

բառակազմը, ուստի հեշտ է տեղեկությունը համադրել ՏԱ մասին օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված տեղեկությունների հետ (հասկանալիության չափանիշ):

Պետք է նշել, որ տեղեկությունները միշտ չէ, որ հրապարակված են միևնույն ձևաչափով: Այդուհանդերձ, կայքերում տեղեկություններն ուսումնասիրելիս անհրաժեշտ չեն եղել հատուկ և հանրայնորեն ոչ հասանելի ծրագրեր կամ գործիքներ, շատ դեպքերում տեղեկությունները ներբեռնելի և պատճենելի են, ինչպես նաև հնարավոր է տեղեկություններում որոնում իրականացնել՝ կրկին առանց հատուկ ծրագրերի կիրառման (վերածգտագործման ենթակա լինելու չափանիշ): Բաց տվյալների ձևաչափը հիմնականում պահպանված չէ:

Նշենք նաև, որ գնահատման իրականացման ամբողջ ընթացքում մարզպետարանների կայքերը պարբերաբար և տևական ժամանակով հասանելի չեն եղել, ինչն ինքնին առարկայագուրկ է դարձնում կայքերում պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների մատչելիության վերաբերյալ ցանկացած դրական արձանագրում:

Մարզպետարաններից բացի՝ մնացած 29 տեղեկություն տնօրինողներից միայն 3-ի (Արդարադատության, Էկոնոմիկայի և Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունների) կայքերում է, որ ՏԱ մասին օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված տեղեկություններին անդրադարձ կա կայքերի՝ տեղեկատվության ազատության վերաբերյալ բաժնում:

- Արդարադատության նախարարության կայքում գլխավոր էջում առկա է «Տեղեկատվական կետորոն» հիմնական բաժինը, որում ներկայացված են ՏԱ վերաբերյալ ենթաբաժիններ, որոնցից մեկում՝ «ՏԱ օրենքն ու տեղեկատվություն տրամադրելու կարգը» ենթաբաժնում (տեսանելիության չափանիշ) ի թիվս այլևի արտատպված են ՏԱ մասին օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված (հասկանալիության չափանիշ) 13 խումբ տեղեկություններից 12-ը (բացակայում է տեղեկությունների մշակման կամ ստացման աղբյուրների վերաբերյալ կետը), ընդ որում, առկա 12 խումբ տեղեկություններից 10-ի դեպքում առկա են ակտիվ հղումներ, որոնցից 9-ն ուղղորդում են կայքի՝ համապատասխան տեղեկությունը պարունակող էջ կամ հղում են անում համապատասխան էլեկտրոնային փաստաթղթին, և 1 ակտիվ հղում, որը պետք է ներկայացնե տեղեկությունները պարզաբանելու իրավասություն ունեցող անձի տվյալները, ուղղորդում է դեպի կայքի՝ գոյություն չունեցող էջ: 12 խումբ տեղեկություններից 2-ը (հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) աշխատանքները և ծառայությունները, ինչպես նաև տնօրինվող տեղեկությունների ցանկը և դրանց տնօրինման կարգը) ակտիվ հղումներ կամ բովանդակային որևէ հավելյալ տեղեկություն չեն պարունակում (հասանելիության չափանիշ):

Բացի վերոնշյալը՝ հրապարակված տեղեկությունների ամբողջականության վերաբերյալ առկա են նաև հետևյալ դիտարկումները: Այսպես, բացի այն, որ պարտադիր հրապարակման ենթակա որոշ տեղեկություններ (դրանց ակտիվ հղումները) բացակայում են, թերի է նաև պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները ներկայացնող տեղեկությունը: Մասնավորապես, նշված տեղեկությունները ներկայացնող ակտիվ հղումն ուղղորդում է նախարարության կառուցվածքի էջ, որտեղ ներկայացված են ստորաբաժանումների ղեկավարների անունները և ազգանունները, ինչպես նաև աշխատանքային հեռախոսահամարները և էլեկտրոնային փոստի հասցեները: Արդյունքում, նախարարության կառուցվածքի էջում ներկայացված տեղեկությունը չի ներառում օրենքով պահանջվող տեղեկությունների ամբողջ շրջանակը (հասանելիության չափանիշ):

Արդարադատության նախարարության կայքում հրապարակված՝ ՏԱ մասին օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված տեղեկությունների թարմացվածության կապակցությամբ առկա է հետևյալ դիտարկումը. գնահատման տվյալ բաժինն ամփոփելիս նախարարության

կայքում ներկայացված պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունները հիմնականում ամբողջությամբ թարմացված են, վերաբերում են 2021 թվականին: Այդուհանդերձ, գնահատման շրջանակում իրականացված նախնական ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ նախարարության կայքում որոնողական համակարգերի համար հասանելի է պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները ներկայացնող տեղեկությունը ոչ թե նախարարության կառուցվածքին հղմամբ, այլ օրենքով սահմանված տվյալների շրջանակին համապատասխանող առանձին փաստաթղթով միաժամանակ, նշված փաստաթուղթը թարմացված չէ, օրինակ, դրանում որպես նախարար դեռևս նշված է Արտակ Չեյնայանը, ինչպես նաև փաստաթղթում ներկայացված պաշտոնները այլևս չգրադեցնող այլ անձինք՝ իրենց կրթության և մասնագիտության մասին տեղեկություններով (հասանելիության չափանիշ):

Արդարադատության նախարարության կայքում ՏԱ մասին օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված տեղեկությունները, այնքանով, որքանով ներկայացված են կայքի տարբեր բաժիններին հղումներով՝ միշտ չէ, որ հրապարակված է միևնույն ձևաչափով: Այդուհանդերձ, նախարարության կայքում տեղեկություններն ուսումնասիրելիս անհրաժեշտ չեն եղել հատուկ և հանրայնորեն ոչ հասանելի ծրագրեր կամ գործիքներ, շատ դեպքերում տեղեկությունները ներբեռնելի և պատճենելի են, ինչպես նաև հնարավոր է տեղեկություններում որոնում իրականացնել՝ կրկին առանց հատուկ ծրագրերի կիրառման (օգտագործման ենթակա լինելու չափանիշ):

- Եկոնոմիկայի նախարարության կայքում գլխավոր էջում առկա է «Տեղեկատվություն» հիմնական բաժինը, որի «Տեղեկատվության տրամադրում» ենթաբաժնում (տեսանելիության չափանիշ) ի թիվս այլևի արտատպված են ՏԱ մասին օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված (հասկանալիության չափանիշ) 13 խումբ տեղեկությունները, ընդ որում, դրանցից միայն 4-ի դեպքում առկա են ակտիվ հղումներ: Մնացած 9 խումբ տեղեկությունները ակտիվ հղումներ կամ բովանդակային որևէ հավելյալ տեղեկություն չեն պարունակում (հասանելիության չափանիշ):

Բացի վերոնշյալը՝ առկա է նաև ակտիվ հղմամբ հրապարակված տեղեկությունների ամբողջականության խնդիր. մասնավորապես, թերի է պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները ներկայացնող տեղեկությունը, քանի որ ինչպես Արդարադատության նախարարության դեպքում, Եկոնոմիկայի նախարարության կայքում նույնպես նշված տեղեկությունները ներկայացնող ակտիվ հղումն ուղղորդում է նախարարության կառուցվածքի էջ, որտեղ ներկայացված տեղեկությունը չի ներառում օրենքով պահանջվող տեղեկությունների ամբողջ շրջանակը (հասանելիության չափանիշ):

Նախարարության կայքում ներկայացված պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունները հիմնականում թարմացված են, վերաբերում են 2021 թվականին, սակայն, ոչ ամբողջությամբ: Օրինակ, բյուջեն ներկայացնող ակտիվ հղմամբ ներկայացված տեղեկությունները և փաստաթղթերը վերաբերում են գերազանցապես մինչև 2020 թվականը ներառող տեղեկություններ:

- Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կայքում գլխավոր էջում առկա է «Տեղեկատվություն» հիմնական բաժինը, որում ներկայացված «Տեղեկատվություն տրամադրելու կարգ» ենթաբաժնում (տեսանելիության չափանիշ) ի թիվս այլևի արտատպված են ՏԱ մասին օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված (հասկանալիության չափանիշ) 13 խումբ տեղեկություններից 12-ը (բացակայում է տեղեկությունների մշակման կամ ստացման աղբյուրների վերաբերյալ կետը), ընդ որում, առկա 12 խումբ տեղեկություններից 9-ի դեպքում առկա են ակտիվ հղումներ, որոնցից 7-ն ուղղորդում են կայքի՝ համապատասխան

տեղեկությունը պարունակող էջ կամ հղում են անում համապատասխան էլեկտրոնային փաստաթղթին, 1 ակտիվ հղում, որը պետք է ներկայացնեն գրավոր հարցումների ձևերը և դրանք լրացնելու վերաբերյալ խորհրդատվական ցուցումները, ուղղորդում է դեպի կայքի՝ գոյություն չունեցող էջ և 1 ակտիվ հղում, որը պետք է ներկայացնեն աշխատանքների և ծառայությունների բնագավառում գնագոյացման կարգը, գները (սակագները), ուղղորդում է դեպի գնումների էջ: 12 խումբ տեղեկություններից 3-ը (հանրության համար իրականացվող (իրականացման ենթակա) աշխատանքները, հասարակական միջոցառումների ծրագրերը և ծառայությունները, ինչպես նաև տնօրինվող տեղեկությունների ցանկը և դրանց տնօրինման կարգը) ակտիվ հղումներ կամ բովանդակային որևէ հավելյալ տեղեկություն չեն պարունակում (հասանելիության չափանիշ):

Թերի է նաև պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, կրթությունը, մասնագիտությունը, պաշտոնը, աշխատանքի վայրի հեռախոսային համարները, էլեկտրոնային փոստի հասցեները ներկայացնող տեղեկությունը, քանի որ նշված տեղեկությունները ներկայացնող ակտիվ հղումն ուղղորդում է նախարարության կառուցվածքի էջ, որտեղ ներկայացված են ստորաբաժանումների ղեկավարների մասին տվյալները: Արդյունքում, նախարարության կառուցվածքի էջում ներկայացված տեղեկությունը չի ներառում օրենքով պահանջվող տեղեկությունների ամբողջ շրջանակը (հասանելիության չափանիշ):

Նախարարության կայքում ներկայացված պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունները հիմնականում թարմացված են, վերաբերում են 2021 թվականին: Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կայքում ՏԱ մասին օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված տեղեկությունները, այնքանով, որքանով ներկայացված են կայքի տարբեր բաժիններին հղումներով՝ միշտ չէ, որ հրապարակված է միևնույն ձևաչափով: Թեև նախարարության կայքում տեղեկություններն ուսումնասիրելիս հիմնականում անհրաժեշտ չեն եղել հատուկ և հանրայնորեն ոչ հասանելի ծրագրեր կամ գործիքներ, իսկ տեղեկությունները շատ դեպքերում ներբեռնելի կամ պատճենելի են, ինչպես նաև հնարավոր է տեղեկություններում որոնում իրականացնել՝ կրկին առանց հատուկ ծրագրերի կիրառման (օգտագործման ենթակա լինելու չափանիշ), սակայն այս առումով առկա է հետևյալ դիտարկումը: Այդուհանդերձ առկա է որոշակի տեխնիկական խնդիր, օրինակ, շրջակա միջավայրի վրա ներգործության մասին տեղեկություն ներկայացնող հղումն ի սկզբանե որևէ էջ չի ուղղորդում, իսկ հղմամբ ներկայացված համապատասխան տեղեկությանը ծանոթանալու համար նախ անհրաժեշտ է հղումը բացել նոր էջում (նոր պատուհանում), ապա հաստատել հիպերհղումը, ինչից հետո նոր կներբեռնվի նախարարության՝ շրջակա միջավայրի վրա ներգործության մասին տեղեկություն պարունակող փաստաթուղթը:

- **Տասը մարզպետարաններից և վերոնշյալ երեք նախարարություններից բացի մնացած 27 կայքերում ՏԱ մասին օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված տեղեկությունները հնարավոր չի եղել ստանալ տեղեկատվության ազատության վերաբերյալ մի բաժնի միջոցով,** այդ տեղեկություններն անհրաժեշտ է եղել որոնել կայքի տարբեր բաժիններում, ներառյալ՝ այնպիսի ծավալուն և արագ համալրվող բաժիններում, ինչպիսին նորությունների կամ հայտարարությունների բաժիններն են: Հետևաբար, նշված 27 տեղեկություն տնօրինողների կայքերում տեղեկությունների հրապարակումը չի կարող գնահատվել որպես ՏԱ մասին օրենքով սահմանված՝ տեղեկություններ տրամադրելու մատչելիության և հրապարակայնության սկզբունքներին համապատասխան հենց ՏԱ մասին օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պարտականության պատշաճ կատարում:

Եզրակացություն

Տեղեկություն տնօրինողների կողմից տեղեկության պրոակտիվ հրապարակման պարտականության կատարման պրակտիկան խնդրահարույց է: Տեղեկություն տնօրինողները, որոշ բացառություններով, պատշաճ չեն կատարում ՏԱ մասին օրենքով նախատեսված

տեղեկությունները պաշտոնական կայքերում պարտադիր հրապարակման իրենց պարտականությունը, այդ թվում.

- պաշտոնական կայքերում չեն հրապարակվում օրենքով նախատեսված բոլոր տեղեկությունները՝ անկախ նրանից, թե որքանով է ընթացիկ գործունեության իրականացման շրջանակում կայքի այս կամ այն բաժնում դիպվածային հրապարակվում ՏԱ մասին օրենքով սահմանված պարտադիր հրապարակման ենթակա տեղեկություններին համադրելի տեղեկություն,
- հրապարակված տեղեկություններն ամբողջական չեն: Ընդ որում, ոչ միայն հրապարակված չէ ՏԱ մասին օրենքով սահմանված այս կամ այն տեղեկությունը, այլ նաև հրապարակված տեղեկությունները չեն պարունակում օրենքով նախատեսված բոլոր տվյալները,
- հրապարակված տեղեկությունները թարմացված չեն. անտեսվում է պարտադիր հրապարակման ենթակա տեղեկություններում կատարված փոփոխությունները դրանք կատարվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում հրապարակելու պահանջը: Բյուջեների, կատարողականների, հաշվետվությունների, պաշտոնական գործուղումների, գնումների, դրամաշնորհների, թափուր աշխատատեղերի և այլ կենսական հարցերի վերաբերյալ տեղեկություններն ամբողջական, թարմացված և մատչելի չեն,
- հրապարակված տեղեկությունները մի կողմից ներկայացված են կայքի տարբեր վերաբերելի բաժիններում, մյուս կողմից հասանելի չեն տեղեկատվության ազատությանը վերաբերող բաժնում, այդ թվում՝ ակտիվ հղումների միջոցով, ուստի դժվար է գտնել դրանք կայքում պարզ որոնման միջոցով,
- հրապարակված տեղեկությունները համակարգված չեն, տեղեկատվության ազատությանը վերաբերող բաժնում ներկայացված չլինելու և կայքի տարբեր բաժիններում հրապարակված լինելու պայմաններում հաճախ կայքի բաժինների և ենթաբաժինների անվանումներից հասկանալի չէ, որ հենց այդ բաժնում է հրապարակված ՏԱ մասին օրենքով հրապարակման ենթակա տեղեկությունը,
- հրապարակված տեղեկությունը ներկայացված է տարբեր ձևաչափերով, պիտանի չէ համեմատական վերլուծություններ իրականացնելու համար, թեև գերազանցապես ներբեռնելի է, սակայն հաճախ բովանդակությունը պատճենելի չէ կամ հնարավոր չէ բովանդակությունում որոնում կատարել, տեղեկություն տնօրինողները պատրաստ չեն կայքերի տեխնիկական խափանումներին, տեխնիկական խնդիրները տևական ժամանակ երկարատև լուծում չեն ստանում:
- Պաշտոնական կայքերը չունեն բովանդակային, կառուցվածքային և ոճային միասնականություն: Դրանց ստեղծման և մշակման ընդհանուր միասնական և արդիական ձևաչափ առկա չէ: Պետական կառավարման մարմինների պաշտոնական կայքերի դոմեյնների անվանումները նույնպես միասնական կամ նույն տրամաբանությամբ ու մոտեցմամբ չեն մշակված: Պետական կառավարման մակարդակում միայն մարզպետարանների կայքերն ունեն որոշակի ստանդարտ ձևաչափ, միասնական կառուցվածք և վեբ դիզայն:
- Պաշտոնական կայքերում հրապարակված փաստաթղթերը չեն համապատասխանում բաց տվյալներ ձևաչափին: Այս պատճառով դժվարանում կամ անհնարին է դառնում տարբեր փաստաթղթերի համադրումը, վերլուծումը, դրանցում առկա տեղեկատվության հետ աշխատանքը:

Բ.7. ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձի ինստիտուտը

ՏԱ մասին օրենքի 12-րդ հոդվածի 5-ին մասի համաձայն «Տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝ (...) 5) նշանակել տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձին»: ՏԱ մասին օրենքի 13-րդ հոդվածն ամբողջությամբ վերաբերում է ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձին և սահմանում է, որ «1. Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձը կարող է լինել տեղեկատվություն տնօրինողի նշանակած պաշտոնատար անձը կամ տեղեկատվություն տնօրինողի ղեկավարը»: Նույն հոդվածը սահմանում է նաև ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձի լիազորությունների շրջանակը՝ նշելով, որ ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձը.

- ապահովում է տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողի պարտականությունների իրականացումը.
- տեղեկություն փնտրողին մատչելի ձևով բացատրում է տեղեկության տրամադրման կարգը, պայմանները և ձևերը.
- մշակում է ստացված հարցումների վիճակագրական և ամփոփ տվյալները:


ՏԱ մասին օրենքի վերոնշյալ դրույթներն առարկայացել են N 1204-Ն որոշմամբ, որը նաև սահմանել է, որ ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձի պարտականությունները նշվում են վերջինիս՝ որպես տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձ նշանակելու մասին համապատասխան իրավական ակտում կամ պարտականությունները սահմանող այլ իրավական ակտում, ինչպես նաև սահմանել է, որ նրա հետ կապ հաստատելու տվյալները տեղեկություն տնօրինողի պաշտոնական կայքում հրապարակելու պահանջը (1204-Ն որոշման հավելված 1-ի 2-5 կետեր):

Հաշվի առնելով ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձին օրենքով վերապահված լիազորությունները՝ կարևոր է նաև ՏԱ ոլորտի վերաբերյալ ՏԱ պատասխանատուների գիտելիքի հարցը: Նախկինում տարբեր վերլուծություններով, ծրագրերով և ռազմավարական փաստաթղթերով ընդգծվել է ՏԱ համար պատասխանատուների ուսուցման՝ ՏԱ իրավունքի և ՏԱ ոլորտի օրենսդրության կիրառման պրակտիկայի վերաբերյալ բավարար գիտելիքի և հմտությունների կարևորությունը ՏԱ իրավունքի պատշաճ ապահովման համար: Օրինակ, ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձանց ուսուցման հարցը կարևորվել էր 2016-2017 թվականներին մշակված Տեղեկատվության ազատության ոլորտի արդիականացման հայեցակարգում (դա ՏԱ ոլորտի վերաբերյալ նման բնույթի վերջին համապարփակ փաստաթուղթն էր), ինչպես նաև ՀՀ կառավարության 2016 թվականի գործունեության միջոցառումների 94-րդ կետի հիմնավորումներում (ՀՀ կառավարության 14.01.2016թ.-ի N 131-Ն որոշման 3-րդ հավելված) նախատեսվել էր, որ ի թիվս այլնի անհրաժեշտ է նաև իրականացնել պետական կառավարման մարմինների տեղեկատվության ազատության պատասխանատուների վերապատրաստումներ՝ նոր ընդունված իրավական կարգավորումների գործնական կիրառման հմտություններ և գիտելիք փոխանցելու նպատակով: Գնահատման շրջանակում 39 տեղեկություն տնօրինողներին ներկայացված հարցմամբ ի թիվս այլնի պահանջվել էր հայտնել՝ արդյոք տեղեկություն տնօրինողն ունի ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձ և եթե այո, ապա ինչ ակտով է նշանակված (նշանակման ակտի պատճենը): Հարցմամբ նաև պահանջվել էր տեղեկություն այն մասին՝ արդյոք ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձը մասնակցել է ՏԱ վերաբերյալ որևէ դասընթացի կամ վերապատրաստման և եթե այո, ապա քանի վերապատրաստման և երբ:

Հարցմանը պատասխանած 39 տեղեկություն տնօրինողներից 37-ը հայտնել են, որ ունեն ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձ, իսկ 2-ը (Քաղաքաշինության կոմիտեն և Գյումրու քաղաքապետարանը) հայտնել են, որ չունեն:

Աղյուսակ 9

ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձը (նշանակված)




Նշենք, որ ՏԱ պատասխանատու պաշտոնատար անձ նշանակված չլինելու դեպքում ՏԱ պատասխանատու պաշտոնատար անձը տեղեկություն տնօրինողի ղեկավարն է: Հետևաբար, Քաղաքաշինության կոմիտեի և Գյումրու քաղաքապետարանի պատասխանները ՏԱ պատասխանատու պաշտոնատար անձ չունենալու վերաբերյալ նշանակում են, որ տեղեկություն տնօրինող այդ մարմիններում ՏԱ պատասխանատու նշանակված չէ, ուստի ՏԱ պատասխանատուն համապատասխանաբար կոմիտեի և համայնքի ղեկավարներն են:

Ըստ հարցման պատասխանների և կայքերի ուսումնասիրության՝ ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձի նշանակված 37 տեղեկություն տնօրինողներից 30-ում (81.1%) ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձ է մամուլի քարտուղար-Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության/բաժնի կամ անկախ անվանումից համադրելի ստորաբաժանման (հանրային կապերի բաժնի, հանրության հետ կապերի բաժնի, իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժնի) պետը: Տեղեկություն տնօրինողներից 2-ում (5.4%) (Ազգային անվտանգության ծառայությունում և Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեում) ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձը գլխավոր քարտուղար/ աշխատակազմի ղեկավարն է, 1-ում (2.7%) (Երևանի քաղաքապետարանում)՝ աշխատակազմի քարտուղարի տեղակալն է, 2-ում (5.4%) (Պետական վերահսկողական ծառայությունում և Սյունիքի մարզպետարանում)՝ տեղեկություն տնօրինողի ղեկավարի օգնականը/խորհրդականը, և ևս 2-ում (5.4%) (Ոստիկանությունում և Վիճակագրական կոմիտեում) այլ ստորաբաժանման ղեկավարը (համապատասխանաբար Գործավարության և գաղտնիության ռեժիմի վարչության պետը և Վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի պետը):

Աղյուսակ 10

ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձանց պաշտոնները


ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձանց պաշտոնները



Տեղեկություն տնօրինողներից 30-ի (77%) դեպքում առկա է ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձի նշանակման վերաբերյալ իրավական ակտ, ընդ որում նշված 30 մարմիններից 1-ը (Ազգային անվտանգության ծառայությունը) հայտնել է, որ ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձը նշանակվել է գաղտնի հրամանով: Մնացած 9 տեղեկություն տնօրինողի (23%) դեպքում համապատասխան իրավական ակտ առկա չէ կամ հնարավոր չի եղել գտնել տեղեկություն տնօրինողների կայքերում: Ընդ որում, նշված 9 մարմիններից մեկը՝ Շուկայի վերահսկողության տեսչական մարմինը, որպես ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձի նշանակման վերաբերյալ իրավական ակտ վկայակոչել է աշխատանքային պայմանագրի մի դրույթ, որը բովանդակային իմաստով որևէ կերպ ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձի նշանակմանը չի վերաբերում:

Աղյուսակ 11

ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձի նշանակման իրավական ակտի




առկայությունը

ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձի՝ ՏԱ թեմայով դասընթացի կամ վերապատրաստմանը մասնակցության վերաբերյալ հարցին բովանդակային պատասխան տրամադրել է 35 տեղեկություն տնօրինող: Դրանցից 22-ը (63%) հայտնել են, որ ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձը մասնակցել է ՏԱ վերաբերյալ դասընթացի կամ վերապատրաստման, 5-ը (14%) կամ չեն տրամադրել համապատասխան տեղեկություն կամ հայտնել են, որ ՏԱ պատասխանատուն նշված թեմայով դասընթացի կամ վերապատրաստման չի մասնակցել, ևս 8-ը (23%) նշել են ՏԱ համար պատասխանատուի կողմից այնպիսի միջոցառումների մասնակցության մասին, որոնք կամ վերաբերում են տեղեկատվության ազատությանն անուղղակի առնչվող այլ թեմայի (օրինակ, մեդիագրագիտություն կամ փաստերի ստուգում և այլն), կամ թեև վերաբերում են ՏԱ ոլորտին, սակայն իրենց բնույթով դասընթաց կամ վերապատրաստում չեն (աշխատաժողով, քննարկում և այլն):

Աղյուսակ 12

ՏԱ պատասխանատուների մասնակցությունը ՏԱ թեմայով ուսուցումների

ՏԱ պատասխանատուների մասնակցությունը ՏԱ թեմայով ուսուցումների



Հարցմամբ տեղեկություն տնօրինողներից ակնկալվել էր նաև տեղեկություն ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձի մասնակցած դասընթացների և վերապատրաստումների քանակի և ժամանակի վերաբերյալ: Այս տեղեկությունը կարևոր է այնքանով, որքանով հնարավորություն է տալիս եզրահանգումներ անել այն մասին, թե որքանով են ՏԱ պատասխանատուները տեղյակ ՏԱ ոլորտի արդի զարգացումների, ՏԱ իրավունքի կիրառման պրակտիկայի զարգացման ուղղությունների վերաբերյալ, որքանով հաճախ են թարմացնում իրենց պրակտիկ գիտելիքները: Այսպես, տեղեկատվության ազատության վերաբերյալ դասընթացների կամ վերապատրաստումների մասնակցության վերաբերյալ տեղեկություն տրամադրած 22 տեղեկություն տնօրինողներից միայն 3-ն են նշել դասընթացների և վերապատրաստումների այնպիսի ժամկետ, որը վերաբերում է նախորդ 3 տարիներին, ևս 14-ը դասընթացների և վերապատրաստումների կոնկրետ տարեթվեր չեն նշել, սակայն հայտնել են ՏԱ համար պատասխանատուի կողմից ՏԱ թեմայով ուսուցումներին պարբերաբար մասնակցած լինելու մասին, ինչն ինքնին ենթադրում է մի քանի ուսուցման մասնակցություն՝ տարբեր ժամանակահատվածներում: Մնացած 5 տեղեկություն տնօրինողներ նշել են նախորդ 3 տարիներից ավելի վաղ ՏԱ դասընթացների կամ վերապատրաստումների մասնակցության մասին:

Եզրակացություն

Այսպիսով, տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձանց վերաբերյալ ուսումնասիրված տեղեկությունները վկայում են, որ տեղեկություն տնօրինողները որպես կանոն նշանակում են ՏԱ համար պատասխանատու պաշտոնյաներ: Ընդ որում, գերազանցապես ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձ է նշանակվում տեղեկություն տնօրինողի մամուլի քարտուղար-տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության/բաժնի կամ համադրելի ստորաբաժանման պետը, որն ի պաշտոնե կարող է համապատասխան իրավական ակտով օժտվել տեղեկատվության ազատության ոլորտում իր գործառույթներն իրականացնելու համար բավարար լիազորություններով, այդ թվում անհրաժեշտ որոշումներ կայացնելու, տեղեկություն տնօրինողի մոտ ՏԱ ոլորտում առկա վիճակի մասին տեղեկություններ ստանալու, ՏԱ վիճակի բարելավման վերաբերյալ պարտադիր քննարկման ենթակա առաջարկություններ ներկայացնելու համար: Արդյունքում,

- ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձի գործառույթների իրականացման համատեքստում հիմնական խնդիրներից մեկը կապված էն պրակտիկայում ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձի համար ՏԱ ոլորտում իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ բարենպաստ պայմաններ ստեղծելու, տեխնիկական և կազմակերպչական գործիքներով օժտելու հետ:
- ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձի գործառույթների իրականացման համատեքստում հիմնական խնդիրներից է նաև ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձի համար ՏԱ ոլորտում իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ տեղեկությունների բացակայությունը, նրա բավարար կարգավիճակի և ներքին համակարգման պակասը. օրինակ, ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձը հաճախ չի կարողանում տեղեկություն տնօրինողի այլ ստորաբաժանումներից ճշտել և ժամանակին ստանալ անհրաժեշտ տեղեկությունը,
- ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձանց գիտելիքը ՏԱ ոլորտում բավարար մակարդակի չէ, չեն իրականացվում վերապատրաստումներ՝ ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձանց գիտելիքը ՏԱ ոլորտում թարմացնելու և ամբողջացնելու համար:

Բաժին Գ. Տեղեկատվության ազատության ոլորտում պաշտոնական միասնական վիճակագրությունը

Գ.1. ՏԱ վիճակագրության վարման և հրապարակման պարտականության կատարումը

Ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական և ամփոփ տվյալները ներառված են ՏԱ մասին ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ կետում՝ որպես պարտադիր հրապարակման ենթակա տեղեկություններ: ՏԱ հարցումների վիճակագրության հրապարակմանն անդրադառնում է նաև Կառավարության N1204 որոշումը. Կարգն ամրագրում է, որ ՏԱ հարցումների վիճակագրությունը վարվում է ըստ հարցումների բովանդակության: Համաձայն Որոշման 1-ին հավելվածի 8-րդ կետի՝ «Վիճակագրությունն իրականացվում է ըստ բանավոր, գրավոր, վերահասցեագրված, մերժված և բավարարված հարցումների: Վիճակագրական տվյալներն առնվազն պարունակում են ստացված հարցումների ընդհանուր թիվը և տեսակը: Ամենամյա վիճակագրական տվյալները հրապարակվում են տեղեկատվություն տնօրինողի պաշտոնական կայքում»:

Այսպիսով, հրապարակվող ամփոփ վիճակագրությունը պետք է առնվազն պարունակի հետևյալ տվյալները.

- Ստացված հարցումների ընդհանուր թիվը,
- Ստացված բանավոր հարցումների թիվը,
- Ստացված գրավոր հարցումների թիվը,
- Վերահասցեագրված հարցումների թիվը,
- բավարարված հարցումների թիվը,
- մերժված հարցումների թիվը,
- մերժումների հիմքերը:

Վիճակագրությունը վարելու պարտականությունը դրված է տեղեկատվության ազատության համար պատասխանատու անձի վրա:

Ստացված հարցումների վիճակագրության հրապարակումն ինքնանպատակ չէ: Հարցումների թվաքանակն ու բովանդակային վիճակագրությունը կարող է մարմինն օգնել առավել արդյունավետ կազմակերպել պրոակտիվ հրապարակայնության գործընթացը, նախանշել առաջնահերթությունները և ըստ այդմ բարեփոխել մշակված/իրականացվող քաղաքականությունը:

Չնայած իրավական հստակ պահանջի առկայության՝ մինչ օրս պետական մարմինների մեծ մասն այս վիճակագրությունը ներկայացնում է մարմինն հասցեագրված ընդհանուր դիմումների տեսքով՝ չտարանջատելով տեղեկություն ստանալու հարցումները դիմումներից և բողոքներից: Առանձնացված վիճակագրություն վարելու և հրապարակելու նախադրյալներից է նաև ստացված հարցումները մարմնի ներքին փաստաթղթաշրջանառության համակարգում առանձին դասակարգելը, ինչը ոչ բոլոր մարմիններում է արվում: Շատ դեպքերում ստացված դիմումները և բողոքները տեղեկություն ստանալու հարցումներից առանձնացված չեն գրանցում «Մալբերի» փաստաթղթաշրջանառության ներքին համակարգում, ինչն էլ հետագայում թույլ չի տալիս առանձին ստանալ տեղեկություն ստանալու հարցումների վիճակագրական պատկերը: Կայքերում հրապարակված վիճակագրական տվյալները միայն հաստատում են դա. պաշտոնական կայքերում հիմնականում ներկայացված են ընդհանուր թվեր՝ տեղեկություն ստանալու հարցումներն առանձնացված չեն:

Գնահատման մեջ ներառված տեղեկություն տնօրինողներին ներկայացված հարցմամբ ի թիվս այլնի պահանջվել էին տեղեկություններ հարցումների վիճակագրության վարման վերաբերյալ, մասնավորապես՝

- *Արդյո՞ք տեղեկություն տնօրինողը վարում է տեղեկություն ստանալու հարցումների առանձին վիճակագրություն, թե այն ներառված է քաղաքացիներից ստացված դիմումների ընդհանուր վիճակագրության մեջ:*

Տեղեկություն տնօրինողի՝ հարցումների վիճակագրություն վարելու պարտականությունը սահմանված է ՏԱ մասին օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և դրան փոխկապակցված՝ ինչպես նաև փոխկապակցված ՏԱ մասին օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 11-րդ կետով, 1204-Ն որոշման հավելված 1-ի 3-րդ կետի 3-րդ ենթակետով և նույն որոշման 8-րդ կետով: Ուստի, այս հարցը միտված է պարզելու՝ արդյոք տեղեկություն տնօրինողն իրականացնում է օրենքով սահմանված՝ հարցումների վիճակագրություն վարելու իր պարտականությունը:

- *Ո՞ր (ո՞ր պաշտոնյայի կամ բաժնի կամ վարչության) վրա է դրված վերոնշյալ վիճակագրությունը (եթե հարցումների վիճակագրությունն առանձին է վարվում, ապա հենց հարցումների վիճակագրությունը) վարելու պարտականությունը:*

ՏԱ մասին օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը հարցումների վիճակագրությունը վարելու պարտականությունը դնում է տեղեկություն տնօրինողի ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձի վրա: Նույնն արտացոլված է նաև 1204-Ն որոշման հավելված 1-ի 3-րդ կետի 3-րդ ենթակետում: Ուստի, այս հարցը միտված է պարզելու՝ արդյոք հարցումների վիճակագրությունն իրականացվում է իրավասու պաշտոնյայի կողմից:

- *Ինչպե՞ս (ի՞նչ աղբյուրներից) է ձևավորվում վերոնշյալ վիճակագրությունը (եթե հարցումների վիճակագրությունն առանձին է վարվում, ապա հենց հարցումների վիճակագրությունը), վիճակագրությունը վարող աշխատողը (կամ բաժինը կամ վարչությունը) ինչպե՞ս է ստանում հարցումների և դրանց պատասխանների քանակի վերաբերյալ կամ անհրաժեշտ այլ տեղեկությունները:*

Հարցումների վիճակագրության ձևավորման աղբյուրներն օրենքով սահմանված չեն, իսկ այս հարցին ի պատասխան տարբեր տեղեկություն տնօրինողների տրամադրած տեղեկությունների համադրության արդյունքում հնարավորություն է ստեղծվում գնահատելու հարցումների վիճակագրության հիմքում ընկած տվյալների հավաստիությունը:

- *Հրապարակվում է արդյո՞ք վերոնշյալ վիճակագրությունը (եթե հարցումների վիճակագրությունն առանձին է վարվում, ապա հենց հարցումների վիճակագրությունը): Եթե այո, ապա պահանջվել է տրամադրել համապատասխան հղումը:*


ՏԱ մասին օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 11-րդ կետը սահմանում է հարցումների վիճակագրության հրապարակման պարտադիր պահանջ: Ուստի, այս հարցի նպատակն է պարզել՝ արդյոք տեղեկություն տնօրինողներն իրականացնում են հարցումների վիճակագրությունը հրապարակելու իրենց պարտականությունը: Միաժամանակ, ՏԱ մասին օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 11-րդ կետը և 1204-Ն որոշման հավելված 1-ի 8-րդ կետը սահմանում են այն նվազագույն տվյալները, որոնք պետք է ներառվեն հարցումների վիճակագրությունում: Ուստի, այս հարցին ի պատասխան տարբեր տեղեկություն տնօրինողների տրամադրած տեղեկությունները հնարավորություն է ստեղծում գնահատելու հրապարակված վիճակագրության բովանդակության համապատասխանությունն օրենսդրության պահանջներին:

Ինչպես ցույց են տալիս հարցմամբ ստացված տվյալները՝ վիճակագրություն վարելու պրակտիկան խիստ բազմազան է, չկա միասնական մեթոդաբանություն և գործիքակազմ: Ընդհանուր առմամբ, գնահատման մեջ ներառված 39 տեղեկություն տնօրինողներից միայն 1-ի (2.6%-ի) ([Վրոդադադատության նախարարության](#)) ստացած հարցումների վիճակագրությունն է, որ միաժամանակ և՛ հրապարակված է, և՛ արդիական է (թարմացված), և՛ մշակվում է ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձի ղեկավարած ստորաբաժանման կողմից, և՛ պարունակում է այն նվազագույն տվյալները, որոնք պետք է ներառվեն հարցումների վիճակագրությունում: Հարցմանը պատասխանած մյուս 38 (97.4%) մարմիններն այս կամ այն կերպ խախտել են հարցումների վիճակագրության վարման որևէ կանոն (հրապարակված վիճակագրությունը չի համապատասխանել օրենսդրությանը կամ առհասարակ չեն հրապարակել հարցումների վիճակագրությունը):

Հրապարակված վիճակագրական տվյալները չեն պարունակում օրենքով սահմանված տվյալները, չեն հրապարակվում ժամանակին կամ բոլորին հասանելի եղանակով, հարցումների վիճակագրությունը չի վարվում դիմում-բողոքներից առանձնացված, վիճակագրությունը թարմացված չէ և այլն:

Աղյուսակ 13


Վիճակագրության վարման բոլոր կանոնների պահպանումը



Ընդհանուր առմամբ հարցումներին պատասխանած 39 մարմիններից 24-ը (61.5%) հայտնել են, որ վարում են հարցումների առանձնացված վիճակագրություն, իսկ 15-ը (38.5%) հայտնել են, որ չեն վարում:

Աղյուսակ 14

Հարցումների առանձնացված վիճակագրության առկայությունն ըստ մարմինների պատասխանների




Ընդհանուր առմամբ, գնահատման մեջ ներառված բոլոր 39 տեղեկություն տնօրինողների կայքերի ուսումնասիրության արդյունքում հարցումների հրապարակված վիճակագրություն հնարավոր է եղել գտնել տեղեկություն տնօրինող 21 մարմնի դեպքում (54%), 5-ի դեպքում (13%)

հնարավոր է եղել գտնել հարցումների որոշ թերի վիճակագրություն, իսկ 13 մարմնի (33%) դեպքում պաշտոնական կայքում հարցումների որևէ վիճակագրություն հնարավոր չի եղել գտնել:

Աղյուսակ 15


Հարցումների առանձնացված վիճակագրության առկայությունը պաշտոնական կայքում



Հարցումների վիճակագրություն հրապարակած 21 տեղեկություն տնօրինողներից 13-ի (62%) հրապարակած վիճակագրությունը թարմացված է՝ վերաբերում է 2021 թվականին ստացված հարցումներին, իսկ 8-ի (38%) վիճակագրությունը հնացած է՝ վերաբերում է 2020 կամ նախորդող տարիների հարցումներին:

Աղյուսակ 16

Հրապարակված վիճակագրության թարմացվածությունն ըստ վիճակագրություն հրապարակած 21 տեղեկություն տնօրինողների




Հարցումների վիճակագրություն հրապարակած 21 տեղեկություն տնօրինողներից միայն 1-ի (Արդարադատության նախարարության) հրապարակած վիճակագրությունն է պարունակել այն

Նվազագույն տվյալները, որոնք պետք է ներառվեն հարցումների վիճակագրությունում: **Մնացած 20 տեղեկություն տնօրինողների վիճակագրությունը (95%-ի դեպքում) չի պարունակել հարցումների վիճակագրությանը ներկայացվող բովանդակությունը:**

Աղյուսակ 17

Հրապարակված վիճակագրություններում օրենսդրությամբ սահմանված տվյալների առկայությունն ըստ վիճակագրություն հրապարակած 21 տեղեկություն տնօրինողների




Հարցումների վիճակագրությունը վարողի վերաբերյալ հարցին պատասխանած 33 տեղեկություն տնօրինողներից 15-ը (45.5%) հայտնել, որ ՏԱ հարցումների վիճակագրությունը վարում է ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձը (ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձի ղեկավարած ստորաբաժանումը): Եվս 3-ը (9%) հայտնել են, որ ՏԱ հարցումների հարցումների վիճակագրությունը վարելու պարտականությունը դրված է միաժամանակ և ՏԱ պատասխանատու պաշտոնատար անձի (ևրա ղեկավարած ստորաբաժանման) և այլ ստորաբաժանման վրա:

Միաժամանակ, տեղեկություն տնօրինողներից 14-ում (42.5%) հարցումների վիճակագրությունը վարելու պարտականությունը դրված է ոչ տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձի (ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձի ղեկավարած ստորաբաժանման) վրա: 1 դեպքում (3%) պատասխանից միանշանակ պարզ չի եղել՝ արդյոք հարցումների վիճակագրությունը վարելու պարտականությունը դրված է ՏԱ պատասխանատու պաշտոնատար անձի (ևրա ղեկավարած ստորաբաժանման) վրա, թե՛ ոչ: Մնացած 6 տեղեկություն տնօրինողներն իրենց պատասխանում այս հարցին չեն անդրադարձել, իսկ 1-ը հարցումն անպատասխան է թողել:

Աղյուսակ 18

Վիճակագրությունը վարող պաշտոնատար անձը (ստորաբաժանումը) ըստ համապատասխան հարցին պատասխանած 33 տեղեկություն տնօրինողների

Վիճակագրությունը վարող պաշտոնատար անձր/ստորաբաժանումը



Այսպիսով՝

- Բոլոր 39 տեղեկություն տնօրինողներից միայն Արդարադատության նախարարության ստացած հարցումների վիճակագրությունն է, որ միաժամանակ և՛ հրապարակված է, և՛ արդիական է (թարմացված), և՛ մշակվում է ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձի ղեկավարած ստորաբաժանման կողմից, և՛ պարունակում է այն նվազագույն տվյալները, որոնք պետք է ներառվեն հարցումների վիճակագրությունում:
- Մնացած բոլոր նախարարություններից, կառավարությանը ենթակա մարմիններից, վարչապետին ենթակա մարմիններից մարզպետարաններից և քաղաքապետարաններից ոչ մեկը չի պահպանել տեղեկություն ստանալու հարցումների վիճակագրության վարման և հրապարակման բոլոր կանոնները միաժամանակ:⁵²

Եզրակացություն

Տեղեկություն տնօրինողի՝ տեղեկություն ստանալու հարցումների վիճակագրության վարման և հրապարակման պարտականության կատարումը պրակտիկայում չափազանց խնդրահարույց է: Տեղեկություն տնօրինողները հիմնականում չեն պահպանում տեղեկություն ստանալու հարցումների վիճակագրության վարման օրենսդրությամբ սահմանված կանոնները.

- չի վարվում ՏԱ հարցումների վիճակագրություն. տեղեկություն տնօրինողներից շատերն իրենց ներկայացված հարցմանն ի պատասխան հայտնել են (ըստ էության՝ պաշտոնապես հայտարարել են), որ չեն կատարում հարցումների վիճակագրություն վարելու իրենց պարտականությունը: Շրջակա միջավայրի նախարարությունն անգամ չէլ է, թե չունի հարցումների վիճակագրություն իրականացնելու պարտականություն և գործառույթ: Որոշ ղեկավարներ էլ տեղեկություն տնօրինողը հայտնել է հարցումների վիճակագրություն չվարելու մասին այն պարագայում, երբ համապատասխան վիճակագրությունը հրապարակված է այդ տեղեկություն տնօրինողի կայքում: Նշվածից բխում է, որ ՏԱ հարցումների վիճակագրություն չվարելը հիմնականում օրենքի պահանջի չիմացության արդյունք է.

⁵²Վիճակագրության վարման մասին տվյալները՝ ըստ տեղեկություն տնօրինողների, տե՛ս 3-րդ ավելված 6-ում:

- տեղեկություն ստանալու հարցումների վիճակագրությունը պատշաճ չի հրապարակվում,
- հարցումների հրապարակված վիճակագրությունները ժամանակին չեն թարմացվում (ևոր վիճակագրությունները ժամանակին չեն հրապարակվում),
- հարցումների վիճակագրությունը չի վարում ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձը կամ նրա ղեկավարած ստորաբաժանումը,
- չեն պահպանվում հարցումների վիճակագրության բովանդակության ներկայացվող պահանջները. հարցումների վիճակագրությունները չեն պարունակում է այն նվազագույն տվյալները, որոնք պետք է ներառվեն հարցումների վիճակագրությունում,
- հարցումների վիճակագրությունը հաճախ չի ներկայացնում տեղեկություն տնօրինողի ստացած տեղեկություն ստանալու հարցումների իրական պատկերը, քանի որ տեղեկություն տնօրինողները որպես ՏԱ մասին օրենքով սահմանված հարցում են ընկալում և հաշվառում այդպիսին չհանդիսացող հարցադրումները, դիմումները և տեղեկություն տնօրինողի կողմից իրականացված այլ կոմունիկացիաները: Օրինակ, սխալմամբ որպես հարցում կարող են որակվել տեղեկություն տնօրինողի թեժ գծին կատարված զանգերը կամ սոցիալական ցանցերով ներկայացված մեկնաբանությունները կամ հարցադրումները, որոնք դժվար է համարել ՏԱ մասին օրենքով սահմանված գրավոր, կամ անգամ բանավոր հարցում,
- մարմինները վիճակագրությունը հրապարակում են խիստ տարբեր ձևաչափերով, կառուցվածքով և կայքերի տարբեր բաժիններում, չկա տեղեկություն ստանալու հարցումների վիճակագրության մշակման և հանրայնացման մեկ ընդհանուր ձևաչափ, ինչն անհնար է դարձնում առկա տվյալների զգալի մասի համադրումը:
- Միաժամանակ, ՏԱ պետական լիազոր մարմնի բացակայության պայմաններում Հայաստանում չի վարվում և հրապարակվում տեղեկատվության ազատության միասնական և ամբողջական վիճակագրություն: Լիազոր մարմնի բացակայությունը նաև հանգեցնում է գործընթացի նկատմամբ վերահսկողության բացակայության: Լիազոր մարմնի դերը պետք է լինի նաև միասնական պրակտիկայի ձևավորումը խթանող մեկնաբանություններ մշակելը և տեղեկություն տնօրինողներին վիճակագրություն վարելու հմտություններ փոխանցելը:

Գ.2. Տեղեկություն ստանալու հարցումների պաշտոնական վիճակագրության ձևավորման աղբյուրները

Վիճակագրության ձևավորման աղբյուրների վերաբերյալ հարցին ի պատասխան տեղեկություն տնօրինողների մեծամասնությունը նշել է, որ վիճակագրության վարման հիմքում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգն է (հիմնականում խոսքը Mulberry փաստաթղթաշրջանառության համակարգի մասին է):

Այսպես, նշված հարցին բովանդակային պատասխան տրամադրած 35 տեղեկություն տնօրինողներից 25-ը հենց փաստաթղթաշրջանառության համակարգն է նշել որպես վիճակագրության վարման համար անհրաժեշտ տվյալների աղբյուր: Տեղեկություն տնօրինողները հաճախ մանրամասնել են, որ անկախ նրանից, թե հարցումն ինչ միջոցով է ստացվել (փոստով, էլեկտրոնային փոստով, e-request էլեկտրոնային հարցումների միասնական հարթակով, առձեռն)՝ ստացված հարցումը մուտք է արվում փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգ:

Մնացած 10 տեղեկություն տնօրինողներից 6-ը տվել են ընդհանրական պատասխան՝ նշելով, որ վիճակագրության աղբյուրը տարբեր միջոցներով ստացված հարցումներն են, 2-ը նշել են որ անհրաժեշտ տեղեկությունները ստացվում են ստորաբաժանումներից և ևս 2-ը նշել են, որ հարցումների վիճակագրության համար անհրաժեշտ տվյալները ստացվում են տեղեկություն տնօրինողի քարտուղարությունից:

Եզրակացություն

Տեղեկություն տնօրինողները նկարագրել են տեղեկություն ստանալու հարցումների վիճակագրության վարման տարբեր աղբյուրներ, ինչպես նաև միևնույն աղբյուրից վիճակագրության ձևավորման համար անհրաժեշտ տվյալները ստանալու տարբեր ընթացակարգեր, ինչից բխում է, որ տեղեկություն տնօրինողները չունեն հարցումների վիճակագրության ձևավորման համար անհրաժեշտ տվյալները ստանալու այնպիսի աղբյուր, որն ինքնին կերպիսովորեր վիճակագրության ամբողջականությունը և հավաստիությունը, այդ թվում.

- տեղեկություն տնօրինողները չունեն հարցումների վիճակագրության վարման համար անհրաժեշտ տվյալների ձևավորման ընդհանուր ձևաչափ (աղբյուր),
- տեղեկություն ստանալու հարցումների վիճակագրության համար Mulberry փաստաթղթաշրջանառության համակարգում առկա չեն այնպիսի գործիքներ, որոնք հնարավորություն կտան արտահանելու տեղեկություն ստանալու հարցումների վիճակագրության վարման համար անհրաժեշտ և օրենսդրությամբ պահանջված տեղեկությունները՝ բացառելով մարդկային գործոնի էական ազդեցությունը:

9.3. ՏԱ պաշտոնական վիճակագրության վարման ձևաչափը և ձևանմուշը

Գնահատման [9.1 ենթաբաժնի](#) եզրահանգումներում արդեն արձանագրել ենք, որ տեղեկություն տնօրինողները ամբողջությամբ չեն պահպանում հարցումների վիճակագրությանը ներկայացվող պահանջները. հարցումների վիճակագրությունները չեն պարունակում այն նվազագույն տվյալները, որոնք պետք է ներառվեն հարցումների վիճակագրությունում: Այս խնդրի լուծման կազմակերպչական միջոց կլինի հարցումների վիճակագրության վարման միասնական ձևանմուշը: Օրենքի պահանջներն արտացոլող վիճակագրության վարման ձևանմուշի առկայության դեպքում հարցումների վիճակագրության մշակումն իրականացնող ՏԱ պատասխանատու պաշտոնատար անձը, նման ձևանմուշը լրացնելիս ինքնաբերաբար կապահովի վիճակագրության վարումն օրենսդրության պահանջներին համապատասխան: Պետական կառավարման համակարգում ՏԱ ոլորտի միասնական վիճակագրություն ձևավորելու նպատակով առաջարկվում է տեղեկություն ստանալու հարցումների վիճակագրության վարման, մշակման, ամփոփման և հանրայնացման **հետևյալ օրինակելի ձևանմուշը**, որին համապատասխան լրացված վիճակագրությունը յուրաքանչյուր տեղեկություն տնօրինող հրապարակելուց բացի պետք է ներկայացնի ՏԱ արտաքին գնահատում իրականացնող լիազոր մարմին (ՏԱ լիազոր մարմին, իսկ մինչև ՏԱ լիազոր մարմին ստեղծելը՝ անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմին):

Օրինակելի ձևանմուշ

20.. թվականի ընթացքում ստացված տեղեկությունն ստանալու հարցումների վիճակագրություն					
Գրավոր հարցումների ընդհանուր թիվը					
Բանավոր հարցումների ընդհանուր թիվը*					
	Ընդամենը*	Բավարարված	Մերժված***	Մասնակի մերժված****	Վերահասցե ագրված
ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑՈՒՄ					
Գրավոր հարցումների ընդհանուր թիվը					
Բանավոր հարցումների ընդհանուր թիվը*					

Մերժման հիմքը	Կիրառված հիմքի քանակը****
պետական, ծառայողական գաղտնիք*****	
բանկային գաղտնիք	
առևտրային գաղտնիք	
անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիք	
հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալներ	
հեղինակային իրավունքը և (կամ) հարակից իրավունքների պաշտպանություն	
բժշկական գաղտնիք *****	
նոտարական գաղտնիք	
փաստաբանական գաղտնիք	

*** Բանավոր հարցումը** պետք է ներկայացված լինի տեղեկություն փնտրելու և (կամ) դա ստանալու նպատակով, և դրան պատասխան տրվում է, եթե 1) պահանջվող տեղեկության տրամադրումը կարող է կանխել պետական, հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարբերին, այլոց իրավունքներին և ապատություններին, շրջակա միջավայրին, անձանց սեփականությանն սպառնացող վտանգը. 2) անհրաժեշտ է ճշտել տվյալ տեղեկություն տնօրինողի մոտ համապատասխան տեղեկության առկայության փաստը. 3) անհրաժեշտ է պարզաբանել տվյալ տեղեկություն տնօրինողի կողմից գրավոր հարցումների քննարկման կարգը:

**** Այս սյունակում լրացվող թիվը** պետք է համապատասխանի գրավոր հարցումների ընդհանուր թվին

***** Մերժում** են համարվում այն պատասխանները, որով տեղեկություն տնօրինողը օրինական հիմքով մերժում է տրամադրել իր տնօրինության տակ առկա տեղեկությունը՝ համաձայն ՏԱ մասին օրենքի 11 հոդվածի:

****** Մասնակի մերժում** են համարվում այն մերժված հարցումները^{****}, որոնցով տեղեկություն տնօրինողը օրինական հիմքով մերժում է տրամադրել ոչ թե պահանջվող ողջ տեղեկությունը, այլ դրա միայն մի մասը:

********* Մերժման յուրաքանչյուր հիմքին համապատասխանող սյունակում նշվում է այն թիվը, քանի անգամ որ կիրառվել է տվյալ մերժման հիմքը. հաշվի առնելով, որ տեսականորեն մի հարցմամբ կարող է պահանջվել տարբեր հիմքերով մերժման ենթակա մի քանի տեղեկություն՝ այս թիվը կարող է հավասար կամ ավելին լինել, քան մերժումների (ներառյալ՝ մասնակի մերժումների) թիվն է, սակայն չի կարող մերժումների (ներառյալ՝ մասնակի մերժումների) թվից պակաս լինել:

********* Այս հիմքը ներառում է նաև տեղեկություն տնօրինողի գործունեությունը կարգավորող օրենքով գաղտնիք համարվող տեղեկության մերժումները (երբ տեղեկություն տնօրինողի համար օրենքով սահմանված է աշխատանքային կամ ծառայողական պարտականությունները կատարելու ընթացքում ստացած կամ ձևավորած տվյալները գաղտնի պահելու պարտականություն):

********* **Օրենքներով կարող են սահմանված լինել բժշկական, նոտարական կամ փաստաբանական գաղտնիքներից բացի մասնագիտական գործունեությամբ** պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալների այլ դեպքեր: Օրենքներով նման այլ գաղտնիքի հիմքով տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում վիճակագրության վարման այս ձևանմուշում տեղեկություն տնօրինողը պետք է համապատասխան տող ավելացնի:

Տեղեկություն տնօրինողը վիճակագրություն վարելիս պետք է հստակորեն տարանջատի տեղեկություն ստանալու գրավոր կամ բանավոր հարցումները այլ դիմումներից, այդ թվում՝ թեժ գծերով կամ սոցիալական ցանցերով և նմանատիպ աղբյուրներով ստացված հարցումները նույն աղբյուրներով ստացված այլ տիպի հարցադրումներից, մեկնաբանություններից և խորհրդատվության խնդրանքներից,

ՏԱ հարցումների վիճակագրություն վարելը վերապահվում է ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձին (նրա կողմից ղեկավարվող ստորաբաժանմանը):

Տեղեկություն տնօրինողի կայքում տեղեկատվության ազատությանը վերաբերյալ առանձին բաժնում պետք է նախատեսվի ՏԱ հարցումների վիճակագրության ենթաբաժին և դրանում հարցումների վիճակագրության հրապարակման նկատմամբ հսկողությունը վերապահվի ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձին (նրա կողմից ղեկավարվող ստորաբաժանմանը),

ՏԱ հարցումների վիճակագրությունը տեղեկություն տնօրինողի կայքում համապատասխան բաժնում հրապարակվում է տարին առնվազն մեկ անգամ՝ ոչ ուշ, քան նախորդ տարվա հաշվետվության հրապարակման օրը: Եթե տեղեկություն տնօրինողը երբևէ հարցումների վիճակագրություն չի հրապարակել, ապա ՏԱ հարցումների վիճակագրությունը տեղեկություն

տնօրինողի կայքում համապատասխան բաժնում հրապարակվի վերաբերելի ժամանակահատվածից (առնվազն օրացուցային տարին ավարտվելուց) հետո 10-օրյա ժամկետում (տես՝ ՏԱ մասին օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ առնվազն տարին մեկ անգամ պարտադիր հրապարակման ենթակա տեղեկություններում կատարված փոփոխությունները հրապարակման ժամկետը):

Տեղեկություն տնօրինողի տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձը հարցումների վիճակագրությունը կազմում է՝ հավաստիանալով, որ պահպանված է ՏԱ մասին օրենքով և 1204-Ն որոշմամբ սահմանված՝ վիճակագրության բովանդակությանը ներկայացվող պահանջները:

Տեղեկություն տնօրինողի կողմից կազմվող ամենամյա վիճակագրությունը պետք է ներառի ստորև նշված տվյալները.

- վիճակագրությունը պարունակում է ստացված հարցումների ընդհանուր թիվը,
- վիճակագրությունը պարունակում է բանավոր հարցումների ընդհանուր թիվը,
- վիճակագրությունը պարունակում է գրավոր հարցումների ընդհանուր թիվը,
- վիճակագրությունը պարունակում է բավարարված գրավոր հարցումների թիվը,
- վիճակագրությունը պարունակում է մերժված (հաշվի առնելով հարցմամբ պահանջված տեղեկության մի մասի մերժման հնարավորությունը՝ նաև մասնակի մերժված) գրավոր հարցումների թիվը,
- վիճակագրությունը պարունակում է վերահասցեագրված գրավոր հարցումների թիվը,
- վիճակագրությունը պարունակում է մերժումների հիմքերը:

Տեղեկություն տնօրինողի ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձը հավաստիանում է, որ

- վիճակագրությունը հրապարակված է ժամանակին,
- վիճակագրությունը հրապարակված է տեղեկություն տնօրինողի կայքում՝ տեղեկատվության ազատությանը վերաբերելի բաժնում նախատեսված ՏԱ հարցումների վիճակագրության ենթաբաժնում,
- վիճակագրությունը հրապարակված է միասնական ձևաչափով, այնպես, ինչպես տեղեկություն տնօրինող այլ մարմիններում
- վիճակագրությունը հրապարակված է այնպիսի ձևաչափով, որ հնարավոր է այն պատճենել՝ առանց վիճակագրության ամբողջականության խաթարման:

ՏԱ հարցումների պատշաճ վիճակագրության աղբյուրների հավաստիությունը և պատշաճությունն ապահովելու համար տեղեկություն տնօրինողը պետք է առնվազն բացառի հարցումների վիճակագրության վարման համար անհրաժեշտ տվյալների ձևավորման ընթացքում մարդկային գործոնի (սխալի) ազդեցությունը՝ նախապատվությունը տալով անհրաժեշտ վիճակագրական տվյալների ձևավորման ավտոմատացված աղբյուրներին (օրինակ, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգին):

Տեղեկություն տնօրինողը պետք է փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգում նախատեսի հարցումների մուտքագրման և դրանց պատասխանների ելքի՝ պարտադիր լրացման ենթակա և միևնույն ժամանակ որոնման կամ արտահանման ենթակա այնպիսի չափանիշներ, որոնք համադրելի կլինեն հարցումների վիճակագրության վարման անհրաժեշտ օրենսդրությամբ սահմանված տվյալներին: Օրինակ,

- փաստաթղթաշրջանառության համակարգում տեղեկություն ստանալու հարցում մուտքագրելիս վերնագրում ներառում է «Չարցում» բառը,
- հարցման պատասխանը փոխկապակցում է մուտքագրված հարցմանը կամ վերնագրում ներառում է «Չարցման պատասխան» բառերը,
- տեղեկության տրամադրումը մերժելիս փաստաթղթաշրջանառության համակարգում հարցման պատասխանի վերնագրում ներառում է «Չարցման մերժում» բառերը,

- հարցումը վերահասցեագրելու դեպքում փաստաթղթաշրջանառության համակարգում հարցման պատասխանի վերնագրում ներառում է «Հարցման վերահասցեագրում» բառերը և այլն:

- Տեղեկություն տնօրինողը պետք է ունենա բանավոր հարցումների հաշվառման համակարգ, օրինակ՝ բանավոր հարցումների մուտքագրման հնարավորություն փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգում կամ համադրելի այլ համակարգում:

Գնահատման ամփոփ եզրահանգումները

7) *Տեղեկատվության ապատության ռեակտիվ ապահովումը*

Տեղեկություն տնօրինողները հիմնականում չեն պահպանում տեղեկություն ստանալու հարցումների քննարկման և դրանց պատասխանելու կանոնները (կարգը), ներառյալ՝ հարցումների պատասխաններին ներկայացվող պահանջները, այդ թվում.

- տրամադրված տեղեկությունները հաճախ ամբողջական չեն, թերի են, բացակայում են հարցմամբ պահանջված այս կամ այն տեղեկությունները,
- հարցմամբ դիմողը պատշաճ չի տեղեկացվում հարցման պատասխան հետաձգման հստակ պատճառների մասին,
- հարցման պատասխանի տրամադրումը հետաձգելիս չի նշվում պատասխանի տրամադրման վերջնաժամկետը կամ միանգամից հղում է արվում օրենքով սահմանված առավելագույն հնարավոր ժամկետին,
- հարցմամբ դիմողը պատշաճ չի տեղեկացվում տեղեկության տրամադրումը մերժելու հիմքերի մասին,
- խախտվում են հարցմանը պատասխանելու ժամկետները:

8) *Մերժման հիմքերը*

Տեղեկություն տնօրինողների կողմից տեղեկության տրամադրումը պատշաճ հիմքով մերժելու պարտականության կատարման պրակտիկան խիստ խնդրահարույց է: Տեղեկությունների տրամադրումը մերժելու հիմքում որոշ դեպքերում դրվում է օրենքով չսահմանված, օրենքից չբխող մերժման հիմք, այդ թվում.

- տեղեկության տրամադրումը մերժվում է ՏԱ մասին օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով չսահմանված, ՏԱ մասին օրենքից չբխող հիմքով,
- խնդրահարույց է անձնական տվյալների պաշտպանության հիմքի չարաշահումը. տեղեկություն տնօրինողների կողմից անձնական տվյալները սխալմամբ նույնացվում են գաղտնիքի հետ և պահանջված տեղեկության՝ անձնական տվյալ ներկայացնում իբրև տեղեկության տրամադրումը մերժելու հիմք: Նկատենք, որ անձնական տվյալների պաշտպանությունը որպես տեղեկության տրամադրումը մերժելու հիմք ավելի շատ է վկայակոչվել, քան օրենքով նախատեսված՝ պետական կամ ծառայողական գաղտնիքի պաշտպանության հիմքը,
- Չեն պահպանվում մերժումը տրամադրելու օրենքով սահմանված կարգը և ժամկետները:

9) *Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակը*

Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակը տեղեկատվության ազատության իրավունքի ապահովման կարևոր գործիք է: Այդուհանդերձ, թեև Էլեկտրոնային եղանակով, այդ թվում՝ հարթակով ներկայացվող հարցումների քանակը տարեցտարի ավելանում է, սակայն, մի կողմից օրենսդրությամբ ամբողջական կարգավորված չլինելու, մյուս կողմից իրազեկության պակասի և տեխնիկական որոշակի խնդիրների պայմաններում հարթակը չի կիրառվում իր ողջ ներուժով: Այդ թվում.

- հարթակում ներկայացված չեն տեղեկություն տնօրինող բոլոր մարմինները, այնինչ անհրաժեշտ է, որ հարթակով հնարավոր լինի հարցումներ ուղարկել տեղեկություն տնօրինող բոլոր մարմիններին,
- հարթակում առկա են տեխնիկական կամ մարդկային միջամտության հնարավորությամբ պայմանավորված թերություններ,
- առկա է հանրային իրազեկման պակաս: Թև հարթակը գործում է ավելի քան երեք տարի, քաղաքացիների կողմից դրա օգտագործման մակարդակը ցածր է,
- հարթակում առկա չէ տեղեկություն դրա կիրառումն առավել հարմարավետ դարձնելու վերաբերյալ,
- առկա են հարցում/դիմում/բողոք ուղարկելու դժվարություններ (հարթակի էլ. ստորագրության պահանջը, տեխնիկական խնդիրների պատճառով չուղարկելը),
- հարթակի վիճակագրության բաժինը պարզ ու հասկանալի չէ այցելուի համար, հարթակում պատշաճ վիճակագրություն չի վարվում և չի թարմացվում:

10) Տեղեկատվության ապատության պրոակտիվ ապահովումը

Տեղեկության ազատության պրոակտիվ ապահովման որոշ խնդիրներ կապված են ոչ միայն օրենքով սահմանված պարտականությունների չիմացության հետ, այլև նաև տեղեկություն տնօրինողների կայքերում տեղեկությունների հրապարակման, համակարգման, կազմակերպման, թարմացման մեխանիզմների և ընթացակարգերի բացակայության հետ:

Ընդ որում, խոսքը ոչ թե կայքերին ներկայացվող միասնական պահանջների բացակայության, այլ կայքերի վարման պրակտիկ հմտությունների և աշխատանքի կազմակերպման հմտությունների բացակայության մասին է:

Տեղեկություն տնօրինողները, որոշ եզակի բացառություններով, պատշաճ չեն կատարում ՏԱ մասին օրենքի 7-րդ հոդվածով սահմանված՝ նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված տեղեկությունները պաշտոնական կայքերում պարտադիր հրապարակելու իրենց պարտականությունը:

- հրապարակված տեղեկություններն ամբողջական չեն: Ընդ որում, ոչ միայն հրապարակված չէ ՏԱ մասին օրենքով սահմանված այս կամ այն տեղեկությունը, այլև նաև հրապարակված տեղեկությունները չեն պարունակում օրենքով նախատեսված բոլոր տվյալները,
- հրապարակված տեղեկությունները թարմացված չեն. անտեսվում է պարտադիր հրապարակման ենթակա տեղեկություններում կատարված փոփոխությունները դրանք կատարվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում հրապարակելու պահանջը:
- հրապարակված տեղեկությունները որոշ դեպքերում դժվար է գտնելը պարզ որոնման միջոցով,
- հրապարակված տեղեկությունները համակարգված չեն,
- հրապարակված տեղեկությունը ներկայացված է տարբեր ձևաչափերով, պիտանի չէ համեմատական վերլուծություններ իրականացնելու համար, թեև գերազանցապես ներբեռնելի է, սակայն հաճախ բովանդակությունը պատճենելի չէ կամ հնարավոր չէ բովանդակությունում որոնում կատարել,
- տեղեկություն տնօրինողները պատրաստ չեն կայքերի տեխնիկական խափանումներին, տեխնիկական խնդիրները տևական ժամանակ երկարատև լուծում չեն ստանում:
- Պաշտոնական կայքերը չունեն բովանդակային, կառուցվածքային և ոճային միասնականություն: Դրանց ստեղծման և մշակման ընդհանուր միասնական և արդիական ձևաչափ առկա չէ:
- Պետական կառավարման մարմինների պաշտոնական կայքերի դոմեյնների անվանումները նույնպես միասնական կամ նույն տրամաբանությամբ ու մոտեցմամբ չեն մշակված: Պետական կառավարման մակարդակում միայն մարզպետարանների կայքերն ունեն որոշակի ստանդարտ ձևաչափ, միասնական կառուցվածք և վեբ դիզայն:

- Պաշտոնական կայքերում հրապարակված փաստաթղթերը չեն համապատասխանում բաց տվյալներ ձևաչափին: Այս պատճառով դժվարանում կամ անհնարին է դառնում տարբեր փաստաթղթերի համադրումը, վերլուծումը, դրանցում առկա տեղեկատվության հետ աշխատանքը:
- Պաշտոնական կայքերը լիարժեք հասանելի և մատչելի չեն տեսողական խնդիրներ ունեցողների համար:

11) *ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձի ինստիտուտը*

Տեղեկություն տնօրինողները որպես կանոն նշանակել են ՏԱ համար պատասխանատու պաշտոնյաներ, ովքեր, սակայն, հիմնականում չունեն ՏԱ ոլորտում իրենց պարտականությունների կատարման համար անհրաժեշտ բարենպաստ պայմաններ, տեխնիկական և կազմակերպչական գործիքներ, ինչպես նաև ՏԱ ոլորտի վերաբերյալ բավարար մակարդակի գիտելիք:

ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձի գործառույթների իրականացման համատեքստում խնդրահարույց է ներքին համակարգման պակասը, ինչպես նաև կառույցի ներսում այս պաշտոնատար անձի կարգավիճակի հարցը:

ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձանց գիտելիքը ՏԱ ոլորտում բավարար մակարդակի չէ, չեն իրականացվում պարբերաբար վերապատրաստումներ նրանց գիտելիքը և հմտությունները ՏԱ ոլորտում թարմացնելու և ամբողջացնելու համար:

12) *ՏԱ վիճակագրության վարման և հրապարակման պարտականության կատարումը*

Տեղեկություն տնօրինողները հիմնականում չեն պահպանում տեղեկություն ստանալու հարցումների վիճակագրության վարման օրենսդրությամբ սահմանված միասնական կանոնները և չեն հրապարակում տվյալների ամբողջական շրջանակը՝ մեկ միասնական ձևաչափով:

Առկա չէ հարցումների վիճակագրության վարման միասնական մոտեցում՝ տեղեկություն տնօրինողները ՏԱ վիճակագրությունը վարում և հրապարակում են տարբեր ձևաչափերով, ինչը հնարավորություն չի տալիս համադրել տարբեր տեղեկություն տնօրինողների ՏԱ վիճակագրությունները՝ ընդհանուր պատկեր ստանալու համար:

ՏԱ հարցումների վիճակագրություն վարելը որոշ դեպքերում վերապահված չէ ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձին (նրա կողմից ղեկավարվող ստորաբաժանմանը): Տեղեկություն տնօրինողի կայքում տեղեկատվության ազատությանը վերաբերյալ առանձին բաժնում չի հրապարակվում ամենամյա վիճակագրությունը:

Տեղեկություն տնօրինողները չունեն հարցումների վիճակագրության ձևավորման համար անհրաժեշտ տվյալները ստանալու այնպիսի աղբյուր, որն ինքնին կերաշխավորեր վիճակագրության ամբողջականությունը և հավաստիությունը:

Միաժամանակ, ՏԱ պետական լիազոր մարմնի բացակայության պայմաններում Հայաստանում չի վարվում և հրապարակվում տեղեկատվության ազատության միասնական և ամբողջական վիճակագրություն: Լիազոր մարմնի բացակայությունը նաև հանգեցնում է գործընթացի նկատմամբ վերահսկողության բացակայության: Լիազոր մարմնի դերը պետք է լինի նաև միասնական վիճակագրության վարման պրակտիկայի ձևավորումը խթանող մեկնաբանություններ և փափուկ կարգավորումներ մշակելը և տեղեկություն տնօրինողներին վիճակագրություն վարելու հմտություններ փոխանցելը:

13) *ՏԱ լիազոր մարմինը*

Առայսօր Հայաստանում չի ձևավորվել տեղեկատվության ազատության պետական լիազոր մարմին: Ուստի, տեղեկություն տնօրինողների կողմից վիճակագրության վարման և հրապարակման պատշաճության նկատմամբ պետական հսկողությունն ըստ էության

բացակայում է, ինչպես նաև առկա չէ օրենսդրությամբ սահմանված՝ ՏԱ ընդհանուր վիճակագրության հրապարակման պարտականություն:

ՏԱ պետական լիազոր մարմնի բացակայության պայմաններում Հայաստանում տեղեկություն ստանալու իրավունքի խախտումները արտադատական քննության չեն ենթարկվում սեղմ ժամկետներում: Չի վարվում և հրապարակվում տեղեկատվության ազատության միասնական և ամբողջական վիճակագրություն: Չի իրականացվում նաև գործընթացի միասնական մշտադիտարկում:

Առաջարկություններ և խորհրդատվականներ

Հետազոտության այս բաժնում ներկայացված են գնահատման եզրահանգումներից բխող առաջարկներ և խորհրդատվականներ ուղղված քաղաքականություն մշակողներին:

7) **ՏԱ լիազոր մարմնի ստեղծում. ՏԱ հանձնակատարի ինստիտուտը**

Տեղեկատվության ազատության պաշտպանությունը և այս իրավունքի կիրառման դրական պրակտիկայի զարգացման երաշխիքը իրավունքի իրացման նկատմամբ պետական հոգածությունն է: Տեղեկատվության ազատության ապահովման նպատակով **անհրաժեշտ է ստեղծել ՏԱ լիազոր մարմին**, որը ՏԱ սկզբունքների, ՏԱ օրենսդրության, ինչպես նաև ՏԱ իրավունքի կիրառման պրակտիկայի վերլուծությունների հիման վրա կիրականացնի ՏԱ պաշտպանությունը, այդ թվում նաև՝ ՏԱ վիճակի գնահատումը և ՏԱ իրավունքի զարգացման ապահովումը:

ՏԱ լիազոր մարմնի անկախության ապահովման համար պետք է սահմանվեն անկախության երաշխիքներ (նշանակման/ընտրության մեխանիզմներ, ֆինանսական անկախություն):

Խնդրահարուց կլինի ՏԱ լիազոր մարմնի ներառումը պետական կառավարման մարմնի կազմում: Դա կհակասի միջազգային լավագույն փորձին և էականորեն կխաթարի ՏԱ հանձնակատարի ինստիտուտի անկախությունը և արդյունավետությունը: Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն՝ այն անձը, ում պաշտոնական տեղեկություններ ստանալու հարցումը մերժվել է, մերժումը դատական կարգով կամ **այլ անկախ և անաչառ պետական մարմնի** բողոքարկելու իրավունք ունի:

Հաշվի առնելով միջազգային լավագույն փորձը, ինչպես նաև այն, որ այժմ քննարկվում են սահմանադրական բարեփոխումները՝⁵³ գտնում ենք, որ ՏԱ լիազոր մարմնի/ՏԱ հանձնակատարի ինստիտուտի ներդրման համար լավագույն տարբերակը **ՀՀ սահմանադրությամբ տեղեկատվության ազատության և անձնական տվյալների պաշտպանության մեկ միասնական անկախ լիազոր մարմնի ստեղծումն է:**

- *Առաջարկում ենք նախաձեռնել ՏԱ լիազոր մարմնի (տեղեկատվության պաշտպանության և անձնական տվյալների պաշտպանության հանձնակատարի) սահմանադրական ինստիտուտի ստեղծումը, առնվազն ապահովելով այդ մարմնին ունենա անկախության իրական երաշխիքներ և*
- *իրականացնի ՏԱ պաշտպանություն և այս ոլորտում վեճերի արտադատական լուծում: ՏԱ լիազոր մարմինը պետք է կարողանա ընդունել և քննել ՏԱ իրավունքի խախտման վերաբերյալ բողոքներ, ինչը տեղեկություն տնօրինողներում ՏԱ վիճակի գնահատման համար անհրաժեշտ տեղեկությունների լրացուցիչ աղբյուր է,*
- *ՏԱ լիազոր մարմինը պետք է իրականացնի ՏԱ պրակտիկայի վերլուծություն և մշտադիտարկում, ինչպես նաև լավագույն փորձի ներդրում,*
- *ապահովի ՏԱ իրավունքի իրացման վերաբերյալ խորհրդատվություն և իրապետում ինչպես քաղաքացիների, այնպես էլ տեղեկություն տնօրինող մարմինների համար,*
- *ՏԱ լիազոր մարմինը պետք է կարողանա սեփական նախաձեռնությամբ իրականացնել ստուգումներ, որոնց արդյունքում ստացված տվյալները տեղեկություն տնօրինողներում ՏԱ վիճակի գնահատման համար անհրաժեշտ տեղեկությունների լրացուցիչ աղբյուր է,*
- *ՏԱ լիազոր մարմինը պետք է ապահովի ՏԱ ոլորտի օրենսդրության պարզաբանում,*
- *ՏԱ լիազոր մարմինը պետք է հավաքագրի և հրապարակի ՏԱ իրավունքի կիրառման պրակտիկայի մասին տեղեկություններ և երկրում ՏԱ իրավիճակը գնահատող տարեկան զեկույց,*

⁵³Տես՝ Հանրային հարցում՝ Սահմանադրական բարեփոխումների շուրջ, 2022, <https://www.moj.am/article/3089>

ինչպես նաև ներկայացնի ՏԱ հարցումների և որոշումների վիճակագրական միասնական տվյալները:

- ՏԱ լիապոր մարմնի դերը պետք է լինի նաև միասնական վիճակագրության վարման պրակտիկայի ձևավորումը խթանող մեկնաբանություններ և փափուկ կարգավորումներ մշակելը և տեղեկություն տնօրինողներին վիճակագրություն վարելու հմտություններ փոխանցելը:

8) Տեղեկություն տնօրինողներում ՏԱ վերաբերյալ գիտելիքի պակասը

Գնահատման եզրահանգումներից բխում է, որ հաճախ տեղեկության տրամադրումը պատշաճ հիմքերով մերժելու կամ տեղեկության ազատության պրոակտիվ ապահովման հետ կապված խնդիրների հիմնական պատճառներից է օրենքով սահմանված պարտականությունների չիմացությունը և անհրաժեշտ գիտելիքի ու հմտությունների պակասը:

- գտնում ենք, որ պետք է առանձին ուշադրություն դարձվի տեղեկություն տնօրինողների իրավասու պաշտոնյաների ՏԱ վերաբերյալ գիտելիքի մակարդակի բարձրացմանը, կրթությանը, տեղեկատվության ապատության և անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ ուսուցումների և վերապատրաստումների իրականացմանը. պետությունը պետք է հնարավոր բոլոր միջոցները ձեռնարկի ՏԱ ոլորտում տեղեկություն տնօրինողների իրավասու պաշտոնյաների մասնագիտական գիտելիքի և պրակտիկ հմտությունների կատարելագործման ուղղությամբ,
- առաջարկում ենք, որ անձնական տվյալների պաշտպանության լիապոր մարմնին մինչև ՏԱ լիապոր մարմնի ստեղծումը ստանձնել տեղեկություն տնօրինողներին անձնական տվյալների պաշտպանության ոլորտից բացի նաև ՏԱ ոլորտում խորհրդատվություն տրամադրելու հանձնառություն:

9) ՏԱ վիճակագրության վարման և հրապարակման պարտականության ապահովումը և հսկողությունը

Միջազգային լավագույն փորձը ⁵⁴ վկայում է, որ ՏԱ վիճակագրության վարման և հրապարակման պարտականության կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ՏԱ հանձնակատարը՝ ստուգելով՝ արդյոք տեղեկություն տնօրինողները սահմանված կարգով, ձևաչափով և ժամկետներում կազմել և հրապարակել են տեղեկատվության ազատության մասին ամենամյա հաշվետվություններ և վիճակագրական տվյալներ, միաժամանակ կազմելով ու հրապարակելով ՏԱ ընդհանուր վիճակագրություն:

- անձնական տվյալների պաշտպանության լիապոր մարմնին առաջարկում ենք մինչև ՏԱ լիապոր մարմնի ստեղծումը **ՏԱ գնահատման իրականացման շրջանակներում ստանձնել տեղեկություն տնօրինողների կողմից ՏԱ վիճակագրության վարման և հրապարակման պարտականության կատարման նկատմամբ վերահսկողությունը**
- անձնական տվյալների պաշտպանության լիապոր մարմնին առաջարկում ենք մինչև ՏԱ լիապոր մարմնի ստեղծումը ստանձնել ՏԱ ընդհանուր վիճակագրության վարման և հրապարակման հանձնառություն:

10) ՏԱ վիճակագրության վարման և հրապարակման պարտականության կատարումը

- գտնում ենք, որ տեղեկություն տնօրինողները պետք է օրենքով սահմանված վիճակագրական տվյալները հրապարակեն իրենց պաշտոնական կայքերում՝ ներառելով տվյալների ողջ ծավալը:
- Տեղեկություն տնօրինողները պետք է հստակորեն տարանջատեն տեղեկություն ստանալու գրավոր կամ բանավոր հարցումները այլ դիմումներից, այդ թվում՝ թեժ գծերով կամ սոցիալական ցանցերով և նմանատիպ աղբյուրներով ստացված հարցումները նույն աղբյուրներով

⁵⁴Տես՝ Տեղեկատվության ազատություն ազգային վիճակագրության որակի և մեթոդաբանության վերաբերյալ Միացյալ Թագավորության տեղեկատվությունը՝ <https://bit.ly/2xZ1yFs> կամ Միացյալ Թագավորության կենտրոնական պետական մարմիններում ՏԱ վիճակագրությունը, 2018թ, <https://bit.ly/2Z2FRzn>:

ստացված այլ տիպի հարցադրումներից, մեկնաբանություններից և խորհրդատվության խնդրանքներից,

- ՏԱ հարցումների վիճակագրությունն վարելը վերապահվում է ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձին (նրա կողմից ղեկավարվող ստորաբաժանմանը),
- Տեղեկություն տնօրինողի կայքում տեղեկատվության ազատությանը վերաբերյալ առանձին բաժնում պետք է նախատեսվի ՏԱ հարցումների վիճակագրության ենթաբաժին և դրանում հարցումների վիճակագրության հրապարակման նկատմամբ վերահսկողությունը վերապահվի ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձին (նրա կողմից ղեկավարվող ստորաբաժանմանը),
- ՏԱ հարցումների վիճակագրությունը տեղեկություն տնօրինողի կայքում համապատասխան բաժնում պետք է հրապարակվի տարին առնվազն մեկ անգամ՝ ոչ ուշ, քան նախորդ տարվա հաշվետվության հրապարակման օրը:
- Տեղեկություն տնօրինողի տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձը հարցումների վիճակագրությունը պետք է կազմի՝ հավաստիանալով, որ պահպանված է ՏԱ մասին օրենքով և 1204-Ն որոշմամբ սահմանված՝ վիճակագրության բովանդակությանը ներկայացվող պահանջները, այդ թվում՝
 - վիճակագրությունը պարունակում է ստացված հարցումների ընդհանուր թիվը,
 - վիճակագրությունը պարունակում է բանավոր հարցումների ընդհանուր թիվը,
 - վիճակագրությունը պարունակում է գրավոր հարցումների ընդհանուր թիվը,
 - վիճակագրությունը պարունակում է բավարարված գրավոր հարցումների թիվը,
 - վիճակագրությունը պարունակում է մերժված (հաշվի առնելով հարցմամբ պահանջված տեղեկության մի մասի մերժման հնարավորությունը՝ նաև մասնակի մերժված) գրավոր հարցումների թիվը,
 - վիճակագրությունը պարունակում է վերահասցեագրված գրավոր հարցումների թիվը,
 - վիճակագրությունը պարունակում է մերժումների հիմքերը:
- Տեղեկություն տնօրինողի ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձը պետք է հավաստիանա, որ
 - վիճակագրությունը հրապարակված է ժամանակին,
 - վիճակագրությունը հրապարակված է տեղեկություն տնօրինողի կայքում տեղեկատվության ազատությանը վերաբերելի բաժնում նախատեսված ՏԱ հարցումների վիճակագրության ենթաբաժնում,
 - վիճակագրությունը հրապարակված է միասնական ձևաչափով, այնպես, ինչպես տեղեկություն տնօրինող այլ մարմիններում
 - վիճակագրությունը հրապարակված է այնպիսի ձևաչափով, որ հնարավոր է այն պատճենել՝ առանց վիճակագրության ամբողջականության խաթարման:

11) *Տեղեկություն ստանալու հարցումների պաշտոնական վիճակագրության ձևավորման աղբյուրները*

- ՏԱ հարցումների պատշաճ վիճակագրության աղբյուրների հավաստիությունը և պատշաճությունն ապահովելու համար տեղեկություն տնօրինողը պետք է առնվազն բացառի հարցումների վիճակագրության վարման համար անհրաժեշտ տվյալների ձևավորման ընթացքում մարդկային գործոնի (սխալի) ազդեցությունը՝ նախապատվությունը տալով անհրաժեշտ վիճակագրական տվյալների ձևավորման ավտոմատացված աղբյուրներին (օրինակ, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգին),
- Տեղեկություն տնօրինողը պետք է փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգում նախատեսի հարցումների մուտքագրման և դրանց պատասխանների ելքի՝ պարտադիր լրացման ենթակա և միևնույն ժամանակ որոնման կամ արտահանման ենթակա այնպիսի չափանիշներ, որոնք համադրելի կլինեն հարցումների վիճակագրության վարման անհրաժեշտ օրենսդրությամբ սահմանված տվյալներին: Օրինակ,

- փաստաթղթաշրջանառության համակարգում տեղեկություն ստանալու հարցում մուտքագրելիս վերնագրում ներառում է «Հարցում» բառը,
- հարցման պատասխանը փոխկապակցում է մուտքագրված հարցմանը կամ վերնագրում ներառում է «Հարցման պատասխան» բառերը,
- տեղեկության տրամադրումը մերժելիս փաստաթղթաշրջանառության համակարգում հարցման պատասխանի վերնագրում ներառում է «Հարցման մերժում» բառերը,
- հարցումը վերահասցեագրելու դեպքում փաստաթղթաշրջանառության համակարգում հարցման պատասխանի վերնագրում ներառում է «Հարցման վերահասցեագրում» բառերը և այլն:
- Տեղեկություն տնօրինողը պետք է ունենա բանավոր հարցումների հաշվառման համակարգ, օրինակ՝ բանավոր հարցումների մուտքագրման հնարավորություն փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգում կամ համադրելի այլ համակարգում:
- **առաջարկում ենք սույն հետազոտության շրջանակում մշակված օրինակելի ձևանմուշն օգտագործել միասնական ձևաչափով տվյալներ մշակելու նպատակով:**

12) Տեղեկատվության ապատության ռեակտիվ ապահովումը. ՏԱ հարցումներին պատասխանելու պրակտիկան

Անհրաժեշտ է, որ տեղեկություն տնօրինող մարմինները գնահատեն իրենց կողմից ՏԱ օրենսդրության պահանջների կատարման պատշաճությունը, ձեռնամուխ լինեն արձանագրված խնդիրների վերացմանը՝ ձգտելով տեղեկատվության ազատության ապահովման պրակտիկան համապատասխանեցնել օրենսդրությանը՝ ներառյալ միջազգային լավագույն փորձին:

- ՏԱ ռեակտիվ կողմի լիարժեք ապահովման նպատակով առաջարկում ենք ներդնել տեղեկություն տնօրինողների ինքնազննարկման համակարգ սույն հետազոտման մեջ ներկայացված մեթոդաբանության և չափանիշների հիման վրա: Ինքնազննարկման համակարգի կիրառումը թույլ կտա տեղեկություն տնօրինողներին իրականացնել իրենց պրակտիկայի պարբերական վերանայում, խնդիրների վեր հանում և կանխարգելում, ինչպես նաև պրակտիկայի բարելավում:
- Ինքնազննարկման համակարգի ներդրմանը զուգահեռ անհրաժեշտ է, որ տեղեկություն տնօրինողները պատշաճ ու լիարժեք կատարեն հարցումներին ընթացք տալու՝ օրենսդրությամբ սահմանված իրենց բոլոր պարտականությունները:

13) Տեղեկատվության ապատության պրոակտիվ ապահովումը

• **Որպես պրոակտիվ հրապարակայնության առաջընթացի և վարձացման առաջնային լուծում անհրաժեշտ ենք համարում անցում կատարել պաշտոնական ռեսուրսների կառավարման կենտրոնացված մոդելի:** Պետական կառավարման մարմինների պաշտոնական կայքերը պետք է ինտեգրվեն gov.am ռեսուրսում: Քաղաքացին չպետք է տասնյակ պաշտոնական կայքերում դեգերի՝ մինչև կգտնի իրեն անհրաժեշտ տեղեկատվությունը կամ թվային ծառայությունը: Մեկ միասնական պաշտոնական վեբ ռեսուրսի առկայությունը կհեշտացնի ու արդյունավետ կդարձնի քաղաքացու որոնման գործընթացը: gov.am-ը կդառնա կառավարության և պետական կառավարման մյուս բոլոր մարմինների բոլոր թվային ծառայությունների և տվյալների միասնական միջավայրը:

- **Անհրաժեշտ է ներդնել պաշտոնական կայքերի ստեղծման և մշակման միասնական և արդիական ստանդարտ:**

Պաշտոնական կայքերի կառուցվածքի և ձևավորման միասնականությունը հեշտացնում է քաղաքացու կողմից տեղեկատվության փնտրումը, արդյունավետ դարձնում քաղաքացի-կառավարություն առցանց շփումը:

- **Անհրաժեշտ է ներդնել պաշտոնական կայքերի գնահատման համակարգ**

Կայքերի գնահատման միասնական մոդելի և գործիքների ներդրումն անհրաժեշտություն է: Պետք է կայքերի գնահատումը դարձնել մշտական գործընթաց՝ ներդնելով պաշտոնական վեբ ռեսուրսների գնահատման միասնական մոդել և գործիքակազմ (Measuring Performance) և ապահովել ոլորտում մրցակցային պայմաններ պետական մարմինների համար:

Կայքերի կիրառելիության գնահատումը մշտական գործընթաց դարձնելը պաշտոնական վեբ ռեսուրսների համալիր բարեփոխումների հնարավորություն կստեղծի: Այն նաև հիմք կծառայի պաշտոնական կայքերի վարգացման ռազմավարություն մշակելու և նորարարական գործիքներ ստեղծելու համար, ինչը պաշտոնական տեղեկատվության կառավարումն ավելի արդյունավետ և օգտակար կդարձնի և՛ քաղաքացու, և՛ կառավարության համար:

- Պաշտոնական կայքերում պետք է հնարավորինս սեղմ ժամկետում հրապարակվեն օրենքով սահմանված պարտադիր հրապարակման ենթակա բոլոր փաստաթղթերը և տեղեկությունները՝ լիարժեքության, ամբողջականության, արդիականության, մատչելիության սկզբունքներին համապատասխան: Այնուհետև, պետք է ապահովել դրանց ժամանակին թարմացումը (օրինակ, մարմնի կողմից գաղտնապահված փաստաթղթերը, դրամաշնորհների վերաբերյալ փաստաթղթերը):

- Կայքերում հրապարակվող տեղեկատվությունը պետք է լինի բաց տվյալների ձևաչափով, և սա պետք է դառնա հրապարակման պարտադիր չափանիշ: **Յրապարակված տվյալները պետք է լինեն մեքենայարնթեռնելի, անվճար, հասանելի ապատորեն օգտագործման և վերաօգտագործման համար՝ առանց վերահսկման որևէ մեխանիզմի կամ սահմանափակման:**

- **Պաշտոնական կայքերը պետք է մատչելի լինեն հատուկ կարիքներ ունեցողների համար:** Անհրաժեշտ է իրականացնել կայքերի տեխնիկական վերապինում, որպեսզի հնարավորինս հաշվի առնվեն տեղեկություն ստացողների հատուկ կարիքները:

- անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնին առաջարկում ենք մինչև [SU լիազոր մարմնի ստեղծումը](#) [SU գնահատման](#) իրականացման շրջանակներում առնվազն տեղեկատվության ապատության իրավունքին վերաբերելի մասով ստանձնել տեղեկություն տնօրինողների պաշտոնական կայքերի բովանդակության ճշգրտության, թարմացվածության և մատչելիության մշտադիտարկման հանձնառություն:

14) **Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակը**

Համադրելով միջազգային փորձը գնահատումից բխող եզրահանգումների հետ՝ հնարավոր է պնդել, որ Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի պատշաճ աշխատանք ապահովելու, այն որպես [SU](#) իրավունքի իրացման առավել արդյունավետ գործիք կիրառելու համար անհրաժեշտ է Էականորեն բարելավել Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակը:

- առավել մանրամասն և հստակ սահմանել (օրինակ՝ 1204-Ն որոշմամբ) Էլեկտրոնային միասնական հարթակի կիրառումը, մասնավորապես, դրանում տեղեկություն տնօրինողների ներկայացվածության պարտադիրությունը,

- հարթակում ներառել [SU](#) վերաբերյալ խորհրդատվություն՝ օրինակ, հարցման քննարկման՝ օրենսդրությամբ սահմանված բոլոր կարգերը, այդ թվում՝ միջանկյալ պատասխանի, մերժման, մասնակի մերժման, վերահասցեագրման առանձնահատկությունները,

- հարթակը կատարելագործել՝ դրանում ներառելով [SU](#) ոլորտի հնարավոր բոլոր գործիքները, օրինակ, հարթակը կարող է ներառել տեղեկություն տնօրինողների կողմից ինքնագնահատման իրականացման Էլեկտրոնային համապատասխան գործիքը,

- նվազագույնի հասցնել կամ բացառել հարթակի տարբեր գործիքների կիրառման հիմքում մարդկային գործոնի և հայեցողական որոշումների կայացման հնարավորությունները,

- ապահովել հարթակի բոլոր բաժինների պատշաճ աշխատանքը, ներառյալ՝ դրա գործիքները պարբերաբար թարմացնելու և կատարելագործելու միջոցով⁵⁵,
- ապահովել հարթակում առկա խնդիրների վերաբերյալ ահապանագրերի և դրանց լուծմանն ուղղված առաջարկությունների պարտադիր քննարկում⁵⁶:
- հնարավորինս հաշվի առնել տեղեկություն հավանական ստացողների հատուկ կարիքները էլեկտրոնային հարցումների միասնական հարթակում:

Հավելվածներ

Հավելված 1 - Տեղեկություն տնօրինողի կողմից տեղեկատվության ազատության ինքնազնահատման ուղեցույց

Հավելված 2 - Տեղեկություն տնօրինողի կողմից տեղեկատվության ազատության վիճակի ինքնազնահատման հարցաշար/չափանիշներ

Հավելված 3 - Տեղեկություն տնօրինողների ցանկը, որոնց շրջանակում իրականացվել է գնահատումը

Հավելված 4 - Գնահատման շրջանակներում տեղեկություն տնօրինողներին ներկայացված հարցումները

Հավելված 5 - Մերժման հիմքերի վերաբերյալ հարցումների պատասխանները՝ ըստ տեղեկություն տնօրինողների

Հավելված 6 - մերժող վարման մասին տվյալները՝ ըստ տեղեկություն տնօրինողների
 Հավելված 7- Հարցումների պատասխանները՝ ըստ տեղեկություն տնօրինողների

⁵⁵Օրինակ, Էստոնիայի տեղեկատվական անցուղու կայքը ամբողջությամբ թարմացվել է 2022 թվականի հունվարի 31-ին, տես՝ նոր կայքը՝ <https://www.eesti.ee/en/> և հին կայքը՝ <https://www.eesti.ee/eng/services>

⁵⁶ Տես, Ինֆորմացիայի ազատության կենտրոնի Պետական ծառայությունների մատուցման միասնական գրասենյակներից մատուցվող ծառայություններին www.e-request.am ու www.e-draft.am հարթակների կիրառման մոնիթորինգի արդյունքներում ներկայացված առաջարկությունները, 2019, http://www.foi.am/u_files/file/subgrants/Monitoring_AKh.pdf